

ԿԱՐԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ
ԿԱՐԻՆԵ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

50

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

ՏԱՐԲԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՄԱՍ 1



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Երևան
2013

ՀՏԴ 372.8

ԳՄԴ 74.26

Թ 822

ԹՈՐՈՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ, ՉԻԲՈՒԽՉՅԱՆ ԿԱՐԻՆԵ

Թ 882 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար, Մաս 1/ Կարինե Թորոսյան, Կարինե Չիբուխյան.— Եր.: Զանգակ, 2013.— 128 էջ:

Գրքում հարց ու պատասխանի ձևով շարադրված են կրթական գործընթացի կատարելագործման վերաբերյալ կոնկրետ հանձնարարականներ ու մեթոդական խորհուրդներ, որի նպատակն է օգնել ուսուցչին գտնելու իրեն հուզող հարցերի պատասխանները, ինչպես նաև օգտակար լինել մասնագիտական պատրաստվածության բարձրացման հարցում:

Նախատեսված է տարրական դասարանների ուսուցիչների, հանրակրթական դպրոցների ուսմասվարների, մեթոդավիճակորման նախագահների, նաև մանկավարժական բուհերի համապատասխան մասնագիտություններ ընտրած ուսանողների, հայցորդների և դպրոցի կյանքով հետաքրքրվող անձանց համար:

ՀՏԴ 372.8

ԳՄԴ 74.26

ISBN 978-9939-68-160-3

© Թորոսյան Կարինե, Չիբուխյան Կարինե, 2013

© «Զանգակ-97» ՍՊԸ, 2013

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարիներ շարունակ ուսուցիչներն առաջադրել են բազմաթիվ հարցեր, որոնց պատասխանները տրվել են առանձին խորհրդատվությունների ժամանակ կամ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին: Հեղինակներն առավել քան համոզված են, որ, այդուհանդերձ, ուսուցիչներին մտահոգող հարցերը սպառվել չեն կարող: Բնականաբար, ծնվեց ուսուցչի ձեռնարկ ստեղծելու գաղափարը՝ ներկայացված հարցերի պատասխանները բոլորին հասցեագրելու միտումով: Համոզված ենք՝ ձեռնարկի երկրորդ մասի հրատարակության առիթով ուսուցիչներն ավելի ակտիվ կլինեն և իրենց հետաքրքրող հարցերը կուղարկեն Կրթության ազգային ինստիտուտի էլեկտրոնային փոստի հասցեով: Դրանով նրանք կօգնեն հեղինակներին ավելի մոտենալու իրենց հետաքրքրող խնդիրներին, ինչը ձեռնարկը կդարձնի ավելի գործնական և օգտակար:

Ձեռնարկը բաղկացած է հինգ բաժնից՝ հինգ թեմատիկ խմբերից, որոնց ընտրությունը պայմանավորված է մեզ հասցեագրված հարցերի դասակարգումով: Հեղինակները հակված չեն կարծելու, թե այդ հարցերի պատասխանները սպառիչ են կամ ավելին՝ պարտադրելի են: Ձեռնարկում ընդգրկված հարցերի պատասխանները կօգնեն ձեզ ճիշտ կողմնորոշվելու ժամանակակից դասին ներկայացվող պահանջների հարցում և դրանք ստեղծագործաբար ներդնելու աշխատանքային գործընթացում: Ներկայացված նյութերից շատերը նորույթ են պարունակում, հետևաբար, դրանք ոչ միայն տեղեկատվական արժեք ունեն, այլև ուղղորդում են ուսուցիչների աշխատանքը, խթանում նրանց քննադատական վերաբերմունքը և առիթ են ստեղծում վիճելի հարցերի կապակցությամբ քննարկումներ և հետազոտական աշխատանքներ կազմակերպելու համար:

Ձեռնարկը կազմված է հետևյալ թեմատիկ շարքերից.

1. Ժամանակակից դաս
2. Ուսուցման գործընթացը մայրենիի դասերին
3. Խմբային աշխատանք
4. Տնային աշխատանք
5. Ուսումնական թղթապանակ

Ինչպես երևում է թվարկումից, դրանք առավել շատ տրվող հարցերն են, որոնք ավելի մանրամասն մեկնության կարիք ունեն: Հեղինակներն իրենց առջև խնդիր չեն դրել հիշյալ հարցերին սպառիչ և վերջնական պատասխան տալու. դա վեր է փոքր ծավալի գրքույկի մեջ տեղավորելու հնարավորություններից: Պարզապես նպատակ են ունեցել ուշադրություն հրավիրելու նշված հարցերի պատասխանների միջուկին և ձեռնարկի փոքր ծավալի միջոցով ապահովելու դրա գործածության մատչելիությունն ու հետաքրքրությունը:

Հեղինակները մեծապես շնորհակալ կլինեն բոլոր նրանց, ովքեր կներկայացնեն իրենց դիտարկումները և հարցեր կուղղեն՝ գրքի երկրորդ մասն ավելի հարստացնելու և առավել հետաքրքիր տեղեկատվություն ապահովելու համար:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

ԹԵՄԱ 1. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԱՍ

1.1. ԻՆՉԷ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԱՍԸ, ԵՎ ՈՐՐ Է ՆՈՐՈՒՅԹԸ

Եթե մենք սովորեցնենք այնպես,

ինչպես սովորեցրել ենք երեկ,

սպա մենք երեխաներից

կգողանանք նրանց վաղվա օրը:

Ջոն Դյուի

XXI դարում արձանագրված տեխնոլոգիական աննախադեպ զարգացումը լուրջ խնդիրներ է առաջադրում մարդկությանը: Այդ տեսանկյունից շատ կարևոր է այն հանգամանքը, որ կրթությունը համաքայլ ընթանա ժամանակի փոփոխություններին: Արագընթաց փոփոխությունները մարդուց պահանջում են նոր իրավիճակներում հարմարվելու, ձկուն գործելու հմտություններ: Իսկ ի՞նչ դեր պետք է խաղա դպրոցը, և ինչպիսի՞ն պետք է լինի դասի բովանդակությունը, որպեսզի մարդուն նախապատրաստի լիարժեք կյանքին և աշխատանքին: Այսօր անհրաժեշտություն է ծագում ուսուցման գործընթացը կազմակերպելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների, ինչպես նաև նոր մարդասիրական մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմամբ: Այդ տեխնոլոգիաների կիրառումը պետք է դառնա ուսուցչի գործունեության և ցանկացած դասի անխախտ բաղադրիչը: Այն կնպաստի աշակերտի անձի զարգացմանը, նրա մտավոր աճին, գիտելիքների խոր և իմաստավորված յուրացմանը, նրա բարոյական հիմքերի ձևավորմանը: Կրթության բովանդակության մեջ կարևորվում են ոչ միայն գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, այլև աշակերտների բանիմացությունը, քննադատական մտածողությունը, արժեքները, դիրքորոշումները, այսինքն՝ այնպիսի որակներ, որոնք նրան անհրաժեշտ են ամբողջ կյանքի ընթացքում:

Ժամանակակից դասն արդի ժամանակաշրջանում իրականացվող, երեխայի, նրա ծնողների, հասարակության և պետության ներկայիս պահանջներից բխող դաս է:

Ժամանակակից դասի բովանդակության մեջ նորույթն այն է, որ՝

- Դասի բովանդակությունն ընդգրկում է ոչ միայն թեմայի վերաբերյալ առարկայական գիտելիքների ուսումնասիրումը, այլև գնահատողական և մեթոդոլոգիական գիտելիքների ձեռքբերումը: Գնահատողական գիտելիքների միջոցով աշակերտները բացահայտում են ուսումնասիրվող նյութի գիտական և հասարակական նշանակությունը, իրենց վերաբերմունքն են արտահայտում ուսումնասիրվող նյութի նկատմամբ, կարողանում են պատասխանել այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ ինչու եմ այս նյութը սովորում, ինչպես այն պետք է օգտագործեմ հետագայում և այլն: Իսկ մեթոդոլոգիական գիտելիքներն այն մեթոդների, հնարների, միջոցների ամբողջությունն են, որոնց իմացությունն աշակերտներին կօգնի կատարելու որոնողական, հետազոտական աշխատանքներ, ձևավորելու սովորելու կարողություններ, ձեռք բերելու ինքնուրույն գիտելիքներ, կատարելու բացահայտումներ:
- Դասի ընթացքում աշակերտների գործունեության արդյունքների գնահատականը հենվում է նախապես պլանավորած այն արդյունքների ստացման վրա, որոնց մասին դասի սկզբում ուսուցիչը հաղորդել է աշակերտներին: Հետևաբար, ուսուցչին անհրաժեշտ է հստակ որոշել ինչպես ամբողջ դասի, այնպես էլ դասի յուրաքանչյուր փուլի ակնկալվող արդյունքը: Ուսուցիչը պետք է նաև մտածի, թե ինչ գործիքների միջոցով կարող է ստուգել պլանավորած արդյունքները:
- Դասը նպաստում է դպրոցականների ինքնիրագործմանը, ստեղծագործական ներուժի դրսևորմանը: Դասի ընթացքում երեխաները պետք է կարողանան գիտակցաբար գործել ուսումնական կոնկրետ իրավիճակում, որոշումներ կայացնել ոչ ստանդարտ իրավիճակներում:

- Ուսուցումը հիմնվում է ոչ թե պատրաստի գիտելիքների մտապահման, այլ ուսուցչի ուղղորդմամբ ինքնուրույն գիտելիքների որոնման և բացահայտման վրա: Ժամանակակից դասի ընթացքում աշակերտը դառնում է իր ուսումնական գործընթացի կազմակերպման ակտիվ մասնակիցը: Սա ենթադրում է, որ ժամանակակից դասը պետք է դաստիարակի ստեղծագործող անհատ:
- Անշուշտ, գիտելիքների ու կարողությունների ձեռքբերումն ուսուցման կարևորագույն արդյունքն է, բայց այն չպետք է ստանալ երեխայի առողջության գնով: Հետևաբար, ժամանակակից դասի ընթացքում առավելագույնս հաշվի են առնվում սովորողների անհատական առանձնահատկությունները: Դասի ընթացքում այլևս բավարար չէ առանձնացնել պատահական խմբեր՝ «ուժեղ», «միջին» և «թույլ»՝ հենվելով ուսումնական ծրագրի յուրացման վրա: Հոգեկան և ֆիզիկական առողջության պահպանմանը նպաստում են աշակերտների ընկալման ունակությունների հաշվառումը, մտավոր գործունեություն ծավալելու ունակությունները: Ուսուցիչը, հստակ իմանալով երեխաների առանձնահատկությունները, սովորողներին առաջարկում է առաջադրանքների ընտրություն, նրանց հետ պլանավորում է ուսումնական գործունեությունը, քննարկում է գիտելիքների ձեռքբերման, մտապահման, գործնականում դրանք կիրառելու հնարավոր միջոցները:
- Ժամանակակից դասը երկխոսություն է, որը ենթադրում է ուսուցման փոխներգործուն ձևեր, ձկունություն: Դասի ընթացքում ուսուցիչը կիրառում է այնպիսի մեթոդներ ու հնարներ, որոնք ձևավորում են գիտելիքները, անհրաժեշտ տեղեկատվությունը ինքնուրույն ձեռք բերելու, եզրահանգումներ ու եզրակացություններ անելու կարողություններ: Այսինքն՝ աշակերտները պետք է ձեռք բերեն վերառարկայական ուսումնական կարողություններ, որոնք ապահովում են ինքնուրույն ուսումնական գործունեության ծավալումը:
- Ուսուցիչը ստեղծում է անդրադարձ կատարելու, իր մտքերը և գործունեությունը գնահատելու, գործունեության արդյունքներն

առաջադրված նպատակների հետ համեմատելու, իր իմացածի ու չիմացածի սահմանները որոշելու կարողությունների զարգացման պայմաններ:

1.2. ՀԱՃԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԱՍԸ ԲՆՈՒԹԱԳՐՎՈՒՄ Է ԻԲՐԵՎ ՉԱՓՈՐՈՇՉԱՏԵՆ: Ի՞ՆՉ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՐԵԼԻ Է ՈՐՈՇԵԼ ԴԱՍԻ ՉԱՓՈՐՈՇՉԱՏԵՆ ԼԻՆԵԼԸ

«Հանրակրթության պետական չափորոշի» պահանջների իրագործման համար ուսուցիչը պետք է հստակ իմանա, թե ինչ մանկավարժական, հոգեբանական մոտեցումներ են ներկայացվում ժամանակակից դասին:

1. Դասի նպատակները ձևակերպվում են՝ ելնելով աշակերտին ներկայացվող պահանջներից, նրա գործառույթներից: Ուսուցիչը նպատակը ձևակերպելիս պետք է ինքն իրեն տա հետևյալ հարցերը.
 - ✓ Ի՞նչ կարևոր գիտելիք պետք է ձեռք բերի աշակերտը:
 - ✓ Ի՞նչ կարևոր կարողություն և հմտություն պետք է ձևավորել ու զարգացնել:
 - ✓ Ի՞նչ արժեքային համակարգ ենք ուզում ձևավորել աշակերտների մեջ:
2. Պլանավորման համար հիմնական ուղեցույց է դառնում չափորոշիչը (այլ ոչ թե առարկայական ծրագիրը կամ դասագրքի որոշակի թեման): Ճիշտ պլանավորումը լայն հնարավորություններ է ստեղծում ուսուցումը ճիշտ և արդյունավետ կազմակերպելու համար:
3. Ամբողջ ուսումնական գործունեությունը կառուցվում է գործունեական մոտեցման հիմքով, որի նպատակն է սովորողների անձի զարգացումը: Իսկ անձը, անհատը կզարգանա այն դեպքում, երբ լիակատար կյուրացնի համապիտանի ուսումնական գործողություններ կատարելու կարողությունները: Ուսումնական նյու-

թի պասիվ յուրացման դեպքում երեխան չի զարգանա: Հատկապես երեխայի ակտիվ գործողությունները կարող են դառնալ նրա ինքնուրույնության ձևավորման հիմքը:

4. Այսպիսով՝ չափորոշահեն դասի կրթական խնդիրն այնպիսի պայմանների կազմակերպումն է, որոնք կխթանեն աշակերտների ակտիվ գործունեությունը:
5. Չափորոշային պահանջների իրագործման նպատակով ուսուցիչը ստեղծում է ուսումնական իրավիճակներ, որտեղ երեխաներն ուսումնական գործունեություն են ծավալում: Դրանց միջոցով ուսուցիչը կարողանում է ուսումնական խնդիրները լուծել ուսումնական իրավիճակներում: Ուսումնական իրավիճակներ ասելով՝ հասկանում ենք ուսումնական գործընթացում կազմակերպվող այնպիսի հատուկ իրավիճակներ, որտեղ երեխաներն ուսուցչի օգնությամբ տեսնում են ուսումնասիրվող նյութը, հետազոտում են այն՝ կատարելով զանազան գործողություններ, օրինակ՝ վերափոխում են այն, վերաձևակերպում կամ նկարագրում, օգտվում են տեղեկատվական աղբյուրներից, վերլուծում են նյութը, խմբավորում, դասակարգում և այլն: Կատարելով այս ամենը՝ աշակերտները յուրացնում են սովյալ առարկայի համար բնորոշ գործողություններ կատարելու կարողությունները, այսինքն՝ առարկայական գիտելիքներից բացի՝ ձեռք են բերում ճանաչողական և հաղորդակցական բանիմացություն:

Ուսումնական իրավիճակներ ստեղծելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի՝

- աշակերտների տարիքային առանձնահատկությունները,
- ուսումնական առարկայի առանձնահատկությունը,
- աշակերտների՝ համապիտանի ուսումնական գործողություններ կատարելու կարողությունների ձևավորման մակարդակը:

1.3. Ի՞նչ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՈՎ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՈՐՈՇԵԼ, ԹԵ ՈՐՔԱՆՈՎ Է ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՉԱՓՈՐՈՇՉԱՏԵՆ ԴԱՍԸ

Չափորոշչահեն դասի արդյունավետության չափանիշներն են.

1. Ուսուցիչը սովորեցնում է աշակերտներին անդրադարձ կատարելու կարողություններ (գնահատել իրենց պատրաստվածությունը, բացահայտել բացթողումները, որոնեւ թերացումների պատճառները և այլն):
2. Ուսուցիչը տիրապետում է երկխոսության տեխնոլոգիային. ոչ միայն հարցեր է տալիս, այլև սովորեցնում է աշակերտներին հարցեր առաջադրել:
3. Ուսուցիչը ուսուցման վերարտադրողական և խնդրահարույց ձևերը ներդաշնակ, արդյունավետ կերպով համապատասխանեցնում է դասի նպատակներին, սովորեցնում է երեխաներին ստեղծագործաբար աշխատել:
4. Դասի ընթացքում տրվում են առաջադրանքներ և ճշգրիտ չափանիշներ, որոնք ինքնաստուգման ու ինքնագնահատման հնարավորություն են ստեղծում (զարգացնում են հատուկ ձևավորված գնահատողական գործունեություն կատարելու կարողություններ):
5. Ուսուցիչը ձգտում է, որ ուսումնական նյութն իմաստավորվի բոլոր աշակերտների կողմից՝ այդ նպատակի համար կիրառելով հատուկ հնարներ:
6. Ուսուցիչը ջանում է գնահատել յուրաքանչյուր սովորողի իրական առաջընթացը և խրախուսում է նույնիսկ ամենաչնչին հաջողությունները:
7. Ուսուցիչը հատուկ պլանավորում է դասի հաղորդակցական նպատակները:
8. Ուսուցիչն ընդունում և խրախուսում է սովորողների սեփական դիրքորոշումը, այլընտրանքային կարծիքները:

9. Ուսուցչի ոճը, վարած երկխոսությունները ստեղծում են համագործակցային մթնոլորտ, հոգեբանական հարմարավետություն:
10. Դասի ընթացքում իրականացվում է ուսուցիչ-աշակերտ խոր անձնային փոխազդեցություն (հարաբերությունների, համատեղ գործունեության միջոցով և այլն):
11. Ուսուցումը կազմակերպվում է բացահայտումների միջոցով:
12. Սովորողներն իրենք են ընտրում այս կամ այն ուսումնական գործունեությունը տվյալ թեմայի ուսումնասիրման նպատակով:
13. Առկա են բանավեճեր, որոնք բովանդակում են ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ տարբեր մոտեցումներ, հակասություններ, միասնական որոշման որոնում:
14. Աշակերտը գիտակցում է իր գործունեությունը, այսինքն, թե ինչպես է ստացել արդյունքը, ինչ դժվարությունների է հանդիպել, ինչպես է դրանք հաղթահարել:
15. Աշակերտին խմբով աշխատելու և խմբի մասնակիցների հետ բացահայտումներ կատարելու հնարավորություն է տրվում:
16. Ուսուցիչն աշակերտներին մղում է խնդրահարույց-որոնողական և հետազոտական գործունեության:
17. Եզրահանգումներն անում են իրենք՝ սովորողները:
18. Վերարտադրողական բնույթի աշխատանքները հասցվում են նվազագույնի, իսկ ստեղծագործական բնույթի աշխատանքները՝ առավելագույնի:
19. Դասն անցկացվում է աշակերտակենտրոն մոտեցմամբ:
20. Հաշվի են առնվում ոչ միայն սովորողների ուսումնառության մակարդակն ու հնարավորությունները, այլև նույնիսկ սովորողների ձգտումները, տրամադրությունը և այլն:

1.4. Ի՞նչ է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԵԶ՝ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՄ, ԻՄԱՆԱԿ ԱՇԱԿԵՐՏԱԿԵՆՏՐՈՆ ԴԱՍԻ ՄԱՍԻՆ

Առաջարկում ենք կանոններ, որոնք կօգնեն ուսուցչին իր ամենօրյա գործունեությունը կազմակերպելիս.

- Ես գիտելիքների աղբյուր չեմ դասի ժամանակ: Ես դասի կազմակերպիչն եմ և աշակերտների աջակիցը:
- Երեխան անապայման պետք է իմանա, թե ինչու է այս կամ այն գիտելիքն իրեն անհրաժեշտ, այսինքն՝ դասի նպատակներն անապայման պետք է ձևակերպվեն դասի ընթացքում՝ աշակերտների հետ, և այդ նպատակները պետք է գտնվեն երեխայի հետաքրքրության շրջանակում:
- Իմ բառապաշարից պետք է հանեմ այնպիսի բառերն ու արտահայտությունները, ինչպիսիք են՝ սխալ է, ճիշտ չէ և այլն: Դրա փոխարեն պետք է դիմեմ երեխաներին այսպես. առաջարկում եմ քննարկել..., իսկ դուք ի՞նչ եք կարծում..., ես կարծում եմ, որ... , բայց հնարավոր է, որ սխալվում եմ... և այլն:
- Ոչ մի մենախոսություն դասի ընթացքում. միայն երկխոսություն, որին մասնակցում են բոլորը:
- Յուրաքանչյուր դասի ընթացքում պետք է կազմակերպեմ խմբային աշխատանք՝ զույգերով, քառյակով, մեծ խմբերով, որի արդյունքում սովորում են հաղորդակցվել, բանավիճել, հիմնավորել իրենց կարծիքը, օգնություն խնդրել կամ առաջարկել:
- Ամենակարևորն իմ զգայական տրամադրվածությունն է: Ես կարողանում եմ կառավարել իմ զգացմունքները և այդ կարողությունը սովորեցնել նաև իմ աշակերտներին:
- Եթե իմ վարած դասից հետո երեխան որևէ հարց չունենա, ընկերների կամ ինձ հետ մտքերը կիսելու կարիք չզգա, ոչինչ չուզենա պատմել այն մարդկանց, որոնք իր հետ դասի ընթացքում դասարանում չեն եղել, ուրեմն, եթե նույնիսկ, իմ կարծիքով, դասն ընթացել է արդյունավետ, ապա այն որևէ հետք չի թողել երեխայի վրա:

1.5. ԻՆՉՊԵՄ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ ՉԱՓՈՐՈՇՉԱՇԵՆ ԴԱՍԻՆ

Ներքոհիշյալ երաշխավորությունները կարող են օգնել ուսուցչին չափորոշահեն դասի նախապատրաստման հարցում: Շարադրենք դրանք այն հաջորդականությամբ, ինչ հաջորդականությամբ նախապատրաստվում է դասը: Այսպես.

1. Ինչից սկսել դասի նախապատրաստումը

- Ճշգրիտ որոշել և ձևակերպել թեման,
- որոշել այդ թեմայի տեղը տվյալ դասարանի, տվյալ առարկայի ծրագրով նախատեսված ուսումնական գործընթացում,
- որոշել այն կարևորագույն հասկացությունները, որոնց վրա հենվում է տվյալ դասը,
- և, ընդհակառակը, առանձնացնել ուսումնական նյութի այն հատվածները, որոնք կարող են կիրառվել ծրագրով նախատեսված՝ հետագայում անցնելիք նյութերի ուսումնասիրման ընթացքում:

2. Որոշել և հստակ ձևակերպել դասի նպատակները, թե ինչու է այն անհրաժեշտ: Անհրաժեշտ է նշել դասի և՛ ուսուցանող, և՛ զարգացնող, և՛ դաստիարակող գործառույթները:

3. Պլանավորել ուսումնական նյութը

Դրա համար անհրաժեշտ է.

- ✓ Առաջին հերթին որոնել դասի թեմային համապատասխան գրականություն՝ գիտական, գիտահանրամատչելի, մեթոդական: Ընտրել միայն այն նյութերը, որոնք նպաստում են առաջադրված խնդիրների առավել մատչելի լուծմանը:
- ✓ Կազմելով դասի պլան՝ ուսուցիչն ընթերցում է տվյալ թեմայի շուրջ չափորոշային պահանջները, պարզում, թե ինչ է պահանջվում իրենից տվյալ դասին, հատուկ ուշադրություն դարձնում դասի գաղափարական, գիտատեսական և աշխարհայացքային ուղղվածությանը, տրամաբանական հաջորդականությանը և այն չափաբաժնին, որը պետք է ընդգրկել դասի բովանդակության մեջ՝ դրանով իսկ ապահովել-

լով անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացումը: Դասի բովանդակությունն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել առարկայի ծրագրային պահանջները: Ուսուցիչը պետք է նայի թեմատիկ պլանավորումը տվյալ դասի՝ որպես թեմատիկ խմբի կառուցվածքային միավորի տեղն ու դերը տվյալ թեմատիկ խմբում որոշելու նպատակով:

- ✓ Ընտրել ուսումնական առաջադրանքներ, որոնց նպատակը՝
 - նոր նյութի ճանաչումն է,
 - վերարտադրումը,
 - գիտելիքների կիրառումը նոր իրավիճակում,
 - գիտելիքների կիրառումը անձանոթ իրավիճակում,
 - գիտելիքների նկատմամբ ստեղծագործական մոտեցումը:
- ✓ Դասակարգել ուսումնական առաջադրանքները՝ «պարզից բարդ» սկզբունքին համապատասխան: Կազմել առաջադրանքների երեք խումբ.
 - առաջադրանքներ, որոնք նպաստում են նյութի վերարտադրմանը,
 - առաջադրանքներ, որոնք նպաստում են նյութի իմաստավորմանը,
 - առաջադրանքներ, որոնք նպաստում են նյութի ամրապնդմանը:

4. Մտածել դասի «առանցքային» պահը

Յուրաքանչյուր դաս պետք է բովանդակի այն, ինչը կհարուցի զարմանք, հիացմունք, հրճվանք, այսինքն՝ այն, ինչը երեխաները կհիշեն, երբ մնացած ամենը կմոռանան: Դա կարող է լինել հետաքրքիր փաստ, անսպասելի բացահայտում, գեղեցիկ փորձ, ոչ ստանդարտ մոտեցում արդեն յուրացված նյութի նկատմամբ:

5. Հավաքած ուսումնական նյութի խմբավորում

Խմբավորելու համար պետք է մտածել, թե ինչ հաջորդականությամբ կարելի է կազմակերպել աշխատանքը հավաքած նյութի շուրջ, ինչպես պետք է կազմակերպել սովորողների գործունեության տեսակների հաջորդականությունը: Նյութերի խմբավորման ընթացքում կարևոր է կարողանալ որոնել դասի կազմակերպման ձևի այնպիսի ընտրություն, որը առավելագույնս կնպաստի սովորողների՝ նոր նյութի ակտիվ յուրացմանը:

6. Ոչ պակաս կարևոր է նաև յուրաքանչյուր փուլի համար որոշել սովորողների ճանաչողական գործունեության բնույթը (վերարտադրողական և որոնողական), համապատասխան մեթոդներ ու հնարներ և դասի ընթացքում դրան համապատասխան կազմակերպել աշակերտների ֆրոնտալ (համընդհանուր), խմբային և անհատական գործունեությունը:

7. **Պլանավորել դասի ընթացքում սովորողների գործունեության ստուգումը**, որի համար անհրաժեշտ է մտածել.

- ինչ ստուգել,
- ինչպես ստուգել,
- ինչպես կիրառել ստուգման արդյունքները:

Ընդ որում՝ պետք է հիշել, որ որքան հաճախակի է ստուգվում բոլորի աշխատանքը, այնքան հեշտ է լինում տեսնել տիպիկ սխալները և դժվարությունները, ինչպես նաև ցույց տալ ուսուցչի իրական հետաքրքրությունը աշակերտների աշխատանքի նկատմամբ:

8. Պատրաստել դասի համար անհրաժեշտ կահավորանքը

Կազմել ուսումնագնական պարագաների, սարքերի և այլ անհրաժեշտ նյութերի ցանկը:

9. **Մտածել տնային աշխատանքի**, դրա բովանդակության, ինչպես նաև կատարման երաշխավորությունների մասին:

**1.6. ԻՆՉՈՒԻ ԴԱՍԱՊԼԱՆՈՒՄ ԳՐԱՆՑԵԼ ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ,
ԵԹԵ ԱՅՆ ՊԱՐՁ ԵՆԹԱԴՐՎՈՒՄ Է ԴԱՍԻ ԹԵՄԱՅԻ
ԱՆՎԱՆՈՒՄԻՑ**

Այո՛, դասի նպատակը հաճախ կարելի է կռահել դասի թեմայի ձևակերպումից: Բայց իրականում դասին առաջադրված նպատակներով են պայմանավորվում թեման, յուրացվող գիտելիքների, կարողությունների և հմտությունների շրջանակը:

Դասի նպատակը տվյալ դեպքում բնորոշվում է որպես նախապես պլանավորված կամ նախագծված գործունեության վերջնարդյունք, և նպատակների առաջադրումը հնարավորություն է ընձեռում կազմակերպելու աշակերտների աշխատանքն ու հաջողությամբ դեկավարելու այն, իսկ այս ամենը, անշուշտ, հնարավոր չէ կռահել դասի թեմայից:

Ինչու է անհրաժեշտ դասապլանում կարևորել ճշգրիտ ձևակերպված նպատակները:

Պատճառ առաջին: Պարզորոշ առաջադրված նպատակները հիմք են ծառայում ուսումնական նյութի ճիշտ մշակման համար: Չէ՞ որ եթե չգիտես, թե ուր ես գնում, ապա դժվար է հասկանալ, թե ինչպես կարող ես հասնել այնտեղ:

Պատճառ երկրորդ: Առանց պարզորոշ առաջադրված նպատակների դժվար է որոշել, թե սովորեցին արդյոք աշակերտներն այն, ինչն իրենցից պահանջվում է: Ուսումնական նյութերի ուսումնասիրման և աշակերտների կողմից դրանց յուրացման համար վարժությունները, հարցերը, առաջադրանքները կարելի է ճշգրիտ կազմել, ուսուցման մեթոդները, հնարները ճիշտ ընտրել միայն այն դեպքում, երբ սպասվելիք արդյունքներն առաջադրված են հստակ և ճշգրիտ:

Պատճառ երրորդ: Դասի նպատակների պարզորոշ նկարագրությունը և դրանք աշակերտին հաղորդելն օգնում են նրան՝ իր ուշադրությունը կենտրոնացնելու առաջադրվող նյութի կարևոր կողմերին, գիտակցաբար ուղղելու ուժերն ուսուցման գործընթացում առաջադրված նպատակներն իրականացնելուն: Աշակերտներին ուսուցման նպատակները նախապես հաղորդելը նշանակում է հարգանք դրսևորել նրանց

հանդեպ, վերաբերվել նրանց ինչպես հավասարը հավասարի և կիսել պատասխանատվությունը ուսումնական աշխատանքի արդյունքներին հասնելու հարցում:

1.7. ԻՆՉՊԵՍ ՁԵՎԱԿԵՐՊԵԼ ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այս հարցին նույնիսկ ուսուցչի որոշ ձեռնարկներում կամ տարբեր կայքերում տեղադրված դասապլաններում էլ խառնաշփոթ է տիրում. մի դեպքում ակնկալվող արդյունքը ներկայացված է որպես խնդիր, մեկ այլ դեպքում՝ որպես նպատակ: Նախ տեսնենք, թե ինչպես են սահմանվում նպատակը և խնդիրը մանկավարժական գրականության մեջ:

Նպատակը նկարագրում է ուսուցման ցանկալի արդյունքները: Այսինքն՝ այն, ինչն ուզում է ստանալ ուսուցիչն իր և աշակերտների ջանքերի շնորհիվ:

Խնդիրը քայլ է դեպի նպատակը, գործողությունները, որոնք տանում են դեպի նպատակի իրագործում: Միննույն նպատակի դեպքում կարող են առաջադրվել շատ խնդիրներ, որոնք միջոց են նպատակին հասնելու համար:

Կարևոր է նաև նշել, որ նպատակներ ձևակերպելիս պետք է պատասխանել «ի՞նչ» հարցին, իսկ խնդիրներ առաջադրելիս՝ «ի՞նչ անել» հարցին: Յուրաքանչյուր խնդիր դրվում է՝ հաշվի առնելով առաջադրված նպատակները: Ունենալով կոնկրետ նյութ, ելնելով կոնկրետ պայմաններից (դասարանի համակազմը, ուսումնական միջոցների, ուսուցչի ձեռնարկների առկայությունը և այլն)՝ ուսուցիչն ընտրում է այնպիսի մեթոդներ և հնարներ, որոնք սովորողներին կօգնեն յուրացնելու այդ նյութը, այսինքն՝ լուծվում է ուսուցչի կողմից առաջադրված խնդիրը:

Այսպիսով՝ դասի նպատակները ձևակերպելիս ուսուցիչը ցույց է տալիս այն կարողություններն ու հմտությունները, որոնք պետք է ձևավորվեն կամ զարգացվեն, կատարելագործվեն դասի ընթացքում: Նույն նպատակը կարող է իրագործվել մի քանի դասի ընթացքում, իսկ խնդիրները լուծվում են կոնկրետ մի դասի ընթացքում: Ուրեմն՝ ի՞նչ է խնդիրը:

Ընդհանուր իմաստով՝ խնդիրը գործողությունների ամբողջությունն է, որը դառնում է նպատակին հասնելու միջոց:

«Ինչպե՞նչ ձևակերպել նպատակները» հարցին պատասխանելու համար նախ նշենք այն թերությունները, որոնք կիրառում են ուսուցիչները դասի նպատակները ձևակերպելիս.

- ✓ Չափորոշչահեն դասի նպատակները որոշվում են «Հանրակրթական պետական չափորոշչի» պահանջներով: Յուրաքանչյուր առարկայի համար այդ նպատակները կոնկրետացվում են: Սակայն չափորոշչային պահանջները կուրորեն որպես նպատակ առաջադրելը երբեմն ուսուցչին հնարավորություն չի ընձեռում հասկանալու, թե ինչի վրա պետք է ուշադրություն դարձնի և ինչ է աշակերտից սպասում ուսուցման արդյունքում:
- ✓ Շատ ուսուցիչներ աշխատում են բարեխղճորեն, ունեն պատասխանատվության զգացում: Նրանք մանրամասն պատրաստվում են դասին, մտածում են դասի յուրաքանչյուր պահի մասին, ջանում են ընտրել հետաքրքիր նյութեր, բազմազան առաջադրանքներ, մի խոսքով՝ անում են ամեն ինչ՝ դասի արդյունավետությունն ապահովելու համար: Ուսուցիչները կիրառում են մի շարք մանկավարժական տեխնոլոգիաներ, աշակերտները դրանց շնորհիվ կատարում են մի շարք բացահայտումներ: Բայց անհասկանալի է մնում այն, թե, ի վերջո, ինչ եզրահանգում կատարեցին նրանք իրենց բացահայտումների շնորհիվ:
- ✓ Այդ է պատճառը, որ երբեմն դասի ինքնավերլուծություն կատարելիս ուսուցիչները չեն կարողանում վստահաբար փաստել. «Հասել եմ առաջադրված նպատակին կամ մասամբ եմ հասել առաջադրված նպատակին»:
- ✓ Հաճախ ուսուցիչը ձգտում է յուրաքանչյուր նոր դասին առաջադրելու նոր զարգացնող նպատակ՝ մոռանալով այն մասին, որ երեխայի զարգացումը կատարվում է ավելի դանդաղ, քան նրա ուսուցման և դաստիարակության գործընթացը, հետևա-

բար, որևէ սոցիալական կարողություն զարգացնող միևնույն նպատակը կարող է առաջադրվել մի շարք դասերի համար, երբեմն էլ նույնիսկ ամբողջ թեմայի և բաժնի համար:

- ✓ Երբեմն ուսուցիչները նպատակները խառնում են՝
 - ա) բովանդակության հետ և ձևակերպում են այսպես. *Ցանկություն երեխաներին*
 - բ) ուսուցման մեթոդների հետ և ձևակերպում են այսպես. *պատմել աշակերտներին.... մասին, ցույց տալ աշակերտներին*
 - գ) աշակերտների գործունեության հետ և ձևակերպում են այսպես. *աշակերտները պետք է լուծեն հետևյալ վարժությունները, աշակերտները պետք է կատարեն հետևյալ աշխատանքը...*
- ✓ Ուսուցիչների մեծ մասն առաջադրում է չափազանցված նպատակներ, այսինքն՝ այնպիսի նպատակներ, որոնց հնարավոր չէ հասնել մեկ դասի ընթացքում: Օրինակ՝ սովորողների մտավոր զարգացում, գործնական կարողությունների յուրացում:

Այսպիսով՝ ուսուցչի խնդիրն է մեթոդապես ճշգրտորեն ձևակերպել դասի նպատակները, որպեսզի հնարավոր լինի նշել այն միջոցները, որոնց միջոցով կարելի է հասնել այդ նպատակներին: Եվ այսպես. ինչպե՞ս ձևակերպել դասի նպատակները:

Նպատակները պետք է լինեն.

- կոնկրետ,
- հասկանալի,
- իրատեսական,
- ցանկալի արդյունքը նկարագրող,
- չափելի:

Ուսումնական նպատակը սերտ կապված է գնահատման հետ: Ուսուցիչներն առաջադրում են այնպիսի ստուգիչ աշխատանքներ, որոնցով որոշում են, թե որքանով են իրագործվել առաջադրված նպատակները, ինչ մակարդակով են յուրացվել պլանավորած գիտելիքները, կարողությունները և հմտությունները: Հստակ ձևակերպած նպատակը հեշտացնում է ուսուցման գործընթացը:

Ինչպես վերը նշվեց, դասի նպատակները կարելի է ձևակերպել՝ որոշելով վերջնական արդյունքը՝ ինչ պետք է կարողանա, իմանա աշակերտը ուսումնական տարվա ավարտին: Այնուհետև այդ արդյունքները մասնատել առանձին գիտելիքների և կարողությունների: Արդյունքում ուսուցիչը կունենա այն բոլոր կարողությունների ամբողջական ցանկը, որոնք աշակերտը պետք է յուրացնի ուսումնական տարվա ընթացքում:

Օրինակ՝ ընդհանուր նպատակ կարող է լինել հետևյալ ծրագրային պահանջը (Մայրենիի ծրագիր, 4–րդ դասարան). զարգացնել սովորողների տեքստի վրա ինքնուրույն աշխատելու և դասողություններ անելու կարողությունները:

- ***Սրանից բխող դասերի կոնկրետ նպատակներ կարող են լինել.***
 - ✓ կարդացած նյութի հիմնական մտքի առանձնացումը,
 - ✓ տեքստի բաժանումը իմաստային հատվածների,
 - ✓ տեքստի բովանդակության վերարտադրությունը,
 - ✓ տեքստի բովանդակության վերարտադրումը նկարագրական և դասողական տարրերի օգտագործմամբ:

Ելնելով դասի կառուցվածքի մասին եղած ժամանակակից պատկերացումներից՝ դասի ընթացքում, որպես կանոն, ուսուցիչն աշխատում է իրագործել ուսումնական եռամիասնական նպատակները՝ կրթական, զարգացնող և դաստիարակող:

1.8. ՊԱՐՏԱԴԻՐ Է ԱՐԴՅՈՔ ՕՐՎԱ ՊԼԱՆԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ուսուցիչների մեծ մասը պնդում է, որ օրվա մանրամասն պլան պետք է գրի սկսնակ ուսուցիչը, քանի որ նա նոր է սկսում աշխատանքային գործունեությունը, աշխատանքային փորձ չունի, նոր-նոր է սկսում կիրառել մանկավարժական տեխնոլոգիաները, մեթոդական հնարները: Նա յուրաքանչյուր անցկացրած դասից հետո պետք է անդրադառնա ստացված արդյունքներին, հաջորդող դասերի ընթացքում կատարի որոշակի շտկումներ: Բայց փորձառու ուսուցիչները, երբ իրենց գլխում վաղուց արդեն գրառել են դասի յուրաքանչյուր բոլորակ, անցկացման մեթոդիկան, ինչո՞ւ պետք է գրեն օրվա դասի պլան:

Այս հարցին պատասխանելու համար նախ անհրաժեշտ է տալ հետևյալ հարցերի պատասխանները.

- Ի՞նչ է օրվա դասի պլանը, և ի՞նչ նպատակով է գրվում այն:
- Պլանն օգնո՞ւմ է, թե՞ ընդհակառակը՝ շեղում:
- Օրվա պլանին հետևելն ազդո՞ւմ է դասի որակի վրա:

Նախ փորձենք պատասխանել առաջին հարցին. ըստ էության, ի՞նչ է դասի պլանը: Այն ուսուցչի՝ դասին պատրաստվելու համար անհրաժեշտ նախապատրաստական փուլի բաղադրիչներից է: Պլանն արտացոլում է ուսուցչի ստեղծագործական միտքը, որն էլ ակտիվացնում է սովորողների գործունեությունը գիտելիքները ստեղծագործաբար յուրացնելիս: Դասի պլանը (ի տարբերություն թեմատիկ պլանավորման՝ երբեմն այն անվանում են աշխատանքային պլան), մեր կարծիքով, անհրաժեշտ է յուրաքանչյուր ուսուցչին: Սովորաբար աշխատանքային պլանները տարբերվում են միայն ծավալով. սկսնակ ուսուցիչը գրում է պլանն ամենայն մանրամասնությամբ, իսկ փորձառու ուսուցիչը՝ ավելի սեղմ ու համառոտ: Մանրամասն գրված աշխատանքային պլանը վկայում է անցկացվելիք դասի յուրաքանչյուր տարրի մանրամասն դիտարկման մասին: Որքան մանրամասն և ամբողջական է մշակված դասի պլանը, այնքան ավելի կազմակերպված է անցնում դասը:

Դասին պատրաստվելիս անհրաժեշտ է այն մանրակրկիտ պլանավորել, բոլոր կատարվելիք աշխատանքներն անցկացնել մտքով, «ապրել»

այն: Դասը միայն այն ժամանակ արդյունավետ կընթանա, եթե անցնի ուսուցչի սրտով և մտքով:

Քանի որ ուսուցիչները տարբեր են, ապա պլան–կոնսպեկտի առկայության նկատմամբ նրանց կարծիքները, մոտեցումները տարբեր են: Եթե դասի ընթացքում պլանն անհրաժեշտ է, ապա պետք է այն գրել, իսկ եթե, ընդհակառակը, շեղում է, ապա չարժե դրա վրա ժամանակ ծախսել (եթե, իհարկե, ձեր դպրոցի ղեկավարությունը չի պահանջում այն): Ուսուցիչը դասի ընթացքում և՛ ռեժիսոր է, և՛ սցենարիստ, և՛ դերասան, այսինքն՝ նա ստեղծագործող մարդ է, իսկ ստեղծագործությունը որոշակի շրջանակներում դժվարությամբ է տեղավորվում:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե դասի պլանին հետևելն ազդում է դասի որակի վրա, թե ոչ, ապա, սովորաբար դասի ընթացքում ուսուցիչներն անհրաժեշտություն չեն զգում բացելու պլանը, որովհետև մանրամասն մշակված պլանն արտացոլված է ուսուցչի գիտակցության մեջ՝ որպես պարապմունքի հստակ մոդել, և ուսուցիչը կարիք չունի դասի ընթացքում դիտելու իր պլանը: Այդ կարիքը կզգացվի միայն այն դեպքում, երբ ուսուցիչը պլանը կազմի շուտափույթ, ձևական, անփույթ: Ուսուցչի հիշողության մեջ այն ոչ մի հետք չի թողնի: Դա կբերի դասի փուլերի ոչ հստակ կազմակերպմանը, աշակերտների ուսումնական գործունեության ոչ ճիշտ ուղղորդմանը և այլն: Եթե ուսուցիչը նյութը շարադրելիս անընդհատ նայում է պլանին, ապա դա նրան կաշկանդում է և աշակերտների կողմից նյութի յուրացման գործընթացում բավականին դժվարություններ է ստեղծում: Եթե ուսուցիչն այնքան էլ վստահ չէ, որ լավ կհիշի դասի ընթացքում աշխատանքի հաջորդականությունը, ապա կարելի է պլանում ընդգրկված քայլերի հաջորդականությունը գրառել մի թղթի վրա, որպեսզի անհրաժեշտ պահին բոլոր տվյալները լինեն ձեռքի տակ:

Ամփոփելով նշենք, որ միշտ պետք է հիշել, դասի ընթացքում օրվա պլանի առկայությունը այնքան կարևոր չէ, որքան մանկական աչքերի փայլը և նրանց՝ նորը ճանաչելու ձգտումը:

**1.9. ՏԱՐԲԵՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԿԱՄ
ՊԸՏՆՆՋՈՒՄ ԵՆ ՕՐՎԱ ՊԼԱՆԻ ՏԱՐԲԵՐ ՁԵՎԵՐ:
Ի ՎԵՐՋՈՒՄ ԻՆՉ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ ՕՐՎԱ
ՊԼԱՆԸ**

Պլանի կառուցվածքը կախված է ուսուցչի անհատական առանձնահատկությունից, նրա աշխատանքից, աշակերտների համակազմից: Պլանը կարելի է կազմել կոնսպեկտի, թեզիսի ձևով. կարևորը, որ ձևը հարմար լինի հենց իրեն՝ ուսուցչին: Այստեղ միայն կարող ենք խորհուրդներ և երաշխավորություններ տալ, նշել բովանդակությանը ներկայացվող մի շարք պահանջներ:

Ինչպես վերը նշվեց, պլան-կոնսպեկտը կազմվում է կամային ձևով, այնուհանդերձ ցանկալի է, որ այնտեղ արտացոլվեն հետևյալ բաղադրիչները.

Պլան-կոնսպեկտը պետք է բովանդակի երեք հիմնական մաս.

- ձևական,
- բովանդակային,
- վերլուծական:

Ձևական մասն ունի հետևյալ տեսքը.

Դաս № _____

Թեմա _____

Նպատակը _____

Խնդիրները.

Ուսուցանող _____

Զարգացնող _____

Դաստիարակող _____

Կահավորանքը _____

Դասի առանձին փուլերի հաջորդականությունը

Բովանդակային մասը կազմված է երկու մասից.

1. Բոլոր առաջադրանքների տեքստերը, նոր ուսումնական նյութը, առաջադրանքների պատասխանները, երաշխավորություններ տնային աշխատանքների կատարման մասին.
2. Աղյուսակ, որտեղ գրված է, թե դասի որ փուլում ինչ գործունեություն է ծավալում ուսուցիչը, և ինչ գործունեություն՝ աշակերտը: Այն կարող է ունենալ հետևյալ տեսքը.

| <i>Դասի փուլը</i> | <i>Ինչ գործունեություն պետք է ծավալեն</i> | |
|-------------------|---|------------------|
| | <i>Աշակերտները</i> | <i>Ուսուցիչը</i> |
| | | |

Վերլուծական մասը դասի ինքնավերլուծությունն է: Դասին նախապատրաստվելիս ուսուցիչը պետք է վերլուծի նախորդ դասերը, որպեսզի միջոցներ ձեռնարկի նկատված թերությունները վերացնելու համար:

Ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործումը կարող է իրականացվել միայն գործունեության և դրա արդյունքների մշտական գնահատման միջոցով:

1.10. ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԿԱ՝ ԱՐԴՅՈՒՔ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԱՍԵՐԻ ՏԻՊԵՐԻ ՈՒ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ՄԻՋԵՎ

Հիմնականում դասի տիպերը մնում են նույնը, բայց նրանցում կատարվում են որոշակի փոփոխություններ.

1. Նոր նյութի ուսումնասիրման դասեր

Դրանք լինում են ավանդական (համակցված), որոնցում ներառվում են դասախոսություն, էքսկուրսիա, հետազոտական աշխատանք, գործ-

նական աշխատանք: Դասերի նպատակն է նոր գիտելիքների ուսումնասիրումը և նախնական ամրապնդումը:

2. Գիտելիքների ամրապնդման դաս

Այս դասերի մեջ ներառվում են գործնական աշխատանք, էքսկուրսիա, զրույց: Դասերի նպատակն է գիտելիքների կիրառման կարողությունների մշակումը:

3. Գիտելիքների համակողմանի կիրառման դասեր

Այս դասերը ներառում են գործնական աշխատանք, սեմինար: Դասերի նպատակն է նոր պայմաններում գիտելիքների ինքնուրույն կիրառման կարողությունների մշակումը:

4. Գիտելիքների ընդհանրացման և համակարգման դասեր

Այս դասերը ներառում են սեմինար, կլոր սեղան և այլն: Դասերի նպատակն է գիտելիքների համակարգումը և իմաստավորումը:

5. Գիտելիքների ստուգման, գնահատման և շտկման դասեր

Այս դասերը ներառում են ստուգիչ աշխատանքներ, թեմատիկ գրավոր աշխատանքներ, բանավոր հարցումներ և այլն: Դասերի նպատակն է որոշել և գնահատել գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակը:

1.11. ԻՆՇՂ ԱՆԵԼ, ՈՐՊԵՍՁԻ ԴԱՍԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՋԻՆԻ ՈՉ ՄԻԱՅՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՎ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ, ԱՅԼԵՎ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՅՆԻ ԵՐԵՆԱՆԵՐԻ ՄԵՋ

Իսկապես, ուսուցչին հուզող խնդիրներից մեկն այն է, թե ինչպես զարգացնել երեխայի կայուն ճանաչողական հետաքրքրությունը դասի, ուսման, գիտելիքների և ինքնուրույն որոնողական գործունեություն կատարելու պահանջմունքի նկատմամբ: Երեխային պետք է դուր գա իր գործունեությունը: Միօրինակ դասերը, երբ չորս տարի շարունակ անփոփոխ է մնում դրանց կառուցվածքը՝ տնային աշխատանքի ստուգում, ուսումնասիրած նյութի հարցում, ապա՝ նոր նյութի հաղորդում, ամրապնդում և

նորից տնային աշխատանքի հանձնարարում, աստիճանաբար դառնում են ձանձրալի:

Սրանից խուսափել կարելի է՝ ստեղծելով բավարար պայմաններ բոլոր սովորողների համար՝ նրանց ուսումնառության առանձնահատկություններին համապատասխան: Այդպիսի պայմաններ կարելի է ստեղծել՝ անցկացնելով ոչ ստանդարտ դասեր:

Ոչ ստանդարտ դասը ուսուցչի ստեղծագործաբար մոտեցումն է ուսումնական պարապմունքին, որն ունի ոչ ստանդարտ կառուցվածք: Ոչ ստանդարտ ձևերը կարելի է դիտարկել որպես ակտիվ ուսուցման ձևեր:

Առանձնացվում են ոչ ստանդարտ դասերի մի քանի տասնյակ տիպեր.

1. Դաս-հեքիաթ
2. Դաս-խաղ
3. Դաս-մրցույթ
4. Դաս-ցերեկույթ
5. Ստեղծագործական դաս
6. Դաս-ձանապարհորդություն
7. Դաս-հետազոտություն
8. Դաս-էքսկուրսիա
9. Դաս՝ «Ուրախների, հնարամիտների, նախաձեռնողների ակումբի» ձևով
10. Թատերականացված դաս
11. Դաս-գիտաժողով
12. Համակարգչային դաս
13. Դաս՝ խմբային աշխատանքի ձևով
14. Փոխուսուցման դաս
15. Դաս-աճուրդ
16. Դաս, որը պետք է վարեն աշակերտները
17. Դաս-ստուգարք
18. Դաս-ստեղծագործական հաշվետվություն
19. Դաս-երևակայություն

20. Դաս–համերգ
21. Դաս–երկխոսություն
22. Դաս–գործնական խաղ
23. Դաս՝ «Ետաքննությունը վարում են գիտակաները»
24. Դաս–գիտաժողով
25. Դաս–սեմինար
26. Ինտեգրված դաս՝ երկու ուսուցչի մասնակցությամբ
27. Դաս–խաղ «Հրաշքների դաշտ»
28. Դաս–նախագիծ
29. Դաս–բանավեճ
30. Դաս–հեռուստահաղորդում
31. Իմաստնության դասեր
32. Դաս–դատաժամ
33. Դաս–անակնկալ
34. Դաս–հեռուստակամուրջ
35. Դաս– ասուլիս
36. Դաս–կենդանի մատյան

Պետք է ավելացնել նաև, որ ոչ ստանդարտ դասերն արդյունավետ են միայն այն դեպքում, երբ ուսուցիչը ճշգրտորեն որոշում է դրա տեղն ուսումնական գործընթացում և բժախնդրորեն է ընտրում այն ուսումնական նյութը, որի ուսումնասիրումը, ամրապնդումը, համակարգումը, ստուգումն ու գնահատումը կարելի է կազմակերպել ոչ ստանդարտ դասերի ընթացքում:

Դասի նկատմամբ հետաքրքրություն առաջացնել կարելի է նաև դասի ընթացքում տարբեր «հետաքրքիր իրավիճակներ» ստեղծելու միջոցով: Այդպիսի իրավիճակներից են.

- աշակերտների համար անսպասելի իրավիճակի ստեղծումը,
- հետաքրքրության խթանումը նոր նյութի ուսումնասիրման ընթացքում. այս դեպքում հետաքրքրությունը կրում է ավելի գործունեա-

կան բնույթ, երբ նոր նյութի իմաստավորումը պահանջում է աշակերտի ակտիվ գործունեությունը,

- երեխաների արդեն ունեցած հետաքրքրությունների արդիականացումը,
- այնպիսի իրավիճակների ստեղծումը, որոնք կապված են աշակերտի անձի կամ նրա կենսավորձի հետ,
- աշակերտին ինքնուրույն առաջադրանք ընտրելու հնարավորության ընձեռումը,
- ճանաչողական խաղերի կազմակերպումը, որոնց կիրառումը բավականին խթանում է հետաքրքրությունն ուսման նկատմամբ,
- ուսումնառության ընթացքում հաջողության իրավիճակի ստեղծումը, քանի որ առանց դրա հնարավոր չէ իրապես ապահովել հետագա հաջողություններն ուսումնական դժվարությունները հաղթահարելու ճանապարհին:

1.12. ԴԱՍԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՆՉՊԵՍ ԱՆՅԿԱՑՆԵԼ ՖԻԶԿՈՒԼՏՐՈՊԵՆԵՐՆ ՈՒ ՖԻԶԿՈՒԼՏԴԱԴԱՐՆԵՐԸ

Դասը սովորողների ուսումնական աշխատանքի հիմնական ձևն է: Բնականաբար, դպրոցականի և՛ հոգեբանական, և՛ ֆիզիկական վիճակն ուղղակիորեն կախված է դասի գրագետ կառուցվածքից:

Կ. Դ. Ուշինսկին առաջինն է խորհուրդ տվել հոգնածության և աշխատունակության նվազման դեպքում դասի ընթացքում կիրառել ֆիզիկական վարժություններ: Նա համարում էր, որ ֆիզիկական վարժությունների վրա դասից 2–3 րոպե ծախսելը բավական բարձրացնում է ուսուցման նյութի յուրացման արդյունավետությունը:

Խնդիրներն են՝

1. Նվազեցնել հոգնածությունը և կանխել մարմնի նույն դիրքի վրա ազդող գործոնները:
2. Ակտիվացնել սովորողների ուշադրությունը և բարձրացնել ուսումնական նյութի ընկալման կարողությունները:

Դասի տարբեր փուլերի որոշակի հաջորդականությունը ենթադրում է սովորողների օրգանիզմի գործառական վիճակի և նրա աշխատունակության դինամիկ փոփոխություններ:

I փուլը (մշակման) համընկնում է կազմակերպչական փուլին (մինչև 5–7 րոպե) և բնութագրվում է գործառական այնպիսի փոփոխությունների ծագումով, ինչպիսիք են գործողությունների անհամաձայնությունը, ուշադրության բացակայությունը (ուսուցչի գործողությունները պետք է նպաստեն դարձնել արդյունավետ հարմարեցմանը կատարվելիք ուսումնական գործունեությանը):

II փուլը (առավելագույն աշխատունակության) ներառում է դասի առավել դժվար փուլերը (1–4–րդ դասարանների սովորողների ակտիվ ուշադրության պահպանման երկարատևությունը և աշխատունակությունը, դասի սկզբից սկսած, չի գերազանցում մինչև 15 րոպե):

III փուլը (ցածր աշխատունակության) համընկնում է ստացած գիտելիքների ամրապնդման փուլի հետ (դասը սկսվելուց 25 րոպե հետո երեխաների աշխատունակության մակարդակը, աշխատանքի որակն ու տեմպը նվազում են, փոփոխվում է շարժողական ակտիվությունը, մարում է հետաքրքրությունը, երեխաների ուշադրության շեղումը դառնում է շատ ավելի արտահայտիչ):

Յուրաքանչյուր էտապի սկսվելու և տևողության վրա ազդում են զանազան գործոններ՝ կախված՝

- ա) սովորողների տարիքից, նրանց ընդհանուր զգայական տրամադրվածությունից,
- բ) օրվա ժամանակից և ուսումնական օրվա դասերի քանակից,
- գ) կատարվող աշխատանքի բնույթից և տևողությունից, ուսումնական գործունեության տարբեր տեսակների հաջորդականությունից,
- դ) ուսումնական նյութի բարդությունից,
- ե) դասի ստատիկ և դինամիկ բաղադրիչներից:

Բոլոր դասերը պետք է ներառեն ֆիզկուլտրոպեններ (1–2 ռոպե) և ֆիզկուլտդադարներ (3–4 ռոպե)՝ ուշադրության, մտավոր աշխատունակության և զգայական տրամադրվածության զարգացման համար: Բացի դրանից՝ դրանք օգնում են նվազեցնելու ողնաշարի բեռնվածությունը և կանխելու կեցվածքի հնարավոր շեղումները:

Ֆիզկուլտ–առողջարարական պարապմունքները դասարանում անցկացվում են այն պահերին, երբ երեխաները հոգնում են՝ բացառությամբ ստուգողական աշխատանքների, գործնական աշխատանքների:

Ֆիզկուլտ–առողջարարական պարապմունքների անցկացման պահը որոշում է ուսուցիչը: Ցանկալի է բացել օդանցքը, թուլացնել նեղ հագուստը (գոտի, կոճակ), վարժությունները կատարել նստարանին նստած կամ կողքին կանգնած: Վարժությունների համակարգը կազմված է 4–6 վարժություններից, որոնք կրկնվում են 4–6 անգամ:

Բոլոր վարժությունները պետք է լինեն պարզ, հաշվի առնեն նախորդ աշխատանքի բնույթը: Այսպես՝ գրավոր աշխատանքը պահանջում է ափի մկանների վարժություններ (մատների ծալում–բացում, մատների և ձեռքերի թափահարումներ, պտտումներ, մատների կտտոցներ), երկար նստելու դեպքում մեջքի մկանային վարժություններ (ողնաշարի ձգում, ձկում, քայլք) շնչառական վարժությունների հետ համատեղ:

Ուսումնական գործունեության ընթացքում՝ մեկ կամ մի քանի դասերի ժամանակ, դժվար է անընդհատ պահպանել ակտիվ ուշադրությունը: Այն հոգեբանորեն արդարացված է գլխուղեղի, նյարդերի լարման առումով:

Տարրական դասարանների սովորողների հոգնածությունը, կեցվածքի շեղումները և տեսողության վատթարացումը կանխարգելելու նպատակով անցկացվում են ֆիզկուլտրոպեններ և դադարներ, ինչպես նաև վարժություններ աչքերի համար: Սա բավականին արդիական է, քանի որ ներկա պահին նշմարվում է ֆիզիկական անգործություն, շարժողական ակտիվության բացակայություն, որը վնասակար է հատկապես տարրական դասարանների աշակերտների համար:

Ֆիզկուլտրոպեաների անցկացումը կարելի է կատարել զանազան տարբերակներով՝ նստած, կանգնած՝ շրջանաձև կամ շարքով, եթե դրա հնարավորությունն ընձեռում է դասասանյակը:

Նպատակահարմար է կիրառել ֆիզկուլտրոպեաների տարբեր ձևեր (ընդհանուր զարգացնող վարժությունների համակարգեր, խաղային առաջադրանքներ, պարային շարժումներ և այլն):

Ֆիզկուլտրոպեաների համակարգը ընտրվում է՝ հաշվի առնելով դասի տեսակը, բովանդակությունը:

Վարժությունները պետք է լինեն տարաբնույթ, քանի որ միօրինակությունը նվազեցնում է հետաքրքրությունը դրանց նկատմամբ, հետևաբար նվազում է նաև արդյունավետությունը:

Յուրաքանչյուր դասի ընթացքում անհրաժեշտ է անցկացնել ֆիզկուլտրոպեաներ մոտավորապես դասի 10–րդ և 20–րդ րոպեներին և երկու ֆիզկուլտղադար՝ մեկը՝ դանդաղ, մյուսը՝ միջին տեմպով:

Տանը սովորողները կրկնում են իրենց արդեն ծանոթ ֆիզկուլտրոպեաների վարժությունները տնային աշխատանքների կատարման ընթացքում, համակարգչով աշխատելիս, գրքերի ընթերցման ժամանակ և հեռուստացույց դիտելիս:

Ֆիզկուլտրոպեաների ընթացքում սովորաբար կիրառվում է ոչ պակաս, քան երեք վարժություն:

Առաջին ձգումներ, որոնք ազդում են ողնաշարի և կրծքային ողերի վրա, երկրորդ՝ ոտքերի և երրորդ՝ իրանի վրա: Ձեռքերի համար վարժություններն առանձին չեն անցկացվում. դրանք անհրաժեշտ է համակցել մյուս վարժություններին:

Երեխաները պետք է լավ հասկանան ֆիզկուլտղադարների նշանակությունը և գիտակցաբար կատարեն դրանցում ներառված վարժությունները: Ուսուցիչը երեխաների հետ անցկացնում է համառոտ զրույց, պարզաբանում է վարժությունների նշանակությունը և ֆիզկուլտրոպեաների անցկացման կարգը:

Բոլոր ֆիզիկական վարժությունների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել օդափոխության ռեժիմը:

Պարային–ռիթմիկ ֆիզկուլտրոպենները նպատակահարմար է անցկացնել հանրահայտ մանկական երգի հնչյունների ներքո: Ֆիզկուլտրոպենների անցկացման այս ձևը բարձրացնում է զգայական տրամադրվածությունը և նպաստում սովորողների արտահայտիչ շարժողունակության զարգացմանը:

Ֆիզկուլտ–սպորտային դադարը նպատակաուղղված է որոշակի խմբի մկանների մարզմանը (վազք, թռիչք, կքանստում, քայլք և այլն):

Շարժողական–խոսքային ֆիզկուլտրոպենները ենթադրում են շարժողական վարժությունների խոսքային ուղեկցում: Շարժողական–խոսքային թույլների նախապատրաստումը զարգացնում հենց իր՝ ուսուցչի ստեղծագործական կարողությունները և նպաստում աշակերտների հետաքրքրության զարգացմանը այս կամ այն ուսումնական առարկայի նկատմամբ:

Վարժությունների կատարումը պետք է լինի ճշգրիտ, գեղեցիկ, համապատասխանի շնչառական ռիթմին:

Ֆիզկուլտրոպենների անցկացումը չպետք է բացասական ազդի դասի կառուցվածքի վրա: Այդ պատճառով այն անհրաժեշտ է անցկացնել ուսումնական պարապմունքի հետ կապված որևէ գործընթացի ավարտից հետո:

Ֆիզկուլտրոպեի սկիզբն ազդարարում է ուսուցիչը որևէ ազդանշանի միջոցով: Վարժությունը ցուցադրելու համար նա կարող է ընդգրկել առավել պատրաստ աշակերտներին: Եթե նրանք վարժությունների համակարգը լավ են յուրացրել, կարող են կատարել նաև ինքնուրույն՝ ուսուցչի վերահսկողությամբ:

Ֆիզկուլտրոպենների կազմակերպումն ու անցկացումն իրականացվում են հետևյալ կերպ:

Ուսուցչի ազդանշանից հետո սովորողները դադարեցնում են ուսումնական գործունեությունը և ընդունում ելման դիրք: Այնուհետև սկսում են կատարել հաշվի կամ երաժշտության ներքո:

Շաբաթվա ընթացքում հարմար է կիրառել ֆիզիկական վարժությունների 2 համակարգ: Համակարգը խորհուրդ է տրվում փոխել ամսվա մեջ

1 անգամ: Խոսքերն արտասանում է ուսուցիչը, իսկ երեխաները կրկնում են վերջին վանկերը կամ կարճ բառերը՝ հո՛ւպ-հո՛ւպ, ծա՛փ-ծա՛փ և այլն: Խոսքի տոնը պետք է աշխույժ լինի:

**1.13. ԱՆՇՈՒՇՏ, ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԴԱՍԻՑ ՀԵՏՈ ԲՈԼՈՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՆ ԷԼ ԽՈՐՀՈՒՄ ԵՆ ԴԱՍԻ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:
ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ Է ԴԱՍԸ ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ՁԵՎՈՎ
ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՄԱՆ ԵՆԹԱՐԿԵԼ**

Դասի որակն ու արդյունավետությունը մեծ մասամբ կախված են ուսուցչի՝ իր հաջողություններն ու սխալները վերլուծելու կարողությունից: Չէ՞ որ մանկավարժական գործունեության կարևոր բաղադրիչներից է իր ուսումնական պարապմունքի, տվյալ դեպքում՝ դասի վերլուծությունն ու ինքնագնահատումը:

Սեփական աշխատանքի վերլուծությունը մասնագիտական որակների բարձրացման արդյունավետության չափանիշներից է: Վերլուծությունն անհրաժեշտ է անցկացնել անմիջապես անցկացված դասից հետո և մինչև հաջորդ դասի սկիզբը, այսինքն, երբ արդեն պատրաստ է դասի պլանը:

Այս դեպքում ուսուցիչը խորհում է, թե արդյոք դասի նախապատրաստման ընթացքում ինքը հաշվի առե՞լ է նախորդ դասի վերլուծության ընթացքում ստացած արդյունքները: Ինքնավերլուծությունը հիմնվում է արդեն անցկացված դասի վրա, երբ ուսուցիչը վերլուծում է պլանը, տեսնում, թե ինչն է իրեն հաջողվել, և ինչը՝ ոչ: Ձգտում է գտնելու անհաջողության պատճառները և ամրապնդելու այն, ինչը հաջողվել է: Ստորև ներկայացնում ենք անցկացված դասի ինքնավերլուծության քայլաշարի մի նմուշօրինակ.

1. Ի՞նչ չափորոշչային ու ծրագրային պահանջներ եմ իրականացրել դասի ընթացքում:

2. Ինչպե՞ս հաշվի առա դասանյութի կապը թեմատիկ խմբում ընդգրկված մյուս դասանյութերի հետ:

3. Ինչպե՞ս հաշվի առա սովորողների (ուժեղ, թույլ) ուսումնառության առանձնահատկությունները:

4. Ինչպե՞ս որոշեցի դասի խնդիրները՝ նպատակին հասնելու համար:

5. Ինչպե՞ս եմ պլանավորել սովորողների գործունեությունը:

6. Ճի՞շտ են արդյոք ընտրված ուսումնական նյութերը:

7. Արդարացրի՞ն արդոք իրենց իմ ընտրած հնարներն ու մեթոդները, եթե ոչ, ապա ինչո՞ւ:

8. Արդարացրի՞ն արդյոք իրենց կիրառված գննական միջոցները և տեխնիկական միջոցները, եթե ոչ, ապա ինչո՞ւ:

9. Ի՞նչը նպաստեց զարգացնելու սովորողների ճանաչողական ունակությունները:

10. Ո՞րն է սովորողների ինքնուրույն աշխատանքի մանկավարժական արժեքը:

11. Ի՞նչ տվեց դասը սովորողների աշխարհայացքի ձևավորման, նրա անձնային որակների, կամքի, բնավորության, վարքագծի ձևավորման համար:

12. Ինչպե՞ս էի տեսնում դասի ընթացքը, և ինչպե՞ս այն անցավ:

13. Ի՞նչ դժվարություններ ծագեցին ամբողջ դասարանում, առանձին աշակերտների մեջ: Ինչպե՞ս դրանք հաղթահարեցի: Որո՞նք էին դրանց ծագման պատճառները և հաղթահարման ուղիները:

14. Հասա՞ արդյոք դասի նպատակներին և իրականացրի՞ արդյոք առաջադրված խնդիրները:

15. Դասի արդյունավետության գնահատականը:

16. Դասի ինքնագնահատականը:

17. Դասի կատարելագործման ուղիները:

ԹԵՄԱ 2. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ

2.1. ԻՆՉ ԲՆՈՒՅԹԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՐԵԼԻ Է ԱՌԱՋԱԴՐԵԼ ԵՐԵԽԱՆՆԵՐԻՆ՝ ՏԵՔՍՏԻ ԼԻԱՐԺԵՔ ՅՈՒՐԱՅՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Տեքստի շուրջ տրվող ստեղծագործական աշխատանքն ուսումնական գործունեության այնպիսի ձև է, որը կազմակերպվում է ուսուցչի ղեկավարությամբ, և որի ընթացքում սովորողները ստեղծագործաբար կատարում են տարբեր տեսակի առաջադրանքներ՝ տեքստի լիարժեք յուրացման նպատակով:

Այս նպատակի համար կարելի է առաջադրել բազմատեսակ ստեղծագործական աշխատանքներ: Դրանք կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. Գործնական բնույթի ստեղծագործական աշխատանքներ

- Աշխատանք տեքստի նկարագարողման շուրջ: Այդ աշխատանքները կատարվում են հետևյալ կերպ.

ա) Դասագրքերում՝ տեքստերի շուրջ զետեղված նկարների մեծ մասն ունի սյուժետային բնույթ: Դրանցում պատկերված են ստեղծագործությունների տարբեր դրվագները: Լավ կլինի, որ ուսուցիչն անցում կատարի տեքստից դեպի նկարագարողումը և հենվելով տեքստի բովանդակության վրա՝ առաջարկի աշակերտներին պարզել, թե նկարը և տեքստի տվյալ հատվածը որքանով են իրար համապատասխանում:

բ) Կարելի է առաջարկել երեխաներին՝ ուշադիր դիտելով տեքստի նկարագարողումը՝ գրել շարադրություն «Ի՞նչ է զգում հերոսը տվյալ պահին» թեմայով:

զ) Առաջարկել ներկայացնել տեքստի բովանդակության պատկերազարդումը ոչ թե այն նկարելով, այլ ուղղակի նկարագրելով, թե ինչ կա նկարում:

դ) Առաջարկել ստեղծել իրենց անհատական նկարազարդումները տեքստի այս կամ այն հատվածի վերաբերյալ:

• **Ստեղծած նկարների վերաբերյալ կարծիքի արտահայտում:**

Սա ստեղծագործական աշխատանքի առավել դժվար, բայց և այնպես հետաքրքիր տեսակ է: Այն կարելի է կատարել հետևյալ կերպ.

• Յուրաքանչյուր աշակերտ տեքստի վերլուծությունից հետո ստեղծում է իր նկարազարդումը:

• Աշակերտները փոխանակում են իրենց նկարազարդումները:

• Յուրաքանչյուր աշակերտ, ստանալով իր ընկերոջ նկարը, դիտում է այն, ապա նորից վերընթերցելով տեքստը՝ փորձում է գտնել այն դրվագը, որը նկարազարդված է: Գտնելով այն՝ աշակերտը նկարազարդման տակ գրում է տվյալ նկարի բովանդակությունը՝ տեքստի բառերով:

• Նկարազարդումը համեմատելով տեքստի տվյալ հատվածի հետ՝ աշակերտը գրում է կարծիք, որտեղ արտահայտում է այն միտքը, թե տվյալ նկարը համապատասխանում է արդյոք տեքստի բովանդակությանը, նշում է կատարված աշխատանքի որակը, ամրացնում է նկարազարդմանը և ստորագրում է:

• **Ստեղծագործության շուրջ նկարաչարի կազմում**

Ընթերցած ստեղծագործության շուրջ կարելի է կազմել նկարաչար՝ հետևյալ կերպ.

- որոշել նկարաչարի նկարների քանակը,
- մտածել՝ տեքստի որ բառերը կարող են համապատասխանել տվյալ դրվագի հետ,
- ընթերցած ստեղծագործության նյութի վերաբերյալ ինքնուրույն ստեղծել բովանդակությամբ իրար հետ կապված նկարների շարք:

Թուղթը նախապես են պատրաստում: Պատրաստի նկարաշարը փակցնում են պաստառին:

• **Ապլիկացիա և ծեփային աշխատանք**

Ստեղծագործական աշխատանքի այս տեսակն առավելապես կիրառվում է առաջին և երկրորդ դասարաններում: Երեխաները կերտում են տեքստի առարկաները, հերոսներին, հետո միավորելով՝ ստանում են մեկ ամբողջական աշխատանք:

• **Մոդելավորում**

Սա կատարվում է պայմանական նշանների, սխեմատիկ պլանների և մոդելների կազմման միջոցով: Այս ձևով մոդելավորումը հնարավորություն է ընձեռում՝

- աշակերտներին՝ աշխատելու իրենց կարողություններին համապատասխան,
- ընթերցողական կարողությունների յուրացման ընթացքում ստեղծել խաղային իրավիճակ:

• **Ինքնաշեն գրքերի ստեղծում**

Երեխաների համար ամենահետաքրքիր առաջադրանքներից մեկն ինքնաշեն գրքերի ստեղծումն է, որոնք նրանք պատրաստում են ստեղծագործական մտահղացմամբ և երևակայությամբ: Այդ գրքերում կարող են զետեղել հետևյալ բնույթի աշխատանքներ.

- Պատկերացնել և շարադրել հերոսների վարքագիծն այլ պայմաններում կամ մի քանի տարի անց, կամ թե ինչ կլինեք, եթե հերոսների հետ այս կամ այն դեպքը տեղի չունենար:
- Վերաշարադրել տեքստը տարբեր հերոսների անունից: Սովորողները կարող են նույնիսկ երևակայել: Չէ՞ որ տեքստը չի կարող ամբողջական տեղեկատվություն տալ այս կամ այն հերոսի վարքագծի, ապրելակերպի, զգացմունքների մասին:
- Գրել շարադրություն սիրելի հերոսի մասին:

2. Խոսքային գործունեության ստեղծագործական բնույթի աշխատանքներ

- **Տեքստի շուրջ հարցերի և թեստերի կազմում**

Առաջին դասարանից սկսած՝ երեխաները պետք է սովորեն ոչ միայն գրագետ պատասխանել հարցերին, այլև կազմել հարցեր՝ տրված տեքստի շուրջ: Այս աշխատանքը նպաստում է գլխավորը երկրորդականից տարբերելու կարողությունների ձևավորմանը: Երեխաները կարող են կազմել այնպիսի հարցեր, որոնք ենթադրում են ն' մանրամասն, ն' կոնկրետ (այո, ոչ) պատասխաններ:

- Արդեն 4–րդ դասարանում երեխաներին դուր է գալիս կազմել թեստ ընթերցած ստեղծագործության վերաբերյալ, որտեղ պետք է երեք պատասխաններից ընտրել մեկ ճիշտը:

- **Տեքստի ստեղծագործաբար վերարտադրություն**

Ստեղծագործաբար վերարտադրելու նպատակն է ընթերցած ստեղծագործության նկատմամբ աշակերտների մեջ առաջացնել զգայական արձագանք, օգնել նրանց խորությամբ հասկանալու տեքստի իմաստը, հերոսի հետ ապրելու այն զգացմունքները, որոնք հեղինակը նկարագրել է տեքստում: Ստեղծագործաբար վերարտադրելու համար ընտրվում են այն ստեղծագործությունները, որոնք հնարավորություն են ընձեռում ընթերցողին իրեն պատկերացնելու գրական հերոսի դերում, հասկանալու նրա հոգեկան վիճակը, հերոսի աչքերով նայելու այն մարդկանց և այն իրադարձություններին, որոնց մասին խոսվում է ստեղծագործության մեջ: Ստեղծագործաբար վերարտադրելու համար աշակերտներից պահանջվում է երևակայական մտածողություն այն պատկերացումների հիման վրա, որոնք ստացել է տեքստի ընթերցանության և վերլուծության ընթացքում: **Ստեղծագործաբար կարելի է վերարտադրել ըստ փոփոխված պլանի կամ փոխելով ստեղծագործությունը պատմողի դեմքը** (օրինակ՝ պատմել որպես մասնակից կամ որպես ականատես, ինչպես՝ «Պատմիր այնպես, կարծես դու ես պատմվածքի հերոսը»):

Կրտսեր դպրոցականին սովորեցնել պարզ և հստակ շարադրել սեփական մտքերը, համապատասխան բառերով արտահայտել իր հույզերն ու ապրումները, դրսևորել խոսքի մշակույթ և, ընդհանրապես, հաղորդակցվել. սա բարդ ու դժվարին գործընթաց է, որն ուսուցչից պահանջում է մեծ ջանքեր, լարված ու հետևողական աշխատանք և, որ ամենակարևորն է, արդյունավետ միջոցներ ու մեթոդներ: Տեքստի ստեղծագործաբար վերարտադրումը կօգնի գրական տեքստի լիարժեք ընկալմանը, կզարգացնի սովորողների ստեղծագործական կարողությունները:

- **Ստեղծագործության շարունակում**

Ընթերցած ստեղծագործությունը երբեմն կարող է խթան հանդիսանալ երեխաների ինքնուրույն ստեղծագործական գործունեության համար. նրանք կմտածեն ընթերցած ստեղծագործության շարունակությունը, այսինքն՝ ավարտը: Դա կարող է լինել և՛ հեքիաթ, և՛ պատմվածք, և՛ նույնիսկ բանաստեղծություն: Անկասկած, ոչ բոլոր ստեղծագործություններն է հնարավոր շարունակել:

- **Ստեղծագործական շարադրություն**

Ստեղծագործական շարադրությունները գրելիս երեխաները մեկ անգամ ևս խորամուխ են լինում ընթերցանության մեջ և հատուկ ուղիով վերլուծում են գրական ստեղծագործությունը. նրանք պետք է փորձեն լուծել խնդիրը, որն իր բնույթով մոտ է ստեղծագործության միջոցով հեղինակի լուծած խնդրին :

Ստեղծագործական շարադրությունները բարձրացնում են հետաքրքրությունը տեքստի ընթերցանության և վերլուծության նկատմամբ, զարգացնում երեխաների դիտողունակությունը, նրանց ուշադրությունը կենտրոնացվում է գրական ստեղծագործության այնպիսի կողմերի վրա, որոնք մինչ այդ նա չի նկատել: Շարադրությունները երեխաներն իրենց ցանկությամբ կարող են նաև ձևավորել, նկարագարողել:

- Ստեղծագործական աշխատանքի արդյունավետ տեսակներից մեկն էլ **տեքստի բովանդակության պլանի** կազմումն է: Ամենատարածված տեսակն ընթերցվող տեքստի շուրջ սովորական նկարային պլանի կառուցումն է: Հնարավոր է նաև հակառակ հաջորդականությունը՝ տեքստի ընթերցում՝ ըստ ուսուցչի տված

պլանի, որը նախապես գրված է գրատախտակին: Պլանի շուրջ կատարվող աշխատանքը օգնում է ընթերցածի բովանդակությունը վերարտադրելու իմաստավորված և ոչ թե մեխանիկորեն: Չէ՞ որ պլան կազմելով՝ աշակերտը կատարում է ընթերցած նյութի իմաստային խմբավորում և այն կիրառում որպես մտապահման հնար: Աշակերտները սովորում են ընթերցվող տեքստի տարբեր մասերի միջև փնտրել ներքին կապեր ու փոխհարաբերություններ, միավորել դրանք մեկ ամբողջության մեջ:

• **Կարծիք-տեսակետի հայտնում**

Շարադրության տեսակներից մեկը, որը հնարավորություն է ընձեռում սովորեցնելու երեխային արտահատել իր սեփական տեսակետը ընթերցած ստեղծագործության վերաբերյալ, դրա մասին կարծիք գրելն է: Դրա միջոցով աշակերտը կարող է ոչ միայն գնահատական տալ ընթերցած ստեղծագործությանը, այլև խորությամբ յուրացնել դրա իմաստը:

Ընդ որում՝ աշակերտը կարող է՝

1. ներկայացնել հերոսին և արտահայտել իր վերաբերմունքը ստեղծագործության նկատմամբ,
2. համառոտ վերարտադրել ստեղծագործության սյուժեն՝ իրադարձություններին տալով զգայական գնահատական,
3. բնութագրել հերոսին և արտահայտել իր վերաբերմունքը նրա հանդեպ:

• **Աշխատանք ընթերցողի օրագրում**

Երրորդ դասարանից սկսած՝ սովորողները «Ընթերցողի օրագրում» գրառումներ են կատարում ընթերցած ստեղծագործությունների վերաբերյալ: Սովորողները գրում են հեղինակի ազգանունը և ստեղծագործության վերնագիրը, գլխավոր հերոսների անունները: Ցանկալի է, որ լինեն նկարագարողումներ՝ համապատասխան մակագրություններով: Աշակերտները կարող են դուրս գրել ստեղծագործության մեջ գործածված հետաքրքիր մտքերը, արտահայտությունները: Դրանք իրենց բովանդակությամբ և ձևա-

վորմամբ հիշեցնում են «Հրաշք տեսրերը», որոնք հաջողությամբ կիրառել են ուսուցիչներից շատերը:

- **Սեղմագիր**

Գրական ստեղծագործության վերաբերյալ սեղմագրից կարելի է իմանալ, թե ինչի մասին է խոսվում տեքստում, քանի որ սեղմագիրը տեքստի բովանդակության հակիրճ շարադրանքն է: Սեղմագիր գրելու համար երեխաներին պետք է սովորեցնել, որ այն կարող է սկսվել հետևյալ կերպ.

Այս ստեղծագործության մեջ պատմվում է այն մասին, որ ...

Այս պատմվածքը.....

Հեղինակ ... պատմում է, որ...

Այս ստեղծագործության գլխավոր հերոսը ...

Ջարմանահրաշ իրադարձությունները կատարվում են ... և այլն:

- **«Գրի՛ր նամակ»**

Սովորողները պետք է ստեղծագործության հերոսի անունից նամակ գրեն որևէ մեկին:

3. Խաղային բնույթի ստեղծագործական աշխատանքներ

Դիդակտիկ խաղերը, ինչպես պնդում են հոգեբանները, խաղային գործունեության գլուխգործոցներ են: Դրանք միշտ հետաքրքրել են երեխաներին: Այդ ընթացքում երեխաները ցուցաբերել են իմացական և զգայական ակտիվություն: Խաղային գործունեությունը խթանել է նրանց երևակայությունը, մտածողությունը, խոսքը, զգացմունքները: Բացի դրանից՝ խաղային իրավիճակը նպաստում է, որ մասնակիցները հաղորդակցվեն և ակտիվորեն համագործակցեն միմյանց հետ: Խաղի մեջ յուրաքանչյուր մասնակից ունի իր «դերը» և ամբողջովին պատասխանատվություն է կրում դրա համար: Սա է խաղի դաստիարակչական նշանակությունը:

- **Խաչբառերի կազմում**

Ստեղծագործական աշխատանքի առավել արդյունավետ տեսակ է ընթերցած տեքստի բառահումքի շուրջ խաչբառերի կազմումը:

Այն նպաստում է երեխաների՝ ընթերցանության նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը, զարգացնում է նրանց դիտողունակությունը, հարստացնում է բառապաշարը և նպաստում տեքստի լիարժեք ընկալմանը:

- **Վիկտորինաների կազմում**

- Ընթերցած ստեղծագործության շուրջ վիկտորինաների կազմումը նպաստում է, որ աշակերտները ստեղծագործության բովանդակության նկատմամբ լինեն առավել ուշադիր և դառնան խոհուն ընթերցող: Այս աշխատանքը երեխաներին դուր է գալիս, և նրանք ձգտում են ստեղծագործություններն ընթերցելու, որքան հնարավոր է ուշադիր, որպեսզի վիկտորինաների մեջ ընդգրկեն առավել բարդ հարցեր, իսկ ընկերների կազմած վիկտորինաների հարցերին կարողանան պատասխանել:

- **Թատերական բեմականացում**

Ստեղծագործական բնույթի աշխատանքի այս տեսակը պետք է առանձնացնել որպես առավել կարևոր ցուցադրական միջոց, ընդ որում՝ այն պետք է իրականացվի բոլոր դասարաններում: Թատերական ներկայացման շնորհիվ ստեղծագործության բոլոր կերպարները հանդես են գալիս համապատասխան գործողություններով: Ներկայացումները կարելի է անցկացնել՝

- ա) միայն բառերի միջոցով, այսինքն՝ դերերով ընթերցանության և բեմադրության ձևերով,
- բ) միայն մնչախաղի միջոցով,
- գ) բառերի և մնչախաղի զուգակցմամբ:

Երեխաներին առաջադրվում է պատկերացնել հրաշալի հեքիաթային տեսարան, երևակայության միջոցով ցուցադրել հեքիաթի հերոսների գործողությունները, ներկայացնել նրանց բնավորությունը և տրամադրությունը քայլվածքի, դիմախաղի, ձայնի և այլնի միջոցով: Դերային խաղերի ընթացքում պահանջվում է դերային կերպարանափոխություն և ներթափանցում ստեղծագործության հերոսի կերպարի մեջ: Ձևավորվում է պատասխանատվություն ընդհանուր գործի նկատմամբ: Հնարա-

վորություն է ստեղծվում յուրաքանչյուր աշակերտի տրամադրելու իր հոգուն և ուժերին հարազատ ստեղծագործական աշխատանք:

- **Ստեղծագործության վերաբերյալ գովազդի, հեքիաթային հայտարարությունների ստեղծում**

Ստեղծագործական աշխատանքում շատ կարևորվում է ստեղծագործական երևակայության առկայությունը, առանց որի երբեմն հնարավոր չէ ստեղծել նորը: Ստեղծագործական ակտիվության համար մեծ նշանակություն ունեն խաղային պահերը, որոնք հետաքրքրություն են մտցնում ստեղծագործական գործընթացում:

Խաղի մի տեսակ է ստեղծագործության վերաբերյալ գովազդային վահանակի ստեղծումը, որը կարելի է անցկացնել մրցույթի ձևով (ո՞ւմ գովազդն է ամենատպավորիչը):

Հետաքրքիր և խաղարկային ստեղծագործական աշխատանք է նաև հեքիաթային հայտարարությունների, նամակների և հեռագրերի կազմումը: Այսպես՝ ուսուցիչը կարող է հարցնել, թե՛ ի՞նչ եք կարծում, ի՞նչ հայտարարություն կարող է տալ Բուրատինոն, Քաջ Նազարը, Անահիտը, բժիշկ Այբոլիտը, Փոքրիկ Իշխանը, Վիննի Թուխը և այլն, կամ կարող է հարցնել, թե ով է տվել այս կամ այն հեռագիրը: Սա չափազանց կարևոր ստեղծագործական աշխատանք է, քանի որ երեխայից պահանջվում է գրական ստեղծագործության բովանդակության առավել խոր ընկալում:

4. Ստեղծագործական բնույթի գրական խաղեր

Գրական ստեղծագործության լիարժեք ընկալմանն ու ստեղծագործական երևակայության զարգացմանը նպաստում են նաև գրական խաղերը: Նշենք այդ խաղերից մի քանիսը.

- Դասարանը բաժանվում է խմբերի, և ուսուցիչն առաջադրում է՝ **ով ավելի շատ կհիշի, կմտածի, տեքստում կգտնի այս կամ այն հատվածը, նյութը, բառը, արտահայտությունը և այլն:**
- Առավել հետաքրքրաշարժ և արդյունավետ կլինի ուսումնական գործընթացը, եթե գիտելիքների կրկնությունը կամ տեքստի վերարտադրումն իրականացվեն «Բարձունքի նվաճումը» խաղի

տեսքով: Գրատախտակի մոտ են հրավիրվում թիմերի ներկայացուցիչները, ովքեր, ճիշտ պատասխանելով տեքստի շուրջ տրված հարցերին, բարձրանում են բուրգի աստիճաններով: Բուրգը նկարված է գրատախտակին: Որ թիմն ավելի շուտ կնվաճի բարձունքը, նա էլ կհաղթի:

- Գիտելիքների ստուգման համար կիրառվում է իր ծավալով և թեմայով բարդ խաղ՝ «Գրական ֆուտբոլ»: Դասարանը բաժանվում է երկու խմբի: Առաջինը «հարձակվողների խումբն» է, որը հարցեր է պատրաստում հակառակորդի համար: Երկրորդը «պաշտպանների խումբն» է, որը պատասխանում է հարցերին:
- Յուրաքանչյուր սխալ պատասխանը «գոլ» է համարվում:
- «**Իմաստնություն ծառ**» խաղն անցկացվում է այսպես: Մեկ անգամ ևս ուշադիր ընթերցում են տեքստը: Այս յուրաքանչյուրը թղթի վրա գրում է տեքստի հետ կապված որևէ հարց: Բոլոր հարցերն ամրացնում են ծառին: Այս աշակերտները մոտենում են ծառին, «քաղում» հարցը և փորձում պատասխանել: Մնացած աշակերտները գնահատում են և՛ հարցը, և՛ պատասխանը: Վերջում որոշում են, թե ով է դասարանի ամենագիտունը: Այս աշխատանքը կարելի է կազմակերպել և՛ զույգերով, և՛ քառյակներով, և՛ շարքերով:
- «**ԹՎԱՅԻՆ ԹԵՂԱՊՐՈՅՈՒՆ**» խաղն իրականացվում է այսպես. երեխաներն իրենք են կազմում ճիշտ և սխալ դատողություններ ստեղծագործության բովանդակության շուրջ և խաղի ձևով առաջարկում իրենց ընկերներին: Աշակերտները գրում են միայն երկու թիվ. 0 – եթե դատողությունը ճիշտ չէ, և 1 – եթե դատողությունը ճիշտ է: «ԹՎԱՅԻՆ ԹԵՂԱՊՐՈՅՈՒՆը» կարելի է անցկացնել բանավոր կամ գրել գրատախտակին: Սա երեխայի ուշադրությունն ակտիվացնելու առավել հետաքրքիր միջոցներից է՝ գրական ստեղծագործության բովանդակությունը լիարժեք ընկալելու նպատակով:
- «**Կենդանի պատկերներ**»: Այս գրական խաղի ընթացքում աշակերտներից մեկն ընթերցում է ստեղծագործությունը, իսկ մյուսը դեմքի արտահայտության, տարբեր շարժումներով արձագանքում

է լսածին: Կամ էլ աշակերտին առաջադրվում է կարդալ տեքստը սովյալ հերոսի ձայնով՝ արջի, գայլի և այլն:

- Երրորդ և չորրորդ դասարաններում կարելի է կիրառել «**Գրական փորձ**» խաղը: Այս հնարի նպատակն է երեխաների ուշադրությունը սևեռել հեղինակի բառերի ընտրության վրա: Երեխաներին տրվում են նյութեր՝ համեմատության համար: Նրանք դիտարկում են, թե ինչպես է հնչում տեքստը, երբ սովյալ բառի փոխարեն օգտագործում ենք դրան հոմանիշ մեկ ուրիշ բառ, ինչպես է փոխվում բովանդակությունը: Այնուհետև այս կամ այն արտահայտությունը երեխաները որոնում են այլ տեքստերում, իսկ հետո այդ արտահայտչամիջոցները կիրառում են իրենց սեփական խոսքում:
- «**Լրագրողներ**» խաղի ընթացքում բոլորը, ովքեր ցանկանում են հանդես գալ ստեղծագործության հերոսների դերերում, հրավիրվում են գրատախտակի մոտ, իսկ մյուսները հանդես են գալիս լրագրողների դերում: Վերջիններիս խնդիրն է հերոսներին տալ հետաքրքիր, ոչ ստանդարտ հարցեր: Իսկ ստեղծագործության «հերոսները» պետք է կարողանան լիարժեք, հստակ պատասխանել հարցերին:
- «**Ստեղծագործության փոխակերպումներ**» խաղի ընթացքում տրվում են հետևյալ առաջադրանքները.
 - 1) Նկարագրի՛ր գլխավոր հերոսի բնավորությունը մինչև հանդիպումը... և հանդիպումից հետո:
 - 2) Պատմի՛ր բովանդակությունն այնպես, որ բարի հերոսները դառնան չար և հակառակը:
 - 3) Պատմի՛ր՝ հեքիաթի բովանդակության մեջ ընդգրկելով մեկ այլ հերոս:
 - 4) Համեմատի՛ր մի քանի ստեղծագործություն: Սա այնպիսի ստեղծագործական աշխատանք է, որն ունի հետազոտական տարրեր: Օրինակ՝ համեմատի՛ր հեքիաթների սկիզբը:
 - 5) Դո՛ւրս գրի՛ր հեքիաթի հենակետային բառերը և դրանցով հորինի՛ր մեկ այլ հեքիաթ:

6) Լուծի՛ր «հեքիաթային խնդիրները»՝ չփոխելով կամ աննշան փոխելով հեքիաթի բովանդակությունը (օրինակ՝ ի՞նչ պետք է աներ Կարմիր Գլխարկի տատիկը, որպեսզի գայլն իրեն չուտեր):

Դասերի ընթացքում սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներ իրականացվում են անդադար՝ աստիճանաբար բարդացնելու սկզբունքով: Պետք է նկատի ունենալ և՛ տեքստերը, և՛ ինքնուրույնության աստիճանը, և՛ ստեղծագործական կարողությունների մակարդակը:

Աշակերտների ստեղծագործական գործունեության կազմակերպման հարցում շերտավորումն արդյունավետության տեսակետից ենթադրում է տարաբնույթ աշխատանքներ, որոնք էլ հնարավորություն կտան ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալելու՝ անաչառ գնահատելով սեփական ուժերն ու կարողությունները: Անհրաժեշտ է, որ ուսուցիչը լավ ճանաչի իր աշակերտներին: Նա պետք է անհատական մոտեցմամբ նպաստի նրանց զարգացմանը՝ բացահայտելով նրանց ողջ ներուժը, և համապատասխանաբար յուրաքանչյուրի համար ապահովի մտավոր ակտիվության դաշտ:

Ուսուցիչն ինքը պետք է ընտրի աշակերտներին առաջադրվող հանձնարարությունները՝ ելնելով աշակերտների անհատական առանձնահատկություններից:

Ուսուցչի կողմից հանձնարարված՝ սովորողների ներուժին համապատասխան տրված առաջադրանքների կատարման արդյունքում նրանք աստիճանաբար ձեռք են բերում ինքնուրույն ընթերցելու, ընթերցածի շուրջ մտորելու, եզրահանգումներ կատարելու, երևակայելու կարողություններ:

2.2. Ո՞վ ՊԵՏՔ Է ՄԵԿՆԱԲԱՆԻ ՏԵՔՍՏԸ՝ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ, ԹԵ՞ ՈՒՍՈՒՑԻՉԸ, ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս ՊԵՏՔ Է ԴԱ ԿԱՏԱՐԵԼ

Տեքստի շուրջ կազմակերպվող աշխատանքը մայրենիի դասերի կարևորագույն խնդիրներից է: Տեքստի ընթերցումն անհրաժեշտաբար պետք է ուղեկցվի համապատասխան մեկնաբանություններով, որպես-

զի ապահովվի դրա ընկալման խորությունը, վեր հանվի ստեղծագործության հուզականությունը, արտահայտչականությունը, վերլուծվեն հերոսների արարքները և վերաբերմունք դրսևորվի դրանց նկատմամբ: Ի վերջո, այս ամենի հանրագումարում կհաջողվի երեխայի մեջ համապատասխան հույզեր առաջացնել և սեր արթնացնել ընթերցանության նկատմամբ:

Հարցը կտրուկ է ձևակերպված. մեթոդիկան միանշանակ պատասխաններ չի ենթադրում ուսուցման տարբեր նպատակների և բազմազան իրավիճակների համար: Այս հարցում դեղատոմսերն արդարացված չեն: Սակայն մի բան անվերապահորեն պարզ է, որ աշակերտակենտրոն ուսուցման պայմաններում մտածողության կաղապարներ չեն թելադրվում: Տեքստից ստացած տպավորությունը երեխան պետք է ստանա ինքնուրույնաբար: Դա է պատճառը, որ հաճախ նոր նյութը ուսուցիչն առաջարկում է աշակերտներին կարդալ ինքնուրույն, կարծիք հայտնել կարդացածի մասին, ապա անցնել մեկնողական ընթերցանության: Տեքստը բարձրաձայն ընթերցում են երեխաները, իսկ մեկնաբանությունը կատարում է ուսուցիչը՝ երեխաների մասնակցությամբ:

Առանձին դեպքերում ուսուցիչն ինքը կարող է հատված առ հատված մեկնաբանել տեքստը: Եթե ուսուցչի մեկնաբանությունների ընթացքում երեխաներն արտահայտում են հետաքրքիր դատողություններ, անհրաժեշտ է ուշադրության արժանացնել դրանք: Իսկ ինչպիսի՞ն պետք է լինեն մեկնաբանությունները.

ա) Հակիրճ:

բ) Ուսուցիչը չպետք է այնպիսի հարցեր տա, որոնց պատասխանելը բարդ է տվյալ տարիքի երեխաների համար, առավել ևս այն պարագայում, երբ հեռացնում է նրանց տեքստի իմաստից, բովանդակության զգայական ընկալումից, որն ամենակարևորն է այդ տարիքում: Մեկնաբանությունները հաջողվում են միայն այն դեպքում, երբ խորացվում է զգայական ընկալումը: Այդ պատճառով էլ պատասխանները պետք է լինեն համառոտ և չհեռանան տեքստի բովանդակությունից: Եթե երեխաները

դժվարանում են, ուսուցիչը համապատասխան հնչերանգով հուշում է պատասխանի սկիզբը, և նրանք շարունակում են:

զ) Դրանք ոչ մի դեպքում չպետք է վերածվեն գրույցի:

դ) Հարկավոր է մեկնաբանել այն հատվածները, որոնց անհրաժեշտությունն իրականում զգացվում է: Սա նշանակում է, որ ուսուցիչը կարող է ցանկացած պահի ընդհատել երեխայի ընթերցումը:

Երեխայի ընթերցանության ընդհատումը պետք է կատարվի բնականորեն՝ կիրառելով հետևյալ հնարները.

- Երեխան ընթերցում է այն բառը, բառակապակցությունը կամ նախադասությունը, որը ենթակա է մեկնաբանության, ուսուցիչը անմիջապես կրկնում է այն, և դրան հետևում է մեկնաբանությունը կամ հարցը:
- Երեխային մղում է երևակայելու («Պատկերացրո՛ւ, որ...», «Տեսա՞ք, պատկերացրի՞ք» և այլն):
- Ուսուցիչը հարցը պետք է ձևակերպի գրույցից տարբերվող ոճով՝ մոտավորապես այսպես. «Կռահեցի՞ք, թե ինչու...», «Ինչո՞ւ հատկապես...» և այլն: Հարկավոր է խուսափել հետևյալ հրահանգներից. «Դադարեցրո՛ւ», «Բավական է», «Կանգնի՛ր այստեղ» և այլն:

Եվ վերջապես՝ պետք է պահպանել չափի զգացումը: Ոչ բոլոր տեքստերն են պահանջում մանրամասն մեկնաբանություն. նույն տեքստի տարբեր հատվածները կարող են պահանջել տարբեր խորության և տարբեր ծավալի մեկնաբանություններ:

2.3. ՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՃԱՅԵՆ ԵՆՔ ՀԱՆԴԻՊՈՒՄ «ԶՐՈՒՅՅ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏ» ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆԸ:
ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԴԱ, ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս ՍՈՎՈՐԵՑՆԵԼ ԵՐԵՆԱՆԵՐԻՆ ԱՆՅԿԱՅՆԵԼ ԱՅԴ ԶՐՈՒՅՅԸ

Հեղինակի հետ զրույցի առնչությամբ գոյություն ունի երկու տեսակետ. հեղինակի հետ զրույցը որոշակի հնարների կիրառմամբ աշխատանք է տեքստի շուրջ՝ այն ընթերցելու ընթացքում, մյուս դեպքում՝ զրույց է հեղինակի հետ՝ տեքստի միջոցով:

Հեղինակի հետ «երկխոսություն» անցկացնելու կարողությունն անհրաժեշտ է ձևավորել ուսուցչի և աշակերտի համատեղ ընթերցման ժամանակ: Տեքստի առանձնահատկություններով պայմանավորված՝ այդ գործընթացը կարող է իրականացվել և՛ առաջին, և՛ երկրորդ ընթերցման ժամանակ:

Գործողությունների հաջորդականությունը

1) *Երեխաներին սովորեցնել տեքստում տարբերել հեղինակի կողմից ուղղակիորեն կամ թաքնված ձևով առաջադրված հարցերը: Այսպես. «Մայրենի 4» դասագրքում գետեղված՝ Հրայր Մաթևոսյանի «Ա՛յ քեզ բան, ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում, հա՛յ-րե՛-նի՛ք է» դասանյութի հետևյալ հատվածում՝ «... երբ երկինքների կապույտներից բաժանված ամպերը ձոր են որոնում, դու ամբողջ մարմնով դողում ես, նայում հորդ ճակատին, նայում հորդ երեսին, այքերդ հառում նրա քթին, որ հասկանաս մեծերի խոսքը՝ **հոր քթից է ընկել**», հեղինակը թաքուն հարցադրում է կատարում և միննույն ժամանակ բացատրում, թե ինչ է նշանակում «**հոր քթից է ընկել**» արտահայտությունը, և ինչ կերպ տղան կարող է հասկանալ այդ արտահայտության իմաստը:*

Իսկ մեկ այլ հատվածում. «Հորս ձեռքը թուլացած ընկավ ծնկիս: Քիչ հետո զգացի, որ նա քնած է: Տեսնես մեկ էլ ե՞րբ է էսպես քնել: Երեխա ժամանա՞կ: Պատերազմ գնալուց առաջ»։ սրանք արդեն ուղիղ ձևով տրված հարցեր են, ընդ որում՝ ուղղված են ընթերցողին: Ամեն դեպքում այս հարցերը պահանջում են դադար տալ ընթերցման ընթացքում և մտորել հարցադրումների շուրջ, փորձել գտնել պատասխանները, այ-

նուհետև, եթե հնարավոր է, ստուգել դրանց ճշտությունը՝ շարունակելով տեքստի ընթերցումը:

2) *Երեխաներին մղել ստեղծագործելու, երևակայելու. Ի՞նչ կլինի հետո, ինչպե՞ս կզարգանան իրադարձությունները, ինչո՞վ կավարտվի տեքստը, դրվագը, դեպքը և այլն:*

3) *Երեխաներին սովորեցնել տեքստի ընթերցման ժամանակ հարցեր ուղղել հեղինակին: Դրանք այն հարցերն են, որոնց պատասխանները թաքնված են տեքստում և պետք է որոնել.*

- Ինչպե՞ս կարելի է դա բացատրել:
- Ի՞նչ կլինի դրանից հետո:
- Ինչո՞ւ այդպես եղավ և այլն:

Սխալներ, որոնք թույլ են տալիս ուսուցիչները հեղինակի հետ երկխոսություն վարել սովորեցնելու ընթացքում.

- ա) Ոչ միշտ է նպատակահարմար «երկխոսություն» անցկացնել հեղինակի հետ: Այդ հնարի կիրառումը պայմանավորված է գեղարվեստական տեքստի առանձնահատկություններով:
- բ) Ուսուցիչները երբեմն հստակ չեն պատկերացնում, թե ինչ են իրենցից ներկայացնում հեղինակին ուղղված հարցերը:

Տեքստի շուրջ տրվող ոչ բոլոր հարցերն են ուղղված լինում հեղինակին.

Օրինակ՝ «Մայրենի 3» դասագրքում գետեղված՝ Ալեն Միլնի «Վինի Թուխը և հայտնի չէ թե ով» տեքստը սկսվում է այսպես. «Կեսգիշերին Վինի Թուխը հանկարծ արթնացավ և ականջները սրեց»: Այս նախադասության կապակցությամբ կարելի է տալ հետևյալ հարցերը.

1. Ե՞րբ արթնացավ Վինի Թուխը:
2. Ի՞նչ է նշանակում ականջները սրել:

3. Հետաքրքիր է, ինչո՞ւ Վինի Թուխը հանկարծ արթնացավ և ականջները սրեց:

Պարզ է, որ միայն երրորդ հարցը կարելի է համարել հարց՝ ուղղված հեղինակին: Երեխան կպատասխանի դրան՝ շարունակելով ընթերցել տեքստը:

Որպես կանոն՝ հեղինակին ուղղված հարցերը կրում են ենթատեքստային բնույթ և չեն վերաբերում փաստերին: Դա ակնհայտ երևում է վերը նշված օրինակներից:

Ենթատեքստային հարցերին պատասխանելու համար երեխաները պետք է կարողանան վերլուծել տեքստի բովանդակությունը: Դրանք կարող են լինել տարաբնույթ.

1. Բովանդակության պատճառահետևանքային և այլ կապերի բացահայտում:

Այսպես՝ «Մայրենի 4» դասագրքի՝ Վրեժ Իսրայելյանի «Չնվաճված աշխարհամաս» դասանյութն ընթերցելիս կարելի է հարցնել. «Ինչո՞ւ ամեն անգամ տղայի՝ «ո՞վ է հնարել այդ հեքիաթը» հարցին Արշակ պապը պատասխանում էր լռությամբ: Ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ Արշակ պապը միայն մի հեքիաթ գիտեր:

2. Հիմնավորումներ և ապացուցումներ պահանջող հարցերի առաջադրում:

Այսպես՝ «Մայրենի 3» դասագրքում գետեղված՝ Ղարիբյանի «Անտառի բնակիչները» դասանյութն ընթերցելիս տրվում է հետևյալ հարցը. «Կենդանիներից ո՞րն է ձմռանը նախապատրաստվում մարդու նման: Հիմնավորի՞ր»: Այն նպատակ է հետապնդում ոչ միայն դասանյութի փաստերի հիման վրա թվարկելու ձմռանը մարդու նման նախապատրաստվող կենդանիներին, այլև միաժամանակ հիմնավորելու իրենց պատասխանը՝ ելնելով սեփական կենսափորձից և ձեռք բերած գիտելիքներից:

3. Հարցադրումներ, որոնք վերաբերում են տեքստի գեղարվեստական առանձնահատկություններին («Մայրենի 3» դասագրքում գետեղված «Մխիթար Հերացին և տակառագործը» դասանյութն ընթերցելիս կարելի է հարցնել՝ «Հերացին ասում է.

«Բժշկությունը սեր է և խիղճ»: Ինչպե՞ս ես հասկանում այս միտքը»):

2.4. ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ ԲԱՐԴ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԸՆԴԳՐԿՎԱԾ: ՆՈՒՅՆԻՍԿ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾՆՈՂՆԵՐԻ ՄԻ ՄԱՍԸ ՉԻ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ԴՐԱՆՔ

Արդի դասագրքերի բովանդակության առանձնահատկությունը հետևյալն է. առաջադրանքներն առավել հեշտությամբ կարող են կատարել աշակերտները, քան ծնողները: Սա պայմանավորված է նրանով, որ այսօրվա ծնողները երբ աշակերտ են եղել, սովորել են այլ ծրագրերով և այլ դասագրքերով: Այդ դասագրքերում ներառված էին բոլոր հարցերի պատասխանները. բավական էր միայն ուսումնական նյութը սերտել և վերարտադրել: Այսօրվա ծնողները, ձգտելով օգնելու իրենց երեխաներին, համոզված վերցնում են դասագիրքը, ընթերցում և չեն գտնում պատրաստի պատասխան: Այդ պատճառով նրանց մեջ ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ առաջադրանքները բարդ են:

Իրականում այսօրվա դասագրքերում ներառված առաջադրանքները ստեղծագործական բնույթի են կամ տրված են այնպիսի առաջադրանքներ, որոնք չունեն պատրաստի պատասխաններ: Դասագրքերում զետեղված ուսումնական նյութերն օգնում են որոնելու, կռահելու պատասխանը, կարողանալու ձեռք բերած գիտելիքները կիրառել ոչ ստանդարտ պայմաններում: Միայն այդպիսի առաջադրանքներն են հնարավորություն ընձեռում երեխաներին այս արագ փոփոխվող աշխարհում նախապատրաստվելու կյանքին: Չէ՞ որ ոչ վաղ անցյալում կյանքում ծագող զգալի քանակությամբ հարցերին դպրոցը չի տվել պատրաստի պատասխաններ:

Իհարկե, դասագրքերում կան այնպիսի նյութեր, որոնք պետք է սովորել անզիր և վերարտադրել: Բոլոր դեպքերում չպետք է մոռանալ, որ դասագիրքը տեղեկատվական միակ աղբյուրը չէ, հետևաբար, նրա խնդիրը միայն գիտելիք հաղորդելը չէ: Այն երեխային պետք է սովորեցնի ոչ միայն մտապահել դասագրքի տեղեկատվությունը, այլև հարստացնել տե-

ղեկատվական այլ միջոցների օգնությամբ և, որ ամենակարևորն է, ձեռք բերել այդ գիտելիքները կիրառելու կարողություն: Ահա թե ինչու երբեմն որոշ առաջադրանքներ թվում են բարդ և սովյալ տարիքին անհամապատասխան, մինչդեռ նման առաջադրանքների նպատակը երեխայի հետաքրքրությունները խթանելն ու զարգացումն ապահովելն է:

**2.5. ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ ԻՆՉՈ՞Ւ ԵՆ
ՔԻՉ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԴԱՍԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԵՎ Ի՞ՆՉ
ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ Է ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՄԵԾ ՏԵՂ
ՀԱՏԿԱՅՎԱԾ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ**

Այս սխալ պատկերացումները ստեղծվում են այն դեպքում, երբ մանկավարժները կամ ծնողները եզրահանգումներ են կատարում որևէ դասարանի դասագրքում գետեղված նյութերի հիման վրա և ոչ առաջինից մինչև չորրորդ դասարանի համար նախատեսված մայրենիի դասագրքերում գետեղված նյութերի դիտարկման հիման վրա:

Հեղինակների դիրքորոշումը հետևյալն է. դասական գրողների ստեղծագործությունների ընկալմանն ու յուրացմանը երեխաներին պետք է նախապատրաստել: Նրանք նախ պետք է սիրեն գիրքը և սովորեն կարդալ: Ընթերցելու բուն գործունեությունը պետք է բավականություն պատճառի, իսկ դրան անհրաժեշտ է նախապատրաստվել:

Առաջին դասարանում շատ երեխաներ սովորում են ընթերցել: Այդ պատճառով էլ առաջին դասարանի մայրենիի դասագրքերում առավելապես գետեղված են ժամանակակից մանկական գրականության նմուշներ՝ բանաստեղծություններ և կարճ պատմվածքներ հենց իրենց՝ երեխաների, ընտանիքի, ընկերների, կենդանիների, խաղերի և խաղալիքների, օգտակար գործերի մասին, այսինքն՝ այն, ինչ մոտ է, հասկանալի է, հետաքրքիր է ժամանակակից առաջին դասարանացուն:

Իսկ ահա երկրորդից չորրորդ դասարաններում արդեն ընդգրկված են դասական գրողների բավականին թվով ստեղծագործություններ:

Հատկապես երկրորդից չորրորդ դասարաններում երեխաները ծանոթանում են համաշխարհային գրականության նմուշներին. Աստրիդ Լինդգրենի, Ալան Միլնի, Ջանի Ռոդարիի, Անտուան դը Սենթ Էքզյուպերիի և այլ հանձարեղ գրողների ստեղծագործություններին: Հեղինակները խորապես համոզված են, որ արտասահմանյան դասական մանկագիրների ստեղծագործությունները հայ դասականների հետ հավասարապես երեխաները պետք է կարդան ժամանակին՝ հենց այն տարիքում, որ տարիքի համար դրանք նախատեսված են:

Ժամանակակից մարդը պետք է լավ իմանա ոչ միայն իր, այլև ուրիշ ժողովուրդների մշակույթը: Մենք ապրում ենք բաց աշխարհում և հանդուրժող քաղաքացի դաստիարակել, ով կհարգի իր և այլ ժողովուրդների մշակույթը, հնարավոր չէ առանց այլ ժողովուրդների գրականության ուսումնասիրման:

2.6. ԳԱՂՏՆԻՔ ՉԷ, ՈՐ ԱՅՍՕՐ ԵՐԵԽԱՆԵՐԸ ՔԻՉ ԵՆ ԸՆԹԵՐՅՈՒՄ: ՈՐՆ Է ԴՐԱ ՊԱՏՃԱՌԸ

Գերմանացի մեծ քնարերգու Գյոթեն ասել է. «Մարդը չի յուրացնում այն, ինչ չի հասկանում»: Այս միտքը կարելի է լրացնել. «Մարդը չի յուրացնում և չի սիրում այն, ինչը չի հասկանում»: Ընթերցանության նկատմամբ սեր չի ձևավորվում, և, դրանով պայմանավորված, ուսումնական դժվարություններ են առաջանում, երբ աշակերտը չի հասկանում ընթերցած նյութի բովանդակությունը: Ուսումնասիրությունները պարզել են՝ եթե երեխան չի հասկանում ընթերցած նյութի բովանդակությունը, ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունը կորչում է, և դրանով պայմանավորված՝ առաջանում են ուսումնական լուրջ դժվարություններ:

Գրականությունն այսօր և՛ որպես հասարակության հոգեբարոյական կյանքի գոյության փաստ, և՛ որպես դպրոցական առարկա այն բարոյական հիմքն ու մաքուր ակունքն է, որը սնում է մարդկանց հոգևոր աշխարհը: Բարոյական համոզմունքները բուռն կերպով են ձևավորվում մանկական տարիքում: Սա նշանակում է, որ հատկապես կրտսեր դասարաններում պետք է արթնացնել, իսկ հետո նաև ձևավորել ընթերցանության նկատմամբ երեխաների հետաքրքրությունն ու սերը, զարգացնել

գեղեցիկի, գրական խոսքի խորության ընկալման կարողությունը և դրա բարոյական ներգործության ուժը:

Ընթերցանության դասաժամերին երեխաները պետք է սովորեն լիակատար ընկալել գրական տեքստը: Այլ խոսքով՝ նրանք պետք է կարողանան երևակայության միջոցով ներթափանցել հեղինակի «նկարած» կյանք, ապրել այն որպես իրողություն, ապրումակցել հերոսներին, այդ ամենը համեմատել իրենց կյանքի և զգացմունքների հետ և հասկանալ հեղինակի գաղափարները:

Հարց է ծագում. դասի ընթացքում ինչպե՞ս աշխատել, որպեսզի սովորողները դասերից հետո ևս ցանկություն ունենան ընթերցելու հայ և համաշխարհային գրականության հրաշալի ստեղծագործությունները, որոնց դաստիարակչական նշանակությունն աներկբա է:

Յավոք, ուսուցիչների մեծ մասը տեքստի շուրջ աշխատանքը կազմակերպում է հետևյալ կերպ. սկզբում երեխային նախապատրաստում է տեքստի ընկալմանը, այսինքն՝ պատմում է հեղինակի մասին, ներկայացնում նրա ստեղծագործությունները, այնուհետև երեխաներին բացատրում է այն անհասկանալի բառերի իմաստները, որոնք նախօրոք ինքն է դուրս գրել տեքստից: Ապա արտահայտիչ ընթերցում է դասանյութը, և միայն այս ամենից հետո աշակերտներն սկսում են ընթերցանությունը: Նրանք կարդում են բարձրաձայն և պատասխանում ուսուցչի հարցերին: Արդյունքում տեքստի բովանդակությունը, որը երեխաները պետք է ընկալեն և յուրացնեն ինքնուրույնաբար, նախապես լսում են ուսուցչից: Երեխայի գործունեությունը զրկվում է դրդապատճառից, և տեքստի ընթերցանությունը դառնում է անհետաքրքիր: Երեխաները բավականություն չեն ստանում կարդալու գործընթացից:

Աշակերտը կսիրի ընթերցել, եթե հասկանա ընթերցած նյութի բովանդակությունը, ինքը սկսի տեքստում որոնել և գտնել իրեն հետաքրքրող հարցերի պատասխանները: Ուստի մայրենիի ժամերին շատ կարևոր է տեքստի շուրջ աշխատանքի ճիշտ կազմակերպման տեխնոլոգիան:

Անհրաժեշտ է կարևորել նաև այն հարցը, թե ինչ որակի ընթերցանություն ենք մենք ակնկալում: Այդ պատասխանը կարելի է ձևակերպել հետևյալ պահանջների ձևով.

Առաջին: Գեղարվեստական տեքստի ընթերցանության ընթացքում երեխան պետք է մտորի յուրաքանչյուր բառի իմաստի շուրջ, կարողանա առաջադրել հարցեր բովանդակության վերաբերյալ և դրանց պատասխանները որոնել գտնել տեքստում, ապրումակցել հերոսներին, ինչպես նաև ընթերցածի բովանդակության շուրջ պարզ վերլուծություններ կատարել:

Երկրորդ: Հարկավոր է երեխայի մեջ համոզմունք ձևավորել, որ նրան սովորեցնում ենք ընթերցել ոչ թե մեզ՝ մեծահասակներին համար, այլ հենց իր համար: Իսկ դա նշանակում է, որ նա պետք է ինքնուրույն կարողանա հասկանալ տեքստում ամփոփված մտքերը, տեքստի իմաստը (այն, ինչ ցանկացել է ասել հեղինակը):

Երրորդ: Պետք է հավասարապես ուշադրություն դարձնել և՛ լուռ, և՛ բարձրաձայն ընթերցանության կարողությունների զարգացմանը:

2.7. ԻՆՉՊԵՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԵՋ ՍԵՐՄԱՆԵԼ ԸՆԹԵՐՑԱՄԻՐՈՒԹՅՈՒՆ

Անկասկած, ուսուցչի գործադրած ջանքերը՝ ուսուցման գործընթացում ընթերցանության նկատմամբ սեր զարգացնելու նպատակով, դեռևս բավարար չեն: Կրտսեր դասարանների աշակերտները կարիք ունեն նաև ծնողների աջակցության: Ծնողները ևս պետք է ջանքեր գործադրեն, որպեսզի կարողանան իրենց երեխաների մեջ ընթերցասիրություն զարգացնել: Իսկ ինչպես զարգացնել ընթերցասիրություն, եթե երեխայի կյանքում կան շատ հետաքրքրություններ՝ մուլտֆիլմեր, կինոֆիլմեր, խաղեր, այդ թվում նաև համակարգչային խաղեր և այլն:

«Ինչպե՞ս զարգացնել ընթերցասիրություն» հարցին պատասխանող հստակ դեղատոմսեր չկան, սակայն ուսուցիչը ծնողներին կարող է տալ մի շարք խորհուրդներ, որոնց հետևելով նրանք կարող են ընթերցանության նկատմամբ սեր արթնացնել իրենց երեխաների մեջ: Նշենք այդ խորհուրդներից մի քանիսը, որոնք ծնողներին կարելի է ներկայացնել ծնողական ժողովի ընթացքում.

1. Ընթերցանությունը, ինչպես ցանկացած ուսումնական գործունեություն, չպետք է կրի ստիպողական բնույթ: Եթե այն լինի ստիպողաբար, սպառնալիքների հոսքի տակ, ապա երեխան ավելի քիչ կմտածի ուսումնառության մասին, ավելի շատ կմտածի այն պատժի մասին, որն իրեն սպասվում է: Մի՛ ստիպեք երեխային կարդալ, այլ զինվե՛ք համբերությամբ, գործի՛ դրեք ձեր վարպետությունը: Հաճախակի՛ առաջարկեք նրան կարդալ նոր, հետաքրքիր գրքեր, ամսագրեր, պատմություններ: Խթանե՛ք նրա մեջ հետաքրքրասիրություն՝ պատմելով որևէ գրքից մի հատված: Դրե՛ք այդ գրքերը նրա համար տեսանելի վայրում՝ հեռուստացույցի առջև, մահճակալի, բազմոցի կողքին և այլն: Բայց ոչ մի դեպքում մի՛ ստիպեք նրան կարդալ:

2. Անհրաժեշտ է երեխայի մեջ զարգացնել ընթերցանության մշակույթ: Ձեր երեխան, իհարկե, ժամանակի ընթացքում կսովորի սահուն կարդալ, սակայն նա չի դառնա ընթերցասեր, եթե մանկուց նրա մեջ չզարգացնեք ընթերցելու մշակույթ: Անկասկած, երեխան ամեն ինչում փորձում է ընդօրինակել ծնողին: Եվ եթե դուք ամբողջ ազատ ժամանակն անցկացնեք հեռուստացույցի մոտ՝ դիտելով անվերջանալի հեռուստասերիալները և շոուները, առավտից մինչ երեկո հեռախոսով զրուցեք ընկերուհիների հետ կամ ամբողջ օրն անցկացնեք խոհանոցում կամ համացանցում, ապա ժամանակի ընթացքում ձեր երեխան, համարելով ձեր ապրելակերպը իդեալական, ինքն էլ կկատարի այն ամենը, ինչ անում էիք դուք: Երեխան, անկասկած, կսիրի գիրքը և ընթերցանությունը, եթե տեսնի, թե ինչ հաճույքով եք դուք, ավարտելով տնային աշխատանքները, վերցնում գիրքը, ինչ հիացմունքով եք թերթում դրա էջերը, ինչ ոգևորությամբ եք քննարկում գրքի բովանդակությունը տան մյուս անդամների հետ: Տեսնելով, թե իր ընտանիքը որքան ընթերցասեր է, երեխան կամա թե սկամա կձգտի ընդօրինակելու ծնողներին և անպայման իր ձեռքը կվերցնի գիրքը: Այդպիսով՝ սկիզբ կդրվի երեխայի և գրքի բարեկամությանը:

3. Երեխաների մեջ ընթերցասիրություն զարգացնելուն մեծապես օգնում է ընտանեկան ընթերցանությունը, այսինքն՝ բարձրաձայն ընթերցանությունը ընտանիքի անդամների հետ: Մի՛ մոռացեք, որ ընտանեկան ընթերցանությունից հետո անհրաժեշտ է երեխայի հետ քննար-

կել ընթերցածի բովանդակությունը, հետաքրքրվե՞ք, թե ինչ կարծիք ունի ինքը, հարգե՞ք նրա կարծիքը: Եթե որևէ գրքի բովանդակությունը պետք է քննարկեք ընտանիքի անդամներից որևէ մեկի հետ, ապա այդ կատարե՞ք միմիայն երեխայի ներկայությամբ: Վերցրե՞ք հատուկ տետր, որի մեջ երեխան կարող է գրի առնել այն ամենը, ինչը նրան դուր է գալիս, այդ թվում նաև սիրելի հերոսների անունները, գեղեցիկ բառերը, արտահայտությունները, հետաքրքիր մտքերը: Ժամանակ կանցնի, և դուք ինքներդ էլ չեք նկատի, թե ինչպես են և՛ ընտանեկան, և՛ ինքնուրույն ընթերցանությունը երեխայի համար դառնում պահանջմունք:

4. Մի՛ շտապեք պատասխանել հարցերին: Եթե երեխան ընթերցում է ոչ թե ուղղակի բարձրաձայն՝ առանց հասկանալու, այլ խորհելով, հասկանում է իր ընթերցածի իմաստը, ապա նրա մեջ ընթերցածի վերաբերյալ վաղ թե ուշ որոշակի հարցեր են ծագում: Բնականաբար, այդ հարցերը նա կուղղի ձեզ: Մի՛ շտապեք պատասխանել հարցերին: Խորհո՛ւրդ տվեք նրան նորից մինչև վերջ ընթերցել տեքստը, հնարավոր է, որ մեկ անգամ ևս ընթերցելով՝ նա կգտնի իր հարցերի պատասխանը: Իսկ եթե չգտնի, թող փորձի պատասխանել ինքը՝ գործի դնելով իր ողջ մտավոր կարողությունները: Բայց եթե, այնուամենայնիվ, երեխան չի կարողանում գտնել իր հարցերի պատասխանները, ապա կարելի է օգնել նրան ուղղորդելով: Լավ կլինի, որ երեխան վստահ լինի, որ ինքն է պատասխանել հարցին՝ չնայած, որ դա արել է ձեր աջակցությամբ:

Այն դեպքում, երբ երեխան ընթերցում է առանց որևէ հետաքրքրության և հարցեր չի տալիս, ապա դուք ինքնե՛րդ փորձե՛ք հարցեր տալ: Կարելի է ուղղակիորեն մանրամասն քննարկել տեքստը, հետաքրքիր մեկնաբանություններ տալ տեքստի բովանդակության վերաբերյալ: Երեխային այդ դեպքում կսկսի հետաքրքրել տեքստը, և հարցերն էլ ինքնըստինքյան կծագեն:

5. Ցուցաբերե՛ք աջակցություն երեխային՝ թեկուզ փոքր, բայց անձնական մանկական գրադարանի ստեղծման գործում: Այդ գրադարանում պետք է տեղ գտնեն հետաքրքիր ձևավորված, իրենց բովանդակությամբ ուսանելի գրքեր: Այստեղ կարող են տեղ գտնել նաև մանկական ամսագրեր, թերթեր՝ հետաքրքիր պատմվածքներով, արժեքավոր տեղե-

կատվությամբ, բանաստեղծություններով, հանելուկներով և այլն: Երեխայի հետ այցելել՝ գրախանութ: Թո՛ւյլ տվեք, որ երեխան ինքն ընտրի գրքեր, տվե՛ք նրան ազատություն ընտրության հարցում, հանդես եկե՛ք միայն և միայն խորհրդատուի դերում: Հաճախակի այցելությունները գրախանութ և ձեր խորհուրդները գիրք ընտրելու հարցում կօգնեն նրան սուզվելու գրքերի զարմանալի և կախարդական աշխարհը: Այդպես երեխայի և գրքի հետ կապն ավելի կամրապնդվի:

6. Հաշվի՛ առեք երեխայի ընթերցողական պահանջմունքները, նրա հետաքրքրությունները: Սա այն խորհուրդն է, որին անհրաժեշտ է հատկապես հետևել, որպեսզի ձեր երեխան դառնա ընթերցասեր: Որոշակի տարիքում երեխային դուր են գալիս հեքիաթներ կամ պատմվածքներ կենդանիների մասին, ապա՝ ֆանտաստիկ կամ արկածային գրական ստեղծագործություններ, ավելի ուշ՝ պատմավեպեր, բանաստեղծություններ և այլն: Այդ պատճառով դուք պետք է մշտապես ձգտեք բավարարելու երեխայի ընթերցողական ճաշակը և ոչ մի կերպ չստիպեք նրան կարդալ այն, ինչը նրան դուր չի գալիս կամ հետաքրքիր չէ:

7. Երեխայի համար տանն առանձնացրե՛ք ընթերցանության համար առավել հարմար տեղ: Որպեսզի երեխան հաճույքով ընթերցի, նրա համար անհրաժեշտ է առանձնացնել հատուկ, հարմարավետ, լավ լուսավորված անկյուն: Մի՞թե երեխային դուր կգա ընթերցել խոհանոցում՝ աթոռակի վրա կիսանստած, կամ լսելով հեռուստացույցի ձայնը, ընտանիքի անդամների զրույցը:

8. Օգտագործե՛ք յուրաքանչյուր հարմար պահը, որպեսզի երեխայի մեջ սերմանեք սեր գրքի նկատմամբ: Դժվար թե ձեր երեխան ցանկանա ընթերցել, երբ ինքը հիվանդ է, քաղցած, հոգնած է, կամ հեռուստացույցով իր սիրելի մուլտֆիլմն են ցուցադրում: Այդ պատճառով էլ պետք է բաց չթողնել հարմար պահը՝ ընթերցանության նկատմամբ սեր զարգացնելու համար: Այդպիսի պահեր ընտանիքում հաճախակի են լինում: Օրինակ՝

ա) Տոնական օրերին կարող եք երեխային նվիրել իրեն դուր եկած գրքերը:

բ) Երեխայի մեջ ընթերցանության նկատմամբ սեր արթնացնելու հարցում բավականին նպաստում են զբոսանքները, էքսկուրսիաները, այցելությունները տարբեր վայրեր: Երեխայի հետ գնալով կենդանաբանական այգի՝ կարելի է, օրինակ, գիրք նվիրել կենդանիների մասին, բուսաբանական այգի՝ գիրք բույսերի մասին, ինչպես նաև՝ նկարիչների, գրողների, կյանքում տեղի ունեցող հրաշքների, մոլորակների մասին և այլն: Կարելի է օգտագործել նաև տհաճ պահերը, ասենք՝ եթե պետք է բժշկի այցելել, կարելի է նախապես կարդալ, օրինակ, «Բժիշկ Այբոլիտը»:

գ) Շատ լավ պատճառ է արձակուրդը: Կարևոր է, որ երեխան չընդհատի ընթերցանությունն արձակուրդների ընթացքում: Չէ՞ որ ձեր նպատակն է ընթերցանությունը դարձնել երեխայի կյանքի անխախտ մասը: Քանի որ արձակուրդի ընթացքում երեխայի ազատ ժամանակը բավականին շատ է, ուստի ընթերցանության համար նախատեսված ժամաքանակը կարելի է ավելացնել:

9. Հենվելով երեխայի նախասիրությունների վրա՝ սերմանե՞ք ընթերցասիրություն: Եթե երեխան սիրում է խաղալ լեգոներով, երաժշտություն լսել կամ նկարել, կամ էլ հեծանիվ քշել, ֆուտբոլ, շախմատ խաղալ և այլն, ապա դուք կարող եք հաշվի առնելով նրա այդ նախասիրությունը՝ առաջարկել երեխային ընթերցելու համապատասխան գրքեր և ամսագրեր: Եվ համոզված եղե՛ք, որ նա անպայման կընթերցի դրանք: Դուք կարող եք գրուցել նրա հետ ընթերցածի շուրջ: Մի՛ մտահոգվեք, որ այդ գրքերն ու ամսագրերն, ըստ ձեզ, անօգուտ են, կարևորը՝ ընթերցասիրության զարգացումն է: Ձգտե՛ք հասնելու նրան, որպեսզի ընթերցանությունը դառնա սովորություն:

10. Աշխատե՞ք, որ երեխայի ննջասենյակում հեռուստացույց չլինի: Քանի որ երեխան ուսումնական ծանրաբեռնվածության հետևանքով օրվա ընթացքում ազատ ժամանակ քիչ է ունենում, ուստի երբեմն միայն քնելուց առաջ նա կարող է ընթերցել: Ջանացե՛ք անել այնպես, որ քնից առաջ ընթերցանությունը դառնա սովորություն:

11. Ձեր երեխայի հետ խաղացն՞ք այնպիսի խաղեր, որոնց ընթացքում անհրաժեշտ է ընթերցել որոշակի նյութեր: Այո՛, ընթերցասիրություն կարելի է զարգացնել խաղի միջոցով: Անհրաժեշտ է ընտրել հետաքրքիր և զվարճալի խաղեր: Ընդ որում՝ խաղերը կարող եք հորինել նաև դուք: Օրինակ՝ գրե՛ք խառնագրեր, թո՛ղ երեխան այն վերծանի:

12. Ձեր երեխայի հետ կատարե՞ք դերերով ընթերցանություն: Ընտրե՛ք որևէ հեքիաթ, առակ կամ կարճ պատմվածք՝ երկխոսություններով լեցուն: Նկարե՛ք հերոսներին, կտրե՛ք պատկերը, կպցրե՛ք սովարաթղթին, իսկ սովարաթուղթը՝ փայտիկին: Եվ այդ հերոսների փոխարեն խոսելով՝ ցուցադրե՛ք մինի տիկնիկային ներկայացում: Կարելի է նաև պարզապես նստելով իրար կողքի՝ միասին դերերով կարդալ: Երկուսդ էլ մեծ բավականություն կստանաք:

Ավելացնենք, որ այստեղ խոսքն այն մասին չէ, թե գրել ու կարդալ պետք է սովորեցնեն ծնողները: Անշուշտ, դա դպրոցի, ուսուցչի գործն է: Ծնողները պետք է աջակցեն՝ ձևավորելու հետաքրքրասիրություն ընթերցանության նկատմամբ, քանի որ նրանք դրա համար ունեն ավելի մեծ միջոցներ, ինչպես նաև ավելի հարմարավետ պայմաններ, քան դպրոցում:

ԹԵՄԱ 3. ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

3.1. ԻՆՉՈՒԻ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՏԱՐԲԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Դասի ընթացքում ուսուցիչը կիրառում է բազմաթիվ մանկավարժական «գործիքներ», ուսուցման ձևեր, մեթոդներ և հնարներ, որոնք նպաստում են ուսումնադաստիարակչական գործընթացի նպատակների և խնդիրների իրագործմանը: Այդ ձևերից մեկն էլ դասի ընթացքում խմբային աշխատանքի կազմակերպումն է:

Բոլոր ուսուցիչներն էլ կարող են հաստատել, որ դասի ընթացքում բոլոր աշակերտները չեն կարող միևնույն արագությամբ աշխատել: Ի՞նչ անել, որպեսզի յուրաքանչյուր աշակերտ գոնե մեկ անգամ հնարավորություն ունենա պատասխանելու հնչեցված հարցերին: Ինչպե՞ս հարցնել բոլորին: Աշակերտների պատասխանները հնչում են դասի ամբողջ ժամանակի 50%-ի ընթացքում, բայց եթե դասարանում կա, օրինակ, 25 աշակերտ, ապա 22 թույլ են բավականին քիչ է բոլորի պատասխանները լսելու համար: Յուրաքանչյուր աշակերտ նույնիսկ մեկ թույլ է կարող խոսել: Մյուս կողմից էլ ուսուցչին անհրաժեշտ է պարզել աշակերտի պատրաստվածության աստիճանը և ապահովել նրանցից յուրաքանչյուրի ակտիվությունը: Եվ ահա այստեղից էլ ծագում է խմբային աշխատանք կատարելու անհրաժեշտությունը:

Եթե դասի ընթացքում թեկուզ ժամանակի կեսը տրամադրվի փոքր խմբերին, իսկ խմբում աշխատի 5 աշակերտ, ապա 22 թույլ են խոսելու հնարավորություն կընձեռվի 5 աշակերտի: Այստեղից հետևում է, որ յուրաքանչյուրը դասի ընթացքում կխոսի մոտ 4 թույլ: Այսինքն՝ բոլորը հնարավորություն կունենան աշխատելու և իրենց կարծիքներն արտահայտելու ուսումնասիրվող թեմայի շուրջ:

Բացի սրանից՝ կան նաև խմբային աշխատանքի կազմակերպման այլ առավելություններ: Որո՞նք են դրանք: Մարդը միշտ էլ ձգտում է, որ կյանքում ունենա աշխատանքային հաջողություններ: Անշուշտ, կրթությունն այդ հարցում բավականին մեծ դեր է խաղում: Բայց միայն դա

բավական չէ: Արդի շուկայական հարաբերությունները շրջանավարտներից պահանջում են այնպիսի կարողություններ և հմտություններ, որոնք հնարավորություն կտան նրանց ապագայում իրենց աշխատանքի մեջ ունենալու հաջողություններ: Այսինքն՝ նրանք կարիք ունեն տիրապետելու առանձին մարդկանց և աշխատանքային կոլեկտիվի հետ համագործակցելու կարողությունների: Այստեղից հետևում է, որ անհրաժեշտ է ոչ միայն կրթել դպրոցականներին, այլև սովորեցնել նրանց հաղորդակցվել, զարգացնել համագործակցելու համար անհրաժեշտ որակներ, որոնց մասին ամրագրված է բոլոր առարկայական չափորոշիչներում: Աշակերտները պետք է կարողանան համատեղ որոշումներ կայացնել, համաձայնության գալ, իրենց կարծիքն արտահայտել, հիմնավորել իրենց ճշմարտացիությունը, նաև ընդունել դիմացինի կարծիքը և այլն: Բայց որտե՞ղ կարելի է սովորեցնել և կիրառել այս կարողությունները: Եվ այստեղ նորից օգնության է հասնում փոքր խմբերում աշխատանքի կազմակերպումը: Սոցիալական, հաղորդակցական, մարդկանց միջև փոխհարաբերությունների կառուցման կարողությունների ձևավորումն այն կարևորագույն խնդիրներից են, որոնք լուծվում են խմբային աշխատանք կատարելու ընթացքում:

Այսպիսով՝ դասի ընթացքում խմբային աշխատանքի կիրառումը, ծավալելով որոնողական գործունեություն, ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու հնարավորություն է ընձեռում, որի շնորհիվ էլ ավելի խորությամբ են յուրացնում ուսումնական նյութը, զարգանում է սովորողների ճանաչողական ակտիվությունը և ստեղծագործական ինքնուրույնությունը, սովորողները ձեռք են բերում անհրաժեշտ համագործակցային կարողություններ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են իրենց՝ հասարակության անդամների հետ շփվելու համար:

3.2. ԱՄԵՆ ԱՆԳԱՄ՝ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԻՄ, ՀԻԱՍԹԱՓՎՈՒՄ ԵՄ, ՔԱՆԻ ՈՐ ՊԱՐԶՎՈՒՄ Է՝ ՈՉ ԲՈԼՈՐՆ ԵՆ ՀԱՍԿԱՅԵԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԸ. ԽՄԲԵՐՆ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ ԴԱՆԴԱՂ և ԱՂՄԿՈՏ, ՀԱՃԱՍ և ԱՆ ՎԻՃԱԲԱՆԵԼՈՎ:

**ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԽՄԲԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔԸ, ՈՐՊԵՍՁԻ ԱՅՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԼԻՆԻ, ԵՎ
ՀԱԶՈՂՎԻ ԽՈՒՍԱՓԵԼ ՆՇՎԱԾ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՅ**

Եթե ուսուցիչը ձևականորեն է կատարում ուսուցման գործընթացում խմբային աշխատանք իրականացնելու պահանջը, ապա այն կարող է լինել այսպիսին. կա մի խումբ, կա մի առաջադրանք, յուրաքանչյուրն այն կատարում է անհատապես, իսկ հետո խմբից որևէ մեկը ներկայացնում է արդյունքը: Սա կլինի մի աշխատանք, որն աշակերտներն ուղղակիորեն կատարում են իմբում: Իսկ ի՞նչ անել, որպեսզի աշխատի ամբողջ դասարանը, և ավելին՝ խմբի բոլոր անդամները պատրաստ լինեն համագործակցելու, արդյունավետ կիրառվեն խմբային աշխատանքներին ներկայացվող պահանջները, այսինքն՝ իրականացվի համագործակցային աշխատանք:

Հարցադրման մեջ նշված խմբային աշխատանքի կազմակերպման ձախողման պատճառներից մեկն ուսումնական գործընթացում խմբային աշխատանքի դերի թերագնահատումն է: Խմբային աշխատանքն ուսուցչի կողմից դիտարկվում է սոսկ միջոց դասի ընթացքում ուսումնական աշխատանքի կազմակերպման մեջ բազմազանություն մտցնելու համար: Որպեսզի խմբային աշխատանքը ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացում դրական արդյունքներ տա, անհրաժեշտ է լավ ըմբռնել դրա բնույթը:

Ինչպե՞ս կազմակերպել խմբային աշխատանքը: Ինչպե՞ս կոլեկտիվ աշխատանքի գաղափարը հասցնել աշակերտներին այնպես, որ աշխատանքն իսկապես դառնա խմբային, իսկ երեխաները՝ գործընթացի ակտիվ մասնակիցներ:

Այս հարցին պատասխանելու համար նշենք այն բազմաթիվ դժվարություններից մի քանիսը, որոնց հանդիպում են ուսուցիչները, և փորձենք նախանշել դրանց հաղթահարման ուղիները:

- Շատ մանկավարժներ տարրական դասարաններում ստեղծում են ուսումնական իրավիճակներ, որոնց ընթացքում իրականացվում են զույգերով կամ խմբով աշխատանքներ: Դա կարելի է դիտարկել, օրինակ, բաց դասերին այցելության ընթացքում: Դասարանում նախօրոք հատուկ ձևով նախապատրաստվում են աշխատանքային տեղերը. ուրիշ կերպ են դասավորված նստարանները, որոնց վրա տեղադրված են տարբեր խմբերի համար նախատեսված նյութերը: Երբ սկսվում է դասը, ուսուցիչը յուրաքանչյուր խմբին տալիս է առաջադրանք: Խմբերը քննարկում են, կատարում, ձևավորում են իրենց պատասխանները՝ նկարում կամ գրառում են սովորաթղթերի վրա և պատասխանում: Ուսուցիչն այդ ընթացքում պասիվ դիտորդի դերում է հայտնվում: Այնինչ, խմբային աշխատանքի ընթացքում ուսուցիչը պետք է հետևի, թե արդյո՞ք բոլոր աշակերտներն են հավասարապես աշխատում նույն խմբում, արդյոք բոլորն են հետաքրքրված ընդհանուր արդյունքով: Բավարար չափով ճշգրիտ է առաջադրված խնդիրը: Բոլորն արդյոք հասկացան ու ընդունեցին այն: Հաջողվե՞ց արդյոք դրդապատճառներ ստեղծել երեխաների մեջ առաջադրանքը կատարելու համար: Այս բոլոր հարցերին պատասխանելու նպատակով դասավանդող ուսուցչից բավականին ջանք է պահանջվում, սակայն, որպեսզի աշխատանքն իսկապես խմբային լինի, ուսուցիչը պետք է այնքան հմուտ լինի, որ կարողանա գտնել այս հարցերի պատասխանները:
- Ուսուցիչները նշում են՝ խմբային աշխատանք կազմակերպելիս ամենադժվարն անհրաժեշտ պամանների ստեղծումն է. չէ՞ որ դասարանական միջավայրը խմբային աշխատանքներ կազմակերպելու դեպքում պետք է լինի ձկուն, որպեսզի հնարավոր լինի սեղանները դասավորել տարբեր եղանակներով: Իսկ շատ դասասենյակների կահավորանքն այդ հնարավորությունը չի տալիս: Իսկապես, խմբային աշխատանքը պահանջում է նստարաններ

րի տեղափոխություն: Զույգային աշխատանքի համար կարող են միմյանց հետ զույգ կազմել նույն նստարանին նստած երեխաները: Քառյակներով աշխատելու համար նստարանները պետք է դասավորել այնպես, որպեսզի այն երեխաները, որոնք միասին են աշխատում, անպայման նայեն միմյանց: Եթե նախօրոք պլանավորած խմբային աշխատանքի մասին աշակերտները տեղյակ են, իրենք էլ կարող են նախապատրաստել դասարանը, նստարանները տեղափոխել: Իսկ եթե նախապես չեն դասավորել, ուսուցչի համապատասխան հրահանգից հետո առաջին նստարանին նստած զույգ աշակերտները կարող են շրջվել և հետևի նստարանին նստած զույգի հետ խումբ կազմել:

- Դիտարկենք մի իրավիճակ ևս: Այսպես՝ մայրենիի ժամին երեխաները պետք է հորինեն տեքստ՝ ըստ հենակետային բառերի և ստեղծեն «ինքնաշեն գիրք»՝ հորինված տեքստով և նկարազարդումով: Աշակերտները բաժանվում են խմբերի: Խմբերը նստում են ընդհանուր սեղանի շուրջ: Ուսուցիչը հրահանգներ է տալիս. «Արմենն ու Անահիտը կհորինեն տեքստը, Անուշը՝ կկազմի գիրքը, Մարինեն ու Աշոտը՝ կնկարազարդեն, իսկ Լևոնը՝ կներկայացնի»: Անցնում է որոշակի ժամանակ. երեխաներից յուրաքանչյուրը կատարում է իրեն հանձնարարված աշխատանքը: Ուսուցիչը գովաբանում է երեխաներին՝ մատնանշելով յուրաքանչյուրի աշխատանքի արդյունքը:
- Խմբերի բաժանել և առաջադրանք տալը դեռևս բավարար չէ, որպեսզի խմբային աշխատանք ընթանա: Պետք է այնպես կազմակերպել խմբային աշխատանքը, որ երեխաներն իրենք որոշեն, թե ով, ինչ և ինչպես կատարի: Կարևոր է, որ երեխաները հասկանան, թե ինչ արդյունքի նրանք պիտի հասնեն և պատասխանատվություն կրեն արդյունքների համար:
- Վերևում՝ նկարագրված օրինակում, ցույց է տրված մի իրավիճակ, որտեղ աշակերտները հետաքրքրված չեն կարող լինել ընդհանուր աշխատանքով. իրենց հետաքրքրում է միայն աշխատանքի իրենց հանձնարարված մասը: Այս ձևի մեջ բացակայում է խմբի ընդ-

հանուր շահագրգռությունը վերջնական արդյունքի հարցում: Այս պարագայում դժվար է անգամ պատկերացնել, թե նկարագարողները ինչպես կկատարեն աշխատանքը, մինչև անձամբ չմասնակցեն տեքստի հորինմանը: Կամ աշխատանքը ներկայացնող աշակերտը ինչպե՞ս առանց մասնակցության կկարողանա խմբի անունից խոսել կատարված աշխատանքի մասին:

- Հաճախակի խմբային աշխատանքների կազմակերպման դեպքում դասարանում բավականին կարգապահական խնդիրներ են ծագում: Ուսուցչին անհանգստացնում են աշակերտների միջև ծագող անախորժությունները, որոնք խոչընդոտում են խմբային աշխատանքին: Ուսուցիչը, ամեն անգամ արձագանքելով այդ հակասություններին, իր համար բացահայտում է լուծման տարբեր մոդելներ: Միայն պետք է հիշել, որ յուրաքանչյուր դեպք մարտահրավեր է՝ *սովորեցնելու համագործակցային հմտություններ*: Այդ դեպքերի լուծումը կախված է ուսուցչի հմտությունից:
- Ուսուցիչները դժվարանում են նաև խմբային աշխատանքի արդյունքները գնահատելիս: Գնահատման մեթոդները, ինչպիսիք են՝ թղթի վրա գրիչով գրավոր աշխատանքները կամ բանավոր հարցումները, հիմնականում բևեռված են ակադեմիական գիտելիքների վրա: Հաշվի առնելով խմբային աշխատանքի կազմակերպման կրթական նպատակների բազմակողմանի բնույթը՝ ուսուցչին արդեն հայտնի գնահատման մեթոդները չեն կարող ստույգ կերպով ներկայացնել, թե ինչ պետք է սովորեին երեխաները: Գնահատումը պետք է կազմակերպել այնպես, որ անհատ աշակերտի գնահատման արդյունքները փոխկապակցված լինեն փոքր խմբում նրա թիմի կատարած աշխատանքի արդյունքների հետ:

3.3. ԻՆՉՊԻՍԻ՞ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՊԵՏՔ Է ԸՆՏՐԵԼ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ, ՈՐՊԵՍՁԻ ԽՄԲԻ ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԿԱՐՈՂԱՆԱՆ ՀԱՎԱՍԱՐԱՊԵՍ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԴՐԱՆ

Շատ ուսուցիչներ դժվարանում են խմբով աշխատելու համար համապատասխան առաջադրանքների ընտրություն կատարել: Առաջադրանքներ ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի խմբի յուրաքանչյուր մասնակցի անհատական հնարավորություններն ու հետաքրքրությունները: Առաջադրանքները պետք է լինեն այնպիսին, որ խմբի բոլոր անդամներն ունենան խմբային աշխատանքին մասնակցելու դրդապատճառներ: Այդ առաջադրանքները պետք է խմբի բոլոր անդամներին խոսելու հնարավորություն ընձեռեն, զինն խմբի յուրաքանչյուր անդամին անհատական հաշվետվությամբ և պատասխանատվությամբ: Եթե փորձենք մեկ նախադասությամբ սահմանել, թե ինչպիսի առաջադրանք է անհրաժեշտ առաջադրել խմբերին, ապա այն կլինի այսպիսին. «Յուրաքանչյուրը գիտի առաջադրանքի մասին որևէ բան, սակայն ոչ ոք ամեն ինչ չգիտի դրա մասին»: Խմբային աշխատանքի համար առաջադրանքների ընտրության սկզբունքներն են՝

1. *Առաջադրանքները պետք է լինեն այնպիսին, որպեսզի խմբի անդամների հետ համագործակցված աշխատանքը տա զգալիորեն լավ արդյունք, քան կարող է ստանալ անդամներից յուրաքանչյուրը, եթե նա միայնակ աշխատեր: Նպատակահարմար է կիրառել առաջադրանքներ, որոնք՝*

- պահանջում են ծավալուն աշխատանք,
- պահանջում են այնպիսի բազմազան գիտելիքներ և կարողություններ, որոնց ամբողջությամբ չի տիրապետում անհատապես ոչ մի աշակերտ, բայց խմբին դա հասանելի է,
- նպաստում են ստեղծագործական մտածողության զարգացմանը, որոնց կատարման համար պահանջվում են ոչ ստանդարտ բնույթի պատասխաններ:

2. *Աշխատանքի բովանդակությունը պետք է հետաքրքրի խմբի բոլոր անդամներին:*

3. Առաջադրանքները, ըստ իրենց բարդության աստիճանի, պետք է հասանելի լինեն սովյալ տարիքի երեխաների համար:

4. Առաջադրանքները պետք է լինեն խնդրահարույց, հնարավորություն տան ակտիվորեն կիրառելու ձեռք բերած գիտելիքները:

3.4. ԻՆՉ ԿԱՐԵԼԻ Է ԱՆԵԼ, ԵՐԲ ԵՐԵԽԱՆ ՉԻ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԱՇԽԱՏԵԼ ԽՄԲՈՒՄ

Երբ երեխան չի ցանկանում աշխատել խմբի կազմում, ապա ուսուցիչը կարող է՝

- նախ պարզել, թե որն է պատճառը, որ նա չի ցանկանում աշխատել խմբում կամ դասընկերոջ հետ, և փորձի վերացնել այն,
- խմբային աշխատանքի կանոններում ընդգրկել «փոխադարձ հարգանքի ցուցաբերում» և «միմյանց հետ համերաշխ համագործակցություն» կետերը, քննարկել դրանք միասին, ընդունել և կիրառել. կանոնների չպահպանման դեպքում հիշեցնել երեխաներին այն մասին, որ կանոնները մշակվել են միասին և ընդունվել են դասարանի բոլոր անդամների կողմից, այդ իսկ պատճառով դրանք պետք է պահպանել և սովորել համագործակցել ընկերների հետ,
- առաջարկել նրան փորձել աշխատել միասին՝ նորից այդ հարցին անդրադառնալու պայմանով (այսօր փորձենք, եթե չստացվի, վաղը կլուծենք այդ հարցը),
- սպասել, մինչև որ երեխան ինքն ունենա խորհրդի կարիք, և միայն այդ դեպքում ցույց տալ, թե որքան կարևոր ու հետաքրքիր է աշխատել խմբով,
- բաշխել պարտականություններ, դերեր, բացատրել աշակերտին, թե որքան կարևոր պարտականություն ունի նա խմբում, զույգի հետ և բացատրել, որ առանց խմբի, զույգի նրա աշխատանքը կձախողվի,
- այդ աշակերտին տալ դիտորդի, փորձագետի դեր (այս դեպքում ենթադրվում է, որ աշակերտը կողքից կտեսնի, թե որքան հաճելի

է խմբային աշխատանքը, և նորից ցանկություն կհայտնի աշխատել խմբում),

- օրինակի միջոցով բացատրել, թե որքան կարևոր է միմյանց հետ հաղորդակցվելը, խմբով աշխատելը, որքան դժվար է մենակ ծավալուն, բարդ առաջադրանքներ կատարելը,
- թույլ տալ, որ ինքը մենակ աշխատի. երբեք չի կարելի ստիպել երեխային կատարել խմբային աշխատանք,
- հաշվի առնի նրա անձնային որակները, հետաքրքրությունների շրջանակը և համապատասխան խումբ կամ զույգ առաջարկի կամ հետաքրքրվի նրանից, թե ինքն ում հետ կուզենար աշխատել (հնարավոր է, որ երեխան չի ուզում աշխատել, որովհետև նրան չեն լսում և այլն),
- անցկացնել խաղեր, որոնք կնպաստեն կոլեկտիվի ձևավորմանը:

3.5. ԻՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԿԱ ԱՇԿԵՐՏ, ՈՒՄ ՀԵՏ ՈՉ ՈՔ ԶԻ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԱՇԽԱՏԵԼ ՆՈՒՅՆ ԽՄԲՈՒՄ

Եթե դասարանում կա աշակերտ, ում հետ ոչ ոք չի ցանկանում աշխատել նույն խմբում, ապա կարող եք վարվել հետևյալ հնարավոր տարբերակներով.

- Աշխատե՛ք բացահայտել պատճառները, թե ինչու դասարանը չի ուզում աշխատել այդ աշակերտի հետ:
- Վարվե՛ք այնպես, ինչպես նշված է նախորդ հարցի կետ 2–ում:
- Կազմակերպե՛ք խաղեր, որտեղ բոլորը պետք է շփվեն միմյանց հետ:
- Բոլորի ներկայությամբ ընդգծե՛ք տվյալ աշակերտի անձնային լավ որակները, նրա առավելությունները:
- Առաջարկե՛ք մյուսներին՝ իրենց պատկերացնել այդ աշակերտի փոխարեն:

- Այդ աշակերտի համար ստեղծենք հաջողակ լինելու իրավիճակ (որևէ առաջադրանքի, խաղի միջոցով): Այդ աշակերտին տվե՛ք խորհրդատուի, փորձագետի դեր, որպեսզի ցույց տրվեն նրա լավ կողմերը:
- Կազմակերպե՛ք այնպիսի միջոցառումներ, որտեղ յուրաքանչյուրը կպատմի իր դասընկերոջ մասին:
- Խորհրդակցե՛ք հոգեբանի և սոցիալական մանկավարժի հետ:

3.6. Ի՞նչ ԱՆԵԼ, ԵԹԵ ԿԱՆ ԱՇԿԵՐՏՆԵՐ, ՈՐՈՆ-Ք ՅԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆ-ՔԻ ԸՆԹ-ԱՑ-ՔՈՒՄ ՄԻՇՏ ԱՌ-ԱԶԱՏԱՐԻ ԴԵՐ ՍՏԱՆՁՆԵԼ

Խմբային աշխատանքի ընթացքում կարելի է նկատել, որ լինում են առաջատար երեխաներ, ովքեր իրենց ակտիվությամբ ճնշում են մյուսներին: Նրանք խմբի մասնակիցների փոխարեն բոլոր աշխատանքներն իրենք են կատարում, իրենք էլ ներկայացնում են ստացված արդյունքը, և ամբողջ խումբն օգտվում է այդ արդյունքից: Կան առաջատար երեխաներ, ովքեր լավ բաշխում են խմբում դերերը, բայց հետո աշխատանքի արդյունքն իրենք են ներկայացնում: Եվ վերջապես՝ միշտ էլ լինում են երեխաներ, հատկապես առաջին և երկրորդ դասարաններում, ովքեր ուղղակի լուռ նստում են սեղանի շուրջը և ոչինչ չեն անում: Ուստի, ուսուցիչը պետք է խմբերի բաժանելիս հաշվի առնի այս հանգամանքը, իսկ խմբային աշխատանքի ընթացքում ուշիուշով հետևի երեխաների գործունեությանը և համապատասխան աջակցություն ցուցաբերի:

Եթե դասարանում կա աշակերտ, որը միշտ ցանկանում է խմբային աշխատանքի ընթացքում առաջատար լինել, կարող եք օգտվել հետևյալ հնարավոր տարբերակներից.

- Խմբին առաջարկել յուրաքանչյուր աշխատանքի ժամանակ դերերը փոփոխել:
- Հստակ բաշխել պարտականությունները և դերերը:
- Այդ աշակերտին առաջարկել ակտիվ ունկնդրի դերը:

- Անպայման իրազեկվել, թե այն խմբում, որի աշխատանքում մասնակցում է այդ աշակերտը, ինչ է արել նա, ինչ են արել ընկերները: Ցույց տալ, թե որքան արդյունավետ է համագործակցությունը:

3.7. ՃԻՇՏ Է ԱՐԴՅՈՔ, ՈՐ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՍԿՍԵԼ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՅՑ, ՔԱՆԻ ՈՐ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՅԻՆԵՐԸ ԽՄԲՈՒՄ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԵՌԵՎՍ ՉՈՒՆԵՆ

Խմբային աշխատանքի կազմակերպումը դարձնում կարելի է սկսել առաջին դասարանի ուսումնական տարեսկզբից: Ուսուցման առաջին տարվա նպատակը մանկական կոլեկտիվի ստեղծումն է: Իսկ այդ նպատակին կարելի է հասնել նաև խմբային աշխատանքներ կազմակերպելով: Խմբային աշխատանքներ կարելի է կազմակերպել՝ հիմք ընդունելով միայն երեխաների ցանկությունը: Առաջին դասարանում փոքր խմբերով աշխատանքը զերադասելի է կազմակերպել նախ զույգերով, ապա ավելի մեծ խմբերով: Ջույգերով աշխատելիս աշակերտները կվարժվեն համագործակցային աշխատանքին, կսովորեն լսել մեկմեկու, հաշվի նստել դիմացինի կարծիքի հետ, ընդհանրացնել ասելիքը: Սա նախապայման կհանդիսանա ավելի մեծ խմբում աշխատելու համար:

Գոյություն ունեն զույգային աշխատանքի կազմակերպման տարբեր տեսակներ, օրինակ՝

1. Միասնական աշխատանք, որի դեպքում երկուսն էլ կատարում են միևնույն գործը: Ասենք՝ զույգին տրվում են քարտեր: Քարտերից մի քանիսի վրա նկարված են պատկերներ, իսկ մյուսների վրա գրված են այդ պատկերների անունները: Ջույգն աշխատում է միասին, միասին անվանում են բառը, ապա՝ համապատասխան պատկերով քարտը, այսինքն՝ բոլոր հրահանգները կատարում են միասին:
2. Յուրաքանչյուրը կատարում է մեկ գործողություն: Առաջին աշակերտն անվանում է բառը, երկրորդն ընտրում է համապատասխան պատկերը:

3. Հրահանգը կատարում են մինչև վերջ առանձին–առանձին. առաջին աշակերտն անվանում է առաջին բառը և դրա կողքին դնում է համապատասխան պատկերը: Երկրորդ աշակերտն անվանում է երկրորդ բառը և կողքին դնում է դրան համապատասխան պատկերը և այսպես շարունակ:
4. Ամբողջ առաջադրանքը կատարում է առաջին աշակերտը, իսկ երկրորդ աշակերտը միայն վերստուգում է:

Աշխատանքի ընթացքում ուսուցիչն օգնում է զույգերին և արձանագրում է հաջողություններն ու թերությունները, որպեսզի աշխատանքի ավարտից հետո այն դրվի ընդհանուր քննարկման: Սկզբում ուսուցիչն ինքն է բացատրում զույգին, թե ինչպես նրանք պետք է աշխատեն, իսկ ավելի ուշ արդեն աշակերտներն իրենք են որոշում, թե ինչպես աշխատեն: Երկրորդ կիսամյակից սկսած՝ անրաժեշտ է սկսել խմբային աշխատանքը: Սկզբում պետք է տալ նմուշօրինակը. ուսուցիչը 1–2 աշակերտի հետ գրատախտակի մոտ ցույց է տալիս աշխատանքի ողջ ընթացքը՝ ուշադրությունը կենտրոնացնելով սխալների վրա: Ընդ որում՝ ուշադրությունը պետք է սևեռել ոչ թե բովանդակության, այլ՝ փոխհարաբերությունների կազմակերպման վրա:

3.8. ՀԱՃԱԽ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐՆ ՍԿՍՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՄԵՂԱԴՐԵԼ ՑԱԾԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ: ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ, ՈՐՊԵՍՁԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՈՒ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԵՆ ԲՈԼՈՐԸ

Մեկը՝ բոլորի, բոլորը մեկի համար: Որպեսզի խմբի բոլոր անդամները խմբային աշխատանքի ընթացքում օգնեն միմյանց, իսկ հաղթանակն ու պարտությունը համարեն բոլորինը, անհրաժեշտ է՝

1. Խմբում աշխատանքի դերերը բաշխել: Այս դեպքում յուրաքանչյուրը մի «աղյուս» է դնում նոր կառուցվող ընդհանուր տան հիմքում: Ինչպե՞ս բաշխել դերերը: Առաջին հերթին, յուրաքանչյուր աշակերտ կարող

է ստանալ ուսումնական առաջադրանքի իր մասը, որն ինքը կյուրացնի և կսովորեցնի խմբի մյուս անդամներին: Եվ երկրորդ՝ ուսումնական առաջադրանքը կարող է ընդհանուր լինել ամբողջ խմբի անդամների համար, բայց դերերը կարող են բաշխվել այլ կերպ. օրինակ՝ մեկը լինի ներկայացնող, մյուսը՝ նկարագարող, ավագ, ժամանակը վերահսկող և այլն:

2. Բացատրել աշակերտներին, որ խմբի աշխատանքի գնահատականը կախված է խմբի բոլոր անդամների գործունեությունից: Սա կարող է իրականացվել տարբեր կերպ. օրինակ՝ գնահատել խմբի յուրաքանչյուր անդամի աշխատանքը, ապա հանրագումարի բերելով՝ գնահատել ամբողջ խմբին կամ կարելի է նաև կամայականության սկզբունքով հարցնել խմբի անդամներից մեկին և, ըստ նրա պատասխանի, գնահատել ամբողջ խմբին և այլն:

3.9. ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԻ ՈՒՍՈՒՑԻՉԸ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ուսուցիչը խմբային աշխատանքի ընթացքում կարող է ստանձնել տարբեր դերեր.

1. վերահսկել,
2. կազմակերպել,
3. գնահատել աշակերտների աշխատանքը,
4. մասնակցել խմբերի աշխատանքին,
5. խմբի անդամներին առաջարկել լուծման զանազան տարբերակներ,
6. հանդես գալ ղեկավարի կամ տեղեկատվական աղբյուրի հետագոտողի դերում:

Իսկ ահա թե ինչ չպետք է անի ուսուցիչը, եթե ուզում է կազմակերպել արդյունավետ խմբային աշխատանք.

- նստի իր սեղանի մոտ՝ կատարելով այլ աշխատանքներ, օրինակ՝ տետրերի ստուգում,

- խմբային աշխատանքն ընկալի որպես աշխատանք, որի ընթացքում ինքը կարող է դասարանից դուրս գալ և հանգստանալ,
- իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացնի մի խմբի վրա՝ մոռանալով մյուսների մասին,
- քննադատի կարծիքները, ճնշում գործադրի խմբի անդամների վրա և թույլ չտա, որ նրանք ազատորեն արտահայտեն իրենց մտքերը,
- գերծ մնա խիստ գնահատականներ տալուց. դրանք կարող են աշակերտներին «կոտրել»,
- չչտալի պատասխանել այն հարցին, որին կարող է պատասխանել խմբի անդամներից որևէ մեկը,
- չի կարելի քայլել դասարանում կամ խմբային աշխատանքը դեռ չսկսած՝ կանգնել խմբի անդամների կողքին, քանի որ աշակերտները հաճախակի ամաչում են արտահայտել իրենց մտքերն ուսուցչի ներկայությամբ, բայց քննարկման վերջում ուսուցիչը նույնպես կարող է ընդգրկվել աշխատանքի մեջ, լսել, թե ինչպես են որոշում կայացնում, ուղղորդել աշակերտներին, պատասխանել նրանց հարցերին,
- եթե որևէ խումբ աղմուկով է աշխատում, չպետք է նրանց բարձրաձայն դիտողություն անել, օրինակ՝ ուսուցիչը կարող է թղթի վրա գրել «Առանց աղմուկի» արտահայտությունը և այդ թղթով մոտենալ տվյալ խմբին, որպեսզի խմբի բոլոր անդամները կարդան այդ արտահայտությունը: Ուսուցչի բարձրաձայն դիտողությունը կիանգաբի մյուս խմբերի աշխատանքին:

ԹԵՄԱ 4. ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

4.1. ՊԱՐՏԱԴԻՐ ԵՆ ԱՐԴՅՈՔ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ, ԶԷ՞ ՈՐ ԱՆԸՆԴՀԱՏ ԽՈՍՎՈՒՄ Է ԵՐԵՆԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գաղտնիք չէ, որ շատ դեպքերում տնային աշխատանքները նպաստում են երեխաների ծանրաբեռնվածության մեծացմանը: Դպրոցականը հենց միայն ֆիզիկապես երբեմն չի կարող կատարել այն ամենը, ինչ հանձնարարել են ուսուցիչները: Բայց հարցն այստեղ միայն ծավալը չէ, այլև առաջադրանքների կարծրատիպային, համընդհանուր բնույթը, որի կատարումը ոչ միայն բարդ է, այլև սարսափելի ձանձրալի: Մյուս կողմից էլ աշակերտն ինքը չի հասկանում, թե ինչու է անհրաժեշտ այդ աշխատանքը կատարել:

Շատ ուսուցիչներ, ծնողներ կողմ են այն մտքին, որ տնային աշխատանքներ ընդհանրապես չի կարելի հանձնարարել: Նրանք պնդում են, որ տնային առաջադրանքներ տրվում են, որովհետև ուսուցիչը դասի ընթացքում չի կարողացել իր պարտականությունները կատարել, և դա փոխհատուցում է մեծ ծավալով տնային աշխատանքներ հանձնարարելով: Իսկ ուսուցիչների մի մասն էլ պնդում է՝ եթե տնային աշխատանք քիչ է հանձնարարվում, մեխանիկորեն նվազում են իր առարկայի դերն ու նշանակությունը: Ուզում ենք կարևորել ոչ այն, թե ինչ քանակությամբ առաջադրանք է հանձնարարված, այլ այն, թե ինչ է հանձնարարված: Հաճախ ուսուցիչները չեն մտածում տնային աշխատանքների բազմազանության և հնարավորությունների մասին, չեն գնահատում դրանց դերը և նշանակությունը դպրոցական ուսումնառության և դաստիարակության գործում, և, ըստ սովորության, հանձնարարում են այն, ինչ գետեղված է դասագրքում:

Սա վնասակար մոտեցում է: Վնասակար է, քանի որ դա հանգեցնում է սովորողների ծանրաբեռնվածությանը, ուսումնական աշխատանքի նկատմամբ հետաքրքրության կորստին և տնային աշխատանքի կատարման անհրաժեշտության ներքուստ մերժմանը: Ի՞նչ են սիրում 6–10 տարեկան երեխաները: Իհարկե, խաղալ, ճանապարհորդել, զանձեր

որոնել, գաղտնիքներ բացահայտել, ոչ սովորական պատմություններ հորինել... Ուրեմն անհրաժեշտ է նրանց տալ այդ հնարավորությունը:

Չարլզ Դարվինն ասում է. «Ես կարծում եմ, որ բոլոր քիչ թե շատ արժեքավոր բաները ես սովորել եմ ինքնակրթության միջոցով»: Եվ սա իսկապես այդպես է: Լավ մտածված, կշռադատված, հետաքրքիր տնային աշխատանքը կարող է շատ արդյունավետ լինել: Կարևոր է գիտակցել այն, որ երեխան ոչ թե մեքենա է, որը պարտավոր է կատարել տվյալ աշխատանքը, այլ այդ աշխատանքը կարող է նրան ուրախություն և օգուտ բերել: Ուրեմն, հրաժարվել տնային աշխատանքներից ամեն դեպքում չի կարելի: Սակայն անհրաժեշտ է հիշել նաև այն, որ տնային աշխատանք պետք է առաջադրել այն դեպքում, երբ այն խստորեն հիմնավորված է, անհատականացված և հետաքրքիր:

4.2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ Ի՞ՆՉ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԿԱՐԵԼԻ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Տնային աշխատանքն ուսումնական աշխատանք է, որը կատարվում է ինքնուրույն՝ առանց ուսուցչի անմիջական ղեկավարության և օգնության: Այդ իսկ պատճառով տնային աշխատանքի կարևորագույն խնդիրներից մեկն ինքնուրույնության ձևավորումն է, որն էլ իր հերթին նպաստում է սովորողների ուսումնաձանաչողական գործունեություն ծավալելու կարողությունների զարգացմանը: Տնային աշխատանքներ կատարելիս սովորողը կարող է փորձել ինքնաստուգման տարբեր ձևեր և ընտրել դրանցից իր համար լավագույնը, բացահայտել իր հիշողության մակարդակը՝ ինքնուրույն կատարելով տնային առաջադրանքները: Տնային ուսումնական աշխատանքի հիմնական խնդիրներից մեկն էլ աշխատանքի նկատմամբ ստեղծագործական մոտեցման ունակությունների դրսևորումն է: Տնային աշխատանքը պետք է միջոց հանդիսանա ուսումնառության և ինքնակրթության միավորման համար: Իսկապես, վերառարկայական ուսումնական կարողությունների և հմտությունների յուրացումը, ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալելու նկատմամբ հետաքրքրության զարգացումը, ստեղծագործելու փորձի ձևավորումն այն կարևորագույն բաղադրիչներն են, որոնցով պայմա-

նավորված է ինքնակրթության կարողության ձևավորումը: Ինքնակրթության պատրաստ լինելն անհրաժեշտ որակ է սովորողի համար, և այն անհրաժեշտ է ձևավորել հենց կրտսեր տարիքից:

Տնային ուսումնական աշխատանքի կազմակերպումը ուսումնադաստիարակչական գործընթացի շղթայում ամենաբարդ օղակն է:

4.3. ԿԱՆ ԱՐԴՅՈՔ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՈՐՈՇԱԿԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

2–4–րդ դասարաններում տնային աշխատանքներին ներկայացվող հիմնական պահանջներն են.

- Ձգտելով դասի որակի և արդյունավետության բարձրացմանը՝ երաշխավորելի չէ տանը հանձնարարել այն, ինչն արդեն յուրացվել է դասարանում: Անհրաժեշտ է ստույգ իմանալ, թե ինչ նպատակ է հետապնդում տնային աշխատանքը: Ուսուցիչը պետք է ինքն իրեն հարց տա, թե ինչու է հանձնարարում հենց այդ աշխատանքը, ինչ նպատակ է հետապնդում այն, ինչ կարողություն է զարգացնում և այլն:
- Առաջադրանքի բովանդակությունը պետք է հասկանալի լինի յուրաքանչյուր աշակերտի, այսինքն՝ բոլոր աշակերտները պետք է իմանան, թե ինչ պիտի անեն և ինչպես:
- Առաջադրանքը չի ծառայի նպատակին, եթե դրա հետ չտրվի համապատասխան հրահանգավորում:
- Տնային աշխատանքը պետք է անպայման ստուգվի ուսուցչի կողմից: Ուսուցչի ստուգումը դաստիարակում է ջանասիրություն, պատրաստակամություն և կոկիկ աշխատելու կարողություն:
- Առաջադրանքը կարող է լինել տարբեր՝ ֆրոնտալ, տարբերակված, անհատական և այլն, բայց այն հանձնարարելիս միշտ պետք է հաշվի առնել դասարանի ընդհանուր առանձնահատկությունները:

- Յուրաքանչյուր առարկայից տրվող տնային առաջադրանքները պետք է կարգավորել ծավալով՝ համապատասխանեցնելով այն այլ առարկաներից տրվող տնային աշխատանքների ծավալին:
- Առաջադրանքները չպետք է լինեն միօրինակ. դրանցում պետք է հանդիպեն ոչ ստանդարտ հարցեր, դիտարկումներ կատարելու պահանջներ և այլն:
- Առաջադրանքը պետք է կողմնորոշի սովորողներին ինքնուրույն որոշումներ կայացնել, զարգացնել ստացած գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունները (ինքնուրույնության զարգացում):
- Առաջադրանքներում պետք է ներառվեն այնպիսի հարցեր, որոնք կնպաստեն ծրագրի հիմնական բաժինների կրկնությանը:
- Ըստ բարդության աստիճանի՝ տնային աշխատանքը պետք է լինի մոտավորապես նույնը կամ փոքր-ինչ ավելի դյուրին այն առաջադրանքներից, որոնք կատարվել են դասի ընթացքում:
- Որոշ դեպքերում առաջադրանքները կատարելիս աշակերտները կարող են հանդիպել որոշակի դժվարությունների: Կարևոր պայման է, որ դրանք հասանելի լինեն նրա կարողություններին՝ դրանով իսկ դաստիարակելով դժվարությունները հաղթահարելու պատրաստակամություն (կարելի է առաջադրել հուշագրեր՝ առաջադրանքը կատարելու քայլաշարով):
- Առաջադրանքները պետք է ներառեն հարցեր, որոնք աշակերտից պահանջում են համեմատել, վերլուծել, ընդհանրացնել, դասակարգել, հաստատել պատճառահետևանքային կապերը, ձևավորել եզրահանգումը, յուրացրած գիտելիքները կիրառել նոր իրավիճակում, այսինքն՝ դրանք պետք է նպաստեն մտավոր գործընթացների զարգացմանը:
- Տնային աշխատանքի անհրաժեշտությունը պետք է լինի հիմնավորված: Եթե ուսուցիչը տվյալ օրն աշխատանքը կազմակերպել է այնպես, որ սովորողներն ամբողջ ուսումնական նյութը յուրացրել

են դասի ընթացքում, ապա կարող է ընդհանրապես տնային աշխատանք չառաջադրել:

- Պահպանելով տնային առաջադրանքի հիմնական բովանդակությունը՝ կարելի է մասնակիորեն անհատականացնել դրա նպատակը, ծավալը, կատարման հնարները:
- Տնային աշխատանքների կատարման ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի 2–րդ դասարանում 1 կամ 2 ժամը, իսկ 3–րդ և 4–րդ դասարաններում՝ 1,5 ժամը:
- Մեկ ուսումնական առարկայից տնային աշխատանքի կատարման վրա ծախսվող ժամանակը չպետք է գերազանցի՝ 2–րդ դասարանում՝ 20 րոպեն, իսկ 3–րդ և 4–րդ դասարաններում՝ 30 րոպեն:
- Տնային աշխատանքի ծավալը չպետք է գերազանցի դասարանում կատարած աշխատանքների 30% –ը:
- Դասագրքում գետեղված բարդ առաջադրանքները, որոնք առանձնացված են աստղանիշով կամ մեկ այլ տարբերակիչ նշանով, չի կարելի հանձնարարել տանը:

4.4. ՀՆԱՐԱՎՈՐ Է ԱՐԴՅՈՒՔ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՆԱԽՕՐՈՒՔ ՊԼԱՆԱՎՈՐԵԼ. ՉԷ՞ ՈՐ ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ Է ՊԱՐՁ ԴԱՌՆՈՒՄ ԴՐԱ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԾԱՎԱԼԸ

Դիտարկումները ցույց են տվել, որ տնային աշխատանքները հաճախ նախապես չեն պլանավորվում: Շատ մասնագետներ պնդում են, որ դա է տնային աշխատանքների միօրինակության և ձանձրալի բնույթի պատճառը: Որոշ դեպքերում կարելի է համաձայնել այդ մտքին: Մյուս կողմից էլ՝ երբեմն տնային աշխատանքի անհրաժեշտությունն առաջ է գալիս դասի ընթացքում ծագած որևէ խնդրահարույց իրավիճակից, որը հնարավոր է ինքնուրույն լուծել տանը: Ուստի անհրաժեշտություն է առաջանում շտկումներ մտցնելու նախապես կազմած պլանի մեջ՝ ելնելով ստեղծված իրավիճակից: Այսպիսով՝ տնային առաջադրանքն անմի-

ջականորեն կախված է սովորողների՝ նյութի յուրացման մակարդակից, և այն դժվար է պլանավորել նախապես: Բայց եթե նպատակադրվում է դպրոցականի անձնային որակների, չափորոշում սահմանված որոշակի կարողությունների զարգացումը, ապա անհրաժեշտ է մշակել երկարատև ուղղվածություն, այսինքն՝ պետք է նախապես պլանավորել մի շարք տնային աշխատանքներ: Տնային աշխատանքի պլանավորումն ամբողջ ուսումնական գործընթացի պլանավորման անհրաժեշտ բաղկացուցիչ մասն է: Այն անմիջականորեն կախված է ուսումնական գործընթացից:

4.5. ԻՆՁ ՄՏԱՀՈԳՈՒՄ Է ԱՅՆ ՀԱՐՑԸ, ՈՐ ՀԱՃԱՆՍ ԱՇԽԱԿԵՐՏՆԵՐԸ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ, ԿԱՐԾԵՍ ԻՄԻՋԻԱՅԼՈՑ: ԲՈԼՈՐԻ ՄՈ՞Տ Է ԱՅԴՊԵՍ, ԹԵ՞ ԵՍ ՊԱՏՃԱՌԸ ՊԻՏԻ ՓՆՏՐԵՄ ԻՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵՋ

Կան մի շարք գործոններ, որոնք նպաստում են տնային աշխատանքների կատարման ընթացքում ծագած թերություններին: Դրանք են՝

Առաջին: Աշակերտները տնային աշխատանքի կատարման ընթացքում չեն անդրադառնում թեմային, մեխանիկորեն կարդում են առաջադրանքը, չեն կարողանում հասկանալ դրա իմաստը և չեն կատարում ինքնաստուգում:

Երկրորդ: Աշակերտները չեն կարողանում ճիշտ պլանավորել տնային առաջադրանքների կատարման աշխատանքային ժամերը: Դա հանգեցնում է առաջադրանքների շուտավիույթ կատարմանը և ուսումնասիրվող նյութի մակերեսային յուրացմանը:

Երրորդ: Գրավոր տնային աշխատանքը շատ դպրոցականներ կատարում են առանց նախնական տեսական նյութի յուրացման: Այդ պատճառով էլ նրանք կատարվող առաջադրանքների մեջ թույլ են տալիս էական սխալներ և թերություններ:

Չորրորդ: Թերությունները ծագում են նաև սովորողների՝ տնային առաջադրանքներով ծանրաբեռնվածությունից:

Հինգերորդ: Բացասաբար է ազդում նաև սովորողների ուժից վեր բարդ առաջադրանքների հանձնարարումը:

Վեցերորդ: Ծանրաբեռնվածությունը հաճախակի պայմանավորված է ոչ միայն հանձնարարված տնային աշխատանքի մեծ ծավալով, այլև սովորողների նախապատրաստվածության մակարդակով:

Պետք է հնարավորինս հարազատ մնալ նաև հետևյալ մոտեցմանը՝ 2-4-րդ դասարաններում տնային աշխատանք նպատակահարմար չէ հանձնարարել հանգստյան, տոնական օրերին և արձակուրդներին:

Սովորողներին տնային աշխատանքով չծանրաբեռնելու նպատակով դրանք նպատակահարմար է կառուցել «մինիմում–մաքսիմում» սկզբունքով, այսինքն՝ պարտադիր բոլորի և նախատեսված այն աշակերտների համար, ովքեր առավել հետաքրքրված են առարկայով, հակում ունեն այդ առարկայի նկատմամբ:

4.6. ԻՆՉՊԵՄ ԿԱՐՈՂ ԵՄ ՕԳՆԵԼ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՄ՝ ՃԻՇՏ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գոյություն ունեն մի շարք կանոններ, որոնց պահպանումը կօգնի ձեզ այդ հարցում:

Առաջին: Սովորողներին անհրաժեշտ է իմանալ, որ գիտելիքների յուրացման և իմաստավորման ընթացքը պետք է կրի կենտրոնացված բնույթ: Սա նշանակում է, որ ծրագրային նյութի ամբողջական իմաստավորման և խորությամբ յուրացման համար անհրաժեշտ է սովորել դասերը ոչ թե «մի հայացքով», այլ որոշակի ժամանակի ընթացքում՝ մի քանի անգամ անդրադառնալով ուսումնասիրվող նյութին:

Երկրորդ: Տնային աշխատանքն անհրաժեշտ է կատարել հանձնարարված օրը, որովհետև դասի ընթացքում ընկալված նյութը մոռացվում է առաջին 10–12 ժամվա ընթացքում: Հետազոտությունները ցույց են տվել, որ նյութի ուսումնասիրումից մեկ ժամ հետո աշակերտները մոտաբերում են դրա 44 % –ը, իսկ 2,5–8 ժամ հետո՝ միայն 28%–ը:

Երրորդ: Սովորողներին նախապատրաստելով տնային աշխատանքի կատարմանը՝ անպայման անհրաժեշտ է ստեղծել հոգեբանական տրամադրվածություն այն ճիշտ կատարելու և ուսումնասիրվող նյութը ճկուն յուրացնելու համար: Ինչպե՞ս դա անել: Պետք է մանրակրկիտ առաջադրել այն քայլաշարը, որն անհրաժեշտ է տնային աշխատանքի կատարման համար: Անհրաժեշտ է հստակեցնել տնային առաջադրանքների կատարման նպատակը, չշտապել և ջանալ այնպես բացատրել, որ սովյալ նյութը խորապես իմաստավորվի ու յուրացվի:

Չորրորդ: Եթե տնային առաջադրանքը ներառում է դասագրքում գետեղված նյութի յուրացումը, ապա աշակերտներին պետք է սովորեցնել, որ դրա կատարման նախապատրաստումը պետք է սկսել դասագրքի սովյալ թեմայի շուրջ կատարվող աշխատանքից: Դասագրքով աշխատանքը կատարվում է հետևյալ կերպ. սկզբում պետք է մտաբերել այն, ինչ դասից մնացել է հիշողության մեջ, այնուհետև անհրաժեշտ է ուշադիր ընթերցել դասագրքի սովյալ նյութը՝ առանձնացնելով գլխավորը, կատարելով եզրահանգումներ, ձգտելով նյութի խոր յուրացմանն ու իմաստավորմանը: Դրանից հետո պետք է կիրառել վերարտադրելու և ինքնաստուգման հնարները. նյութի պատմում, ընթերցածի պլանի կազմում, դասագրքի մեթոդական ապարատի հարցերի պատասխանում և այլն: Եթե ինքնաստուգման ընթացքում ծագում են դժվարություններ, անհրաժեշտ է մեկ անգամ ևս աշխատել դասագրքով:

4.7. 2-4-ԲԴ ԴԱՍԱԲԱՆՆԵՐՈՒՄ ՄԱՅՐԵՆԻԻՑ ԻՆՉՊԻՍԻ՝ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ Է ՑԱՆԿԱԼԻ ՀԱՆՁՆԱԲԱՐԵԼ

Մայրենիից կարող են հանձնարարվել տնային աշխատանքի հետևյալ ձևերը. կարդալ տեքստը, որոշել, թե այն քանի մասից է բաղկացած, յուրաքանչյուր մասի համար մշակել հարցեր և պատասխանել դրանց, դասագրքում գետեղված հարցերով լրացնել մշակվածը, առանձնացնել տեքստից հենակետային բառերը, որոնք անձանոթ բառերի բացատրությունը բառարաններում, վերարտադրել տեքստը՝ հենվելով միայն հենակետային բառերի վրա, ըստ հենակետային բառերի՝ ստեղծել պլան-գծակարգ կամ մշակել քայլաշար և այլն:

Կարող են նաև առաջադրվել ոչ ստանդարտ բովանդակությամբ տնային առաջադրանքներ.

1. եզրույթների բառարանի ինքնուրույն կազմում՝ դրանք դասդասելով ըստ թեմատիկայի,
2. դասագրքի տեքստի հետազոտում,
3. խնդիրների ինքնուրույն կազմում,
4. ցուցադրական միջոցների, աղյուսակների, գծակարգերի, քայլաշարերի, համառոտագրերի մշակում,
5. կանոնների նոր տարբերակների մշակում, ձևակերպում և այլն,
6. թեստերի, առաջադրանքների, փոխատուգման համար քարտերի նախապատրաստում,
7. տեքստերի խմբագրում,
8. թույլ տված սխալների ուղղում,
9. նախապատրաստում ուսումնասիրվելիք թեմային. տեղեկատվության որոնում, հատվածների, հոդվածների որոնում,
10. հետազոտական, ստեղծագործական բնույթի առաջադրանքներ, որոնք ենթադրում են երկարատև ինքնուրույն աշխատանք (նախագծեր, ստեղծագործական աշխատանքներ և այլն), որոնք նպաստում են ինքնուրույն աշխատանք կատարելու կարողությունների զարգացմանը, ինքնարտահայտմանը, տարատեսակ ուսումնական գործունեություն կատարելու միջոցով ինքնադրուկորմանը: Այդպիսի տնային աշխատանքների կատարման ընթացքում մշակվում են բառարանից, լրացուցիչ և տեղեկատու գրականությունից ինքնուրույն օգտվելու կարողություններ:

4.8. Ի՞նչ ԲՆՈՒՅԹԻ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՆ ԳՈՐԾԱԴՐԵԼԻ 2-4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

2-4-րդ դասարաններում տնային առաջադրանքները հիմնականում կազմակերպվում են **Ֆրոնտալ, տարբերակված, անհատական, խմբային** ձևերով:

Ֆրոնտալ տնային աշխատանքն ամենատարածվածն է: Այդպիսի աշխատանքների անընդհատ կիրառումը չի նպաստում սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացմանը, այնուամենայնիվ, դրանք բացառել պետք չէ, քանի որ դրանց կատարման ընթացքում մշակվում են զանազան հմտություններ, ձևավորվում են կարողություններ:

Անհատական տնային աշխատանքը տրվում է, որպես կանոն, դասարանի առանձին աշակերտներին: Այս դեպքում ուսուցչին ավելի հեշտ է ստուգել կոնկրետ աշակերտի յուրացված գիտելիքի մակարդակը: Այսպիսի աշխատանքը կարող է կատարվել քարտերի վրա կամ աշխատանքային տետրում: **Անհատական** տնային աշխատանքները տրվում են, որպեսզի լրացվեն այն բացթողումները, որոնք ունեն սովորողներն առանձին թեմաների ուսումնասիրման արդյունքում: Դրանք ներառում են գործնական կարողությունների ու հմտությունների մշակմանը նպաստող մարզողական վարժություններ: Բացի դրանից՝ **անհատական** տնային աշխատանքները կարող են տրվել բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներին: Նրանց տրվող աշխատանքները ներառում են բարդ առաջադրանքներ՝ ստեղծագործական կարողություններն ու հսկումները զարգացնելու նպատակով:

Խմբային տնային աշխատանքի կատարման ընթացքում սովորողների որոշակի խմբեր կատարում են ինչ-որ առաջադրանք, որը ընդհանուր դասարանին տրվող առաջադրանքի մի մասն է: Օրինակ՝ «Գին: Քանակ: Արժեք» թեմայի ուսումնասիրման ընթացքում առաջադրվում է տեղեկություններ հայթայթել տարբեր ապրանքների գների մասին. առաջին խումբը տեղեկանում է գրենական պիտույքների գների մասին, երկրորդը՝ խաղալիքների, երրորդը՝ մթերքների: Այս դեպքում տնային առաջադրանքը նախապատրաստում է սովորողներին այն աշխատանք-

քին, որը պետք է անցկացվի դասի ընթացքում: Այդպիսի առաջադրանքները նպատակահարմար է հանձնարարել նախապես:

Տարբերակված տնային աշխատանքի մոտեցման հիմքը կրտսեր դպրոցականների ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն է, որն իրագործվում է տարբերակված առաջադրանքների միջոցով: Տնային աշխատանք հանձնարարելիս ամեն անգամ հարց է ծագում. ո՞ւմ ներուժը հաշվի առնել՝ ուժե՞ր, միջի՞ն, թե՞ թույլ աշակերտի: Հաճախ ուսուցիչներն առաջադրում են տնային աշխատանքներ միջին աշակերտի մակարդակով, որովհետև, եթե հանձնարարվի առաջադրանք թույլ աշակերտի մակարդակով, ապա ուժեղն այն կկատարի վեց անգամ արագ և չի ապրի այն հրճվանքը, որը կունենար իր ներուժին համապատասխան առաջադրանք կատարելիս: Իսկ եթե հանձնարարվի ուժեղ աշակերտի մակարդակով, ապա թույլ աշակերտը դրա վրա կկորցնի ավելի շատ ժամանակ, որը, բնականաբար, վատ կանդրադառնա նրա ինքնազգացման վրա. նա կկորցնի վստահությունն իր ուժերի նկատմամբ: Մինևույն առաջադրանքն ուժեղների համար կարող է լինել հեշտ, իսկ թույլերի համար՝ բարդ: Արդյունքում ո՛չ մեկի, ո՛չ էլ մյուսի մեջ չի մշակվի պատասխանատվություն տնային հանձնարարությունների կատարման առումով: Տնային աշխատանքներն արդյունավետ են միայն այն դեպքում, երբ բոլոր երեխաները պատրաստ են այն ինքնուրույն կատարելու: Տվյալ խնդրի իրականացման հիմնական ուղին տարբերակված մոտեցման ցուցաբերումն է: Ծավալի և բովանդակության նկատմամբ տարբերակված մոտեցումն իրականացվում է սովորողների առանձնահատկությունների և ճանաչողական հնարավորությունների հաշվառումով: Միայն այս դեպքում է կատարվում **գիտելիքների, կարողությունների և հմտությունների** ամրապնդում, տրամաբանական մտածողության, ինքնուրույնության ձևավորում, ուսումնառության նկատմամբ պատասխանատվության զգացումի վերահսկում:

Այսպիսով՝ տարբերակված տնային աշխատանք ասելով՝ հասկանում ենք աշխատանք, որն առաջադրելիս հաշվի են առնվում յուրաքանչյուր անձի անհատական առանձնահատկությունները (ընդունակություններ, հետաքրքրություններ, հակումներ, մտավոր գործունեության առանձնահատկություններ և այլն):

4.9. ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՏՈՒԳՄԱՆ ՊԱՀԱՆՁՐ ՄԻՇՏ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԻՔ Է ՏԱԼԻՍ՝ ՈՒՍՈՒՑՉԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՍՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ: ԱՐԴՅՈ՞Ք ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՆ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՁԵՎԵՐ, ՈՐՈՒՔ ԿԵՆԱՅԵՆ ՆԱԵՎ ՈՒՍՈՒՑՉԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Տնային աշխատանքի ստուգման մեթոդիկան պետք է լինի չափազանց ձկուն, իսկ դրա ձևերը՝ բազմազան, քանի որ ուսուցչի խնդիրն է վերահսկողության տակ վերցնել ոչ միայն յուրաքանչյուր աշակերտի տնային աշխատանքի կատարման պարբերականությունը, այլև սովորողների կողմից դրա կատարման ինքնուրույնությունը, ինչպես նաև ուսումնական նյութի յուրացման մակարդակը:

Տնային առաջադրանքի ստուգումը կատարվում է անընդհատ: Դասի խնդիրներից և բովանդակությունից ելնելով՝ տնային աշխատանքի ստուգումը կարող է կատարվել և՛ դասի սկզբում, և՛ ընթացքում, և՛ վերջում՝ համապատասխանեցնելով նյութի ուսումնասիրության փուլերին: Ստուգման ձևի ընտրությունը կախված է տնային առաջադրանքի տեսակից, նպատակից և դասի բովանդակությունից:

Տնային աշխատանքի ստուգումը կարող է իրականացվել տարբեր ուղիներով.

- Առավել տարածված է տնային աշխատանքի **Ֆրոնտալ ստուգումը**: Ուսուցիչը ստուգում է տնային աշխատանքի կատարումը, ամբողջ դասարանին տալիս է ընդհանուր հարց տնային աշխատանքի բովանդակության շուրջ, աշակերտները տալիս են համառոտ պատասխան, նշում են դժվարությունները, որոնք իրենց հանդիպել են աշխատանքը կատարելիս: Ուսուցիչը բացահայտում և շտկում է սխալները, ընդհանրացումներ է կատարում:
- Ավելի խոր անհատական ստուգումը ենթադրում է մեկից երեք աշակերտների բանավոր հարցում, որի ընթացքում մյուսները հետևում են պատասխաններին: Աշխատանքի ստուգման գործընթացում աշակերտներին կարելի է ներգրավել նաև ընտրովի ստուգում անցկացնելով. ուսուցիչը կանչում է աշակերտներից մե-

կին, որը ցուցադրում է աշխատանքը (գրելով գրատախտակին, կարդալով և այլն), իսկ մյուսները այդ պատասխանի հիման վրա ստուգում են իրենց աշխատանքները: Եթե ուսուցիչը բացահայտում է, որ հարցման ենթարկվող աշակերտը կատարել է սխալ, ապա հարցնում է, թե ում մոտ է այլ կերպ գրված, դասարանի օգնությամբ պարզաբանում է, թե ինչպես կարող են ձիշտ կատարել:

- Որոշ դեպքերում տնային աշխատանքի ստուգման փոխարեն սովորողներին տրվում են նույնատիպ վարժություններ: Դրանց կատարման հիմքով կարելի է հայտորոշել տնային աշխատանքի կատարման որակը:
- Կարելի է ստուգել անուղղակիորեն՝ թեստերի, այլ բնույթի ինքնուրույն տրված աշխատանքների միջոցով, այնպիսի առաջադրանքների, որոնց բովանդակության մեջ ներառված են նյութեր, որոնք համարժեք են տված տնային առաջադրանքներին:
- Ստուգման մի ձևն էլ դասի ընթացքում աշակերտի ակտիվության դիտարկումն է ուսուցչի կողմից (եթե այդ ակտիվության պատճառը տնային աշխատանքի ձիշտ կատարումն է):
- Ստուգման կարևոր ձև է փոխադարձ ստուգման կազմակերպումը՝ սխալները շտկելով: Դասարանի բոլոր աշակերտների ներգրավումը տնային աշխատանքի ստուգման գործընթացում, սխալների, դրանց վերացման ուղիների քննարկումը նպատակահարմար է, քանի որ այն յուրաքանչյուր աշակերտի տալիս է պատկերացումներ յուրացման և հնարավոր դժվարությունների հաղթահարման մասին: Հայտնի է, որ շատ սովորողներ ավելի հեշտությամբ սխալներ են գտնում ուրիշի աշխատանքում, քան իրենց: Փոխստուգման անցկացումն առաջին հերթին կրում է դաստիարակչական բնույթ, երկրորդ՝ բարձրացնում է սովորողների պատասխանատվությունը, նպաստում է ինքնագնահատման բարձրացմանը:

Եթե աշակերտը չի կատարել տնային աշխատանքը, ուսուցիչը պետք է բացահայտի դրա պատճառները: Դրանք կարող են լինել ամենատարբեր բնույթի: Այն դեպքում, երբ պարզվում է, որ առաջադրանքը բարդ է,

պետք է պարզել, թե ինչում է դժվարացել, և ինչպես կարելի է այն հաղթահարել:

Եթե տնային առաջադրանքը ուսուցիչը ոչ միշտ է դասապլանում առանձնացնում առանձին կետով, ապա տնային աշխատանքի ստուգումը դասի մի մասն է, և այն անհրաժեշտ է անպայման ներառել օրվա դասապլանում:

ԹԵՄԱ 5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԹՂԹԱՊԱՆԱԿ

- 5.1. «ԹՂԹԱՊԱՆԱԿ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՁԵՐՍ Է ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼ ԴՊՐՈՑ, ՈՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՈՐՈՇԱԿԻ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՆՔ ՀԱՆԴԻՊՈՒՄ: ԻՆՉ Է ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԹՂԹԱՊԱՆԱԿԸ, ԵՎ ԻՆՉՈ՞Ւ Է ԱՅՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾԱԾԵԼ ՏԱՐԲԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Իսկապես, թղթապանակի գործածությունը նորոյթ է: Հարցին առավել մանրակրկիտ անդրադառնալու նկատառումով հարկ ենք համարում այն մասնատել և անդրադառնալ թղթապանակի գործածությանն առնչվող այլ հարցերի ևս, որոնք, կարծում ենք, կհետաքրքրեն բոլորին:

«Ընդհանուր առմամբ ուսումնական թղթապանակը սովորողի ուսումնական գործունեության արդյունքների և նմուշների կազմակերպման, ինչպես նաև արտաքին աղբյուրների (ծնողներ, համադասարանցիներ, ուսուցիչներ և այլք), համապատասխան տեղեկատվական նյութերի հավաքածու է: Այն նախատեսված է սովորողի ուսումնական մակարդակի բազմակողմանի քանակական և որակական վերլուծության և նրա ուսումնական գործընթացի հետագա շտկման համար»¹:

Թղթապանակում ընդգրկված նյութերն արտացոլում են սովորողների ջանքերը, տարբեր բնագավառներում նրանց առաջընթացը և ձեռքբերումները: Ուսումնական թղթապանակը սովորողների ձեռքբերումների գնահատման և վերահսկման նոր ձև է, անձի զարգացումը խթանող միջոց:

Տարրական դասարանի աշակերտի թղթապանակի (պորտֆոլիո) գործածությունն անհրաժեշտ է, քանի որ այն ոչ միայն գեղեցիկ ձևավորված տեղեկությունների հավաքածու է նրա անձի և հետաքրքրությունների շրջանակի մասին, այլև շատ կարևոր փաստաթուղթ է այն մաս-

1. Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Ա. Արնաուդյան, Ա. Գյուլբուդաղյան, Ս. Խաչատրյան, Ս. Խրիմյան, Մ. Պետրոսյան, Երևան, 2004, Կրթության ազգային ինստիտուտի հրատարակչություն:

նագետների համար, ովքեր անմիջականորեն մասնակցում են երեխայի անձի ձևավորման գործընթացին՝ մանկավարժներ, հոգեբաններ, դպրոցի տնօրինություն, խմբակների ղեկավարներ:

5.2. Ի՞նչ ՆՊԱՏԱԿՈՎ Է ԳՈՐԾԱԾՎՈՒՄ ԹՂԹԱՊԱՆԱԿԸ

Թղթապանակը գործածվում է աշակերտների ուսումնական ձեռքբերումների արձանագրման, կուտակման և գնահատման նպատակով, որի արդյունքում հավաքվում և արձանագրվում են դպրոցականի զարգացման արդյունքները, տարբեր բնագավառներում նրա գործադրած ջանքերը, առաջընթացը և ձեռքբերումները, ցուցադրվում են նրա ունակությունները, հետաքրքրությունները, հակումները, նախասիրությունը, գիտելիքներն ու կարողությունները:

Թղթապանակը դառնում է «հաջողության պատմություն», որն օգնում է հետևելու սովորողների անհատական առաջընթացին:

Ներկայացնենք թղթապանակի գործածության 3 հիմնական նպատակները.

1. Թղթապանակի գործածումը հնարավորություն է տալիս, որ աշակերտների առաջադիմությունը գնահատելիս ուսուցիչները, ծնողները, տնօրինությունը և հենց իրենք՝ աշակերտները, իրենց գիտակցության մեջ կատարեն շեշտադրման փոփոխություն և կարևորեն ոչ թե այն հանգամանքը, թե ինչ չգիտի և ինչ չի կարող անել կրտսեր դպրոցականը, այլ այն հանգամանքը, թե ինչ գիտի և ինչ կարող է անել սովորողը, ինչի է ընդունակ նա, և, վերջապես, ուսուցիչները կատարեն մանկավարժական շեշտադրման փոփոխություն գնահատումից ինքնագնահատում:
2. Այնպիսի պանակ է ստեղծվում, որտեղ հավաքվում են սովորողների ուսումնական գործունեության ձևերը, միջոցները (գործիքները), նրանց պատրաստած տարբեր տեղեկագրերը, ինքնաշեն գրքերը, որոնք հնարավորություն են ընձեռում սովորողներին լուծելու որոշակի խնդիրներ:

3. Թղթապանակը հնարավորություն է ընձեռում ժամանակ առ ժամանակ անդրադարձ կատարելու և խորհելու սովորողների ուսման որակի, նրանց ձեռքբերումների մասին և ծրագրելու հետագա աշխատանքը:
4. Այսպիսով՝ տարրական դպրոցում այսպիսի աշխատանքի ընդհանուր նպատակն այն է, որ աշակերտներն աշխատանքի փորձ ձեռք բերեն իրենց իսկ ուսումնական ձեռքբերումների ինքնագնահատման, ստեղծած նյութերի համակարգման, ուսումնական գործունեության ծրագրավորման, վերլուծման և գնահատման, իրենց ձեռքբերումների ներկայացման ձևերի շուրջ:

5.3. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ Ի՞ՆՉ ԽՆԴԻՐՆԵՐ Է ԼՈՒԾՈՒՄ ԹՂԹԱՊԱՆԱԿԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական թղթապանակը ոչ միայն գնահատման ժամանակակից արդյունավետ ձև է, այլև գործող միջոց այնպիսի կարևորագույն մանկավարժական խնդիրների լուծման համար, որոնք նպաստում են.

- յուրաքանչյուր աշակերտի համար իր հաջողությունները ցուցադրելու, դրանցով հպարտանալու իրավիճակի ստեղծմանը,
- ուսումնական դրդապատճառների ձևավորմանը,
- աշակերտի ակտիվության և ինքնուրույնության խրախուսմանը, ուսումնառության և ինքնակրթության հնարավորությունների ընդլայնմանը, ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը,
- անդրադարձ կատարելու և գնահատողական գործունեություն կազմակերպելու կարողությունների զարգացմանը, ստեղծագործական գործունեություն ծավալելու կարողությունների ձևավորմանը,
- ուսումնական գործունեություն ծավալելու կարողությունների ձևավորմանը, այսինքն՝ սովորելու կարողությունների ձևավորմանը, նպատակների առաջադրում, պլանավորում և այլն,

- յուրաքանչյուր երեխայի անհատական ունակությունների առավելազույնս բացահայտմանը,
- աշակերտին հասարակական կյանքում ներգրավելու համար լրացուցիչ պայմանների և հնարավորությունների ստեղծմանը,
- աշակերտի՝ ընտանիքի հետ փոխհարաբերությունների ամրապնդմանը, երեխայի զարգացման արդյունքների և դպրոցի միասնական մանկավարժական գործունեության նկատմամբ ծնողների հետաքրքրվածության բարձրացմանը:

5.4. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ Ի՞ՆՉ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ԹՂԹԱՊԱՆԱԿԸ

Թղթապանակը կրթական գործընթացում իրականացնում է հետևյալ գործառույթները.

Ախտորոշիչ: Արձանագրում է որոշակի ժամանակաընթացքում առկա առաջադիմությունը, որն էլ հնարավորություն է ընձեռում հետևելու աշակերտի կրթական աճին:

Նպատակադրում: Հետապնդում է կրթական նպատակներ, որոնք առաջադրված են չափորոշիչներով:

Դրդապատճառային: Խրախուսում է երեխաների, ուսուցիչների և ծնողների փոխհամագործակցությունը՝ դրական արդյունքների հասնելու համար:

Բովանդակային: Առավելազույն ձևով բացահայտում է ձեռքբերումներն ու կատարված աշխատանքները: Թղթապանակում ընդգրկված են տարբեր աշխատանքների և կրթական արդյունքների հավաքածուներ, որոնք ցույց են տալիս սովորողների ջանքերը, առաջադիմությունը և տարբեր առարկաներից ձեռքբերումները:

Զարգացնող: Ապահովում է դասարանից դասարան զարգացման, ուսուցման և կրթության շարունակականությունը:

Վարկանիշային: Ցույց է տալիս կարողությունների և հմտությունների մակարդակն ու շրջանակը:

Հաշվետվական: Այն ուսումնական գործընթացի յուրօրինակ հաշվետվություն է. ինչ իմացավ երեխան, և ինչպես անցավ ուսուցման գործընթացը, ինչպես է նա մտածում, վերլուծում, համադրում, ստեղծում, բացահայտումներ կատարում, մտավոր, զգայական և սոցիալական մակարդակով ինչպես է համագործակցում իր հասակակիցների հետ և այլն:

Թղթապանակն աշակերտի ճանաչողական, ստեղծագործական աշխատանքի ինքնագնահատականն է, անդրադարձը՝ իր սեփական գործունեությանը:

Թղթապանակի ձևավորման աշխատանքները հնարավորություն են ընձեռում աշակերտներին դառնալու իրենց ուսուցման գործընթացի ակտիվ մասնակիցը: Ուսուցման գործընթացն ընդգրկում է և՛ ձեռքբերումները, և՛ գնահատման գործընթացը, և՛ իր գործունեության անդրադարձը:

Յուրաքանչյուր փաստաթուղթ կամ նյութ տրամաբանական քայլ է կամ յուրօրինակ հիմնաքար, որը հնարավորություն է ընձեռում ստեղծելու առավել իրական պատկեր երեխայի, նրա հետաքրքրությունների, նախասիրությունների շրջանակի մասին:

5.5. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԳՈՐԾԱԾԵԼ ԹՂԹԱՊԱՆԱԿԸ

Ինչպես արդեն նշվեց, տարրական դասարանների դպրոցականի թղթապանակը տարրական կրթության առարկայական ծրագրերի պլանավորած արդյունքների, ձեռքբերումների գնահատման համակարգի բաղադրիչներից է և կարևոր դեր է խաղում միջին դպրոցի 5–րդ դասարան փոխադրվելու ընթացքում նրա հետագա ուսումնառության և զարգացման ուղղությունների որոշակիացման համար:

Թղթապանակի ձևավորման, նյութերի պարբերաբար կուտակման և ծնողներին, դպրոցի տնօրինությանը դրա բովանդակության ներկայացման կազմակերպման պատասխանատվությունն ամբողջովին կրում է դասվարը:

Աշակերտը ցանկացած պահի ցանկացած բաժնում կարող է տեղադրել նյութեր, որոնք վկայում են իր ձեռքբերումների մասին: Երկրորդ դասարանից սկսած՝ ուսուցչի ուղղորդմամբ՝ անցկացվում է թղթապա-

նակի նյութերի ինքնագնահատում: Ուսումնական տարվա ընթացքում սովորողների ցանկությամբ, իսկ տարեվերջին արդեն բոլորի մասնակցությամբ անցկացվում է թղթապանակի շնորհանդես:

Թղթապանակը պահվում է դասարանում: Այլ կրթօջախ տեղափոխվելիս այն անձնական գործերի հետ տրվում է ծնողին:

Ճիշտ է, թղթապանակը ձևավորվում է ընդունված կարգի համաձայն, բայց սովորողներն իրավունք ունեն թղթապանակի մեջ իրենց ցանկությամբ ընդգրկելու տարբեր բաժիններ, նյութեր և այլն, որոնք արտացոլում են սովորողների անհատական առանձնահատկությունները:

Բոլոր գրառումները կատարվում են կոկիկ, հասկանալի ձեռագրով: Թղթապանակի արտաքին ձևավորումը և դրանում ընդգրկված նյութերը պետք է պատճառեն գեղագիտական հաճույք:

Թղթապանակի գործածությունը սկսվում է տարրական դասարաններից, որն էլ պայմանավորված է առաջին հերթին կրտսեր տարիքի երեխաների հոգեբանաֆիզիոլոգիական առանձնահատկություններով: Կրտսեր դպրոցականն իր տարիքային առանձնահատկությունների պատճառով ամբողջովին չի գիտակցում գնահատանիշի իմաստը: Այն գնահատանիշը, որն ինքը ստացել է ինչ–որ գործունեության շնորհիվ, ընկալում է որպես իր անձի գնահատում, որն էլ իր ազդեցությունն է կրում ընտանիքի և դպրոցի հարաբերությունների վրա: Թղթապանակը լրացնում է ուսուցանող և միավորային գնահատման այլ տեսակները՝ նպաստելով կրտսեր դպրոցականի առավել արագ և արդյունավետ հարմարեցմանը դպրոցին:

Թղթապանակը՝ որպես ուսուցանող գնահատման նոր և արդիական ձև, հնարավորություն է ընձեռում հետևելու անձի զարգացման անհատական ուղուն ուսումնառության ողջ տարիների ընթացքում, գործունեության տարբեր բնագավառներում:

5.6. ՈՐ ԴԱՍԱՐԱՆԻՑ ՍԿՍԱԾ ԿԱՐԵԼԻ Է ԹՂԹԱՊԱՆԱԿ ԳՈՐԾԱԾԵԼ

Թղթապանակի ստեղծման անհրաժեշտությունը ծագում է առաջին դասարանի հենց առաջին օրերին, երբ հարկ է լինում գրառել այն, ինչի մասին երեխաները պատմում են առաջին դասերի ընթացքում, քննարկում են այն «խաղի կանոնները», որոնց միջոցով կարգավորվում է իրենց կյանքն առաջին դասարանում: Դասի ընթացքում միասնական քննարկման արդյունքում ծագում է այն գաղափարը, որ պետք է մտածել այնպիսի «տեղ», որտեղ կարելի է մի կողմից հավաքել բոլոր հետաքրքիր «կանոնները» ու «դպրոցական գյուտերը», մյուս կողմից՝ հավաքել իր տպավորությունները, դատողություններն իր, դասարանի և դպրոցի մասին: Այսպիսով՝ առաջին դասարանի դասընթացի հիմնական արդյունքն է դառնում հատուկ ձևավորված «թղթապանակը», որտեղ արդեն կան լրացված էջ-պանակներ իր, ընտանիքի, դասարանի, դպրոցի, այն կանոնների մասին, որոնցով դասարանը պայմանավորվել է ապրել առաջին դասարանում: Բացի դրանից՝ թղթապանակում ներառվում են «հայտորոշիչ» աշխատանքների արդյունքները, որոնց օգնությամբ յուրաքանչյուր երեխան և ամբողջ դասարանը կարող են տեսնել այն, թե ինչ գիտեին նրանք մինչև դպրոց գալը: Այդ աշխատանքները տեղավորվում են առանձին պանակներում:

Ուսումնական տարվա ընթացքում թղթապանակում հավաքվում են ուսումնական նյութերը, որոնք առանց որևէ համակարգի տեղավորվում են պանակներում: Ուսումնական տարվա վերջում՝ ապրիլի երկրորդ կեսից մինչև մայիսի վերջ (այս ժամանակամիջոցը երբեմն անվանում են «ուսումնական տարվա ընթացքում կատարած ձեռքբերումների անդրադարձային փուլ»), կատարվում են թղթապանակի նյութերին անդրադարձ կատարելու աշխատանքները:

Առաջին դասարանցիների առջև դրվում է հետևյալ խնդիրը. միասնական ուժերով տեսակավորել հավաքված նյութը, ինչ-որ ձևով դրանք դասակարգել և բաժիններին անուններ դնել: Միանգամից պետք է նշել, որ առաջին դասարանում խորհուրդ չի տրվում օրագրում բաժիններ առանձնացնել ըստ դպրոցական առարկաների:

Թղթապանակի ձևավորման և գործածման ընթացքում առաջին դասարանցիները պետք է լուծեն հետևյալ հիմնական խնդիրները.

1. պարզել, թե ինչպիսի խմբերի կարելի է բաժանել թղթապանակի բոլոր նյութերը և ինչպես կարելի է այդ խմբերն անվանել (կարևոր է, որ թղթապանակը լինի հավաքված նյութերով պանակների հավաքածու, ինչը հնարավորություն է տալիս ամբողջ չորս տարիների ընթացքում աշակերտներին անընդհատ անդրադարձ կատարելու իրենց նյութերին, տեղափոխելու նյութերը մի պանակից մյուսը՝ կախված աշակերտի առջև դրված խնդիրներից),
2. որոշակիացնել ուսումնական ձեռքբերումների ուղին՝ համեմատելով «հայտորոշիչ» աշխատանքների արդյունքների հետ,
3. պատրաստել ուսումնական տարվա ընթացքում կատարած անհատական աշխատանքները՝ դասարանի ձեռքբերումների ցուցահանդեսում ցուցադրելու համար:

Կոլեկտիվ աշխատանքի ընթացքում առաջին դասարանցիների թղթապանակը բաժանվում է մասերի (բաժինների), որոնք ժամանակի ընթացքում կարող են և փոխվել, բայց առաջին դասարանի վերջում դրանք կարող են ունենալ հետևյալ բաժանումները (ի դեպ, բաժինների անվանումները յուրաքանչյուր դպրոցում կարող են լինել տարբեր. կարևորը, որ երեխաներն իրենք որոշեն դրանք).

- **Ես և իմ դասարանը** (պատմություններ իր, ընտանիքի, դասարանի, դասարանում կատարված իրադարձությունների և դասարանի ձեռքբերումների մասին, լուսանկարներ, դասարանի կանոններ),
- **Իմ բացահայտումները** (այստեղ տեղավորվում են մանկական բացահայտումները, այն նոր տեղեկությունները, որ երեխաները ստացել են դպրոցական առաջին օրերից),
- **Այս ուսումնական տարում իմ ձեռքբերումները** (այստեղ տեղ են գտնում մանկական ստեղծագործական աշխատանքները, անհատական բացահայտումները, ամենալավ գրավոր աշխատանքները)

տանքները, հնարավոր է նաև տարբեր մրցանակները, պատվոգրերը և այլն),

- **Մեծերն իմ մասին** (այս բաժնում տեղավորվում են մանկավարժների, ծնողների գնահատականները տվյալ երեխայի մասին):

Հետագա տարիներին թղթապանակի գլուխները կարող են փոփոխվել, լրացվել, դրանց բովանդակությունը նույնպես կարող է ենթարկվել փոփոխության:

Երկրորդ ուսումնական տարին սկսվում է «տարվա խնդիրների միասին պլանավորման փուլով», որը սկսվում է «մուտքային» աշխատանքից: «Մեկնարկի փուլի» արդյունքն էլ ծառայում է ամբողջ ուսումնական տարվա գլխավոր կողմնորոշիչ՝ հետագա գործունեության ծավալման համար: Հետագա ուսումնական տարիների ընթացքում դպրոցականներն անընդհատ անդրադարձ կկատարեն իրենց անցած նյութերին և կվերադասավորեն, կմիավորեն և կհամակարգեն դրանք՝ կախված ընթացիկ տարվա խնդիրներից:

Երեխաների գնահատման այդ ձևը, ինչպիսին թղթապանակն է, պետք է ամենից առաջ կրի բնութագրող բնույթ, լինի ոչ թե ձև, այլ գործիք, որի օգնությամբ կրտսեր դպրոցականի մեջ կձևավորվի վերահսկողա-գնահատողական ինքնուրույնություն:

5.7. ԻՆՉ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԿԵՐՏԻ ԹՂԹԱՊԱՆԱԿԸ

Թղթապանակի կազմում կարող են տեղ գտնել աշակերտների ձեռքբերումները ուսումնական ողջ գործունեության ընթացքում:

Այսպիսով՝ թղթապանակը փաստաթղթերի, աշակերտների ինքնուրույն աշխատանքների հավաքածու է: Այդ փաստաթղթերի, աշխատանքների հավաքածուն մշակվում է ուսուցչի կողմից: Սա նշանակում է, որ ուսուցիչը տալիս է՝

- հանձնարարականներ աշակերտին՝ թղթապանակում տեղադրվելիք նյութերի ընտրության վերաբերյալ (տրվում է ոչ թե կոնկրետ

հրահանգ, թե որ նյութը պետք է ընտրել, այլ ինչ չափանիշներ հաշվի առնելով պետք է ընտրել),

- հարցաթերթիկներ ծնողների համար, որոնք լրացնելիս ծնողները պետք է ուշադիր ծանոթանան իրենց երեխայի աշխատանքներին,
- հարցաթերթիկներ՝ փորձարարական խմբի համար ներկայացվող թղթապանակը գնահատելու համար:

Տարրական դասարանի աշակերտի թղթապանակը կարող է ունենալ տարբեր կառուցվածք: Մենք ներկայացնում ենք դրանցից մեկը: Ներքոհիշյալ թղթապանակի նմուշը չի սահմանափակում այլ կառուցվածքի թղթապանակների գործածությունը:

Թղթապանակի բովանդակության նմուշօրինակ

1. **Տիրոջաթերթ** (անունը, ուսուցիչը, թղթապանակի ստեղծման ամսաթիվը):
2. **«Իմ փոքրիկ մոլորակը»** բաժինն ընդգրկում է «Աշակերտի անձնական տվյալները» թերթիկը՝ աշակերտի բնութագրիրը, լուսանկարը (այս բաժինը լրացնում են ծնողները և դասվարը): Ընդ որում՝ անհրաժեշտ է աշակերտին լուսանկարի ընտրության հնարավորություն ընձեռել, որպեսզի նա ներկայացնի իրեն այնպիսին, ինչպիսին պատկերացնում է և ինչպիսին ուզում է ներկայանալ շրջապատին: Այս բաժնում կարող է ընդգրկվել.
 - աշակերտի նկարած իր պատկերը՝ «Սա ես եմ» խորագրով,
 - «Իմ ձեռքը» խորագրով ձեռքի ափի նկարը, որտեղ յուրաքանչյուր մատիկի վրա գրված է, թե ինչ է երեխան մտածում իր մասին, ինչպիսին է ինքը (բարի, պարտաճանաչ և այլն),
 - շարադրություն՝ «Ինչն է ինձ ուրախացնում և ինչը՝ տխրեցնում» թեմայով,
 - շարադրություն՝ «Իմ ամենանվիրական երազանքը» թեմայով,
 - շարադրություն՝ «Ինչ կդառնամ ես, երբ մեծանամ» թեմայով և այլն:

3. «Իմ ձեռքբերումները» բաժինն ունի երկու ենթաբաժին.

1) «Աշակերտի ուսումնաճանաչողական գործընթացը». այս բաժինն ընդգրկում է տարբեր առարկաներից աշակերտի ձեռքբերումները: Այդպիսի աշխատանքների օրինակներ կարող են լինել՝

- **մայրենիից, օտար լեզուներից՝** թելադրություններ, արտագրություններ, փոխադրություններ, շարադրություններ տրված թեմայով կամ իր նախընտրած թեմայով, ձայնագրություններ, «ընթերցողի օրագրեր», ինքնավերլուծական նյութեր և այլն,
- **մաթեմատիկայից՝** մաթեմատիկական թելադրություններ, հետազոտության արդյունքներ, ուսումնական խնդիրների լուծման գրառումներ, մոդելավորման աշխատանքներ և այլն,
- **«Ես և շրջակա աշխարհը» առարկայից՝** դիտարկման օրագրեր, հարցազրույցներ, ստեղծագործական աշխատանքներ, ինքնավերլուծության և անդրադարձի նյութեր և այլն,
- **արվեստի բնագավառի առարկաներից՝** ձայնագրություններ, լուսանկարներ, տեսաֆիլմեր, երաժշտական ստեղծագործությունների նկարագրողումներ, նկարագրողումներ տրված թեմայով, ստեղծագործական աշխատանքի նմուշներ,
- **տեխնոլոգիայից՝** լուսանկարներ, տեսաերիզներ իր գործունեության վերաբերյալ, ստեղծագործական աշխատանքի նմուշներ,
- **Ֆիզկուլտուրայից՝** տեսաերիզներ իր գործունեության վերաբերյալ, դիտարկման և ինքնաստուգման օրագրեր, ինքնուրույն կազմած օրվա ռեժիմ, ֆիզիկական վարժությունների նկարագրություններ և այլն:

Բոլոր առարկաների բաժիններում պարտադիր պետք է տեղ գտնեն՝

- ✓ նախագծային աշխատանքներ. նախագծի թեման, աշխատանքի նկարագրությունը, հնարավոր է նաև նախագծային գործունեության և ստացված արդյունքների վերաբերյալ լուսանկարներ,
- ✓ հետազոտական աշխատանքներ. տեղեկատվություն՝ ուսումնասիրվող նյութերի վերաբերյալ, աշխատանքի նկարագրություն, արդյունք և այլն:

Աշակերտն այս բաժինը լրացնում է հաջող գրված ստուգիչ գրավոր աշխատանքներով, հետաքրքիր նախագծերով, ընթերցած գրքերի մասին հղումներով, կարդալու արագության դինամիկան ցույց տվող գծագրերով և այլն (լրացնում են դասվարը, տարբեր առարկաների ուսուցիչները, հոգեբանը, լոգոպեդը, ինքը՝ սովորողը): Կարող են կիրառվել տարբեր աշխատանքների նմուշներ, որոնք կատարվել են ինչպես տարբեր ուսումնական առարկաների դասերի, այնպես էլ արտադասարանական պարապմունքների ընթացքում: Թղթապանակի հիմնական բաղադրամասն են կազմում առանձին առարկաներից հայտորոշիչ, թեմատիկ, կիսամյակային ամփոփիչ աշխատանքները:

Մնացած աշխատանքները պետք է ընտրվեն այնպես, որ դրանց հավաքածուն ցույց տա աշակերտների առաջադիմության աճը, գիտելիքների ծավալն ու խորությունը, ուսումնական գործողություններ կատարելու կարողությունների ձևավորվածության մակարդակը:

- 2) «Աշակերտի հոգեբարոյական զարգացումը» բաժնում ընդգրկվում են նյութեր տարբեր միջոցառումների, մրցույթների, մրցումների, օլիմպիադաների, նկարների ցուցահանդեսների մասնակցության մասին (լրացնում է դասվարը, հոգեբանը, աշակերտի ծնողը): Բոլոր միջոցառումները, որոնք անցկացվում են ուսումնական գործունեության շրջանակներից դուրս, կարելի է համարել հասարակական աշխատանք: Այս բաժինը կարելի է ձևավորել լուսանկարներով և համառոտ հաղորդագրություններով:

4. **«Իմ ստեղծագործական աշխատանքները».** այս բաժնում աշակերտը տեղադրում է իր ստեղծագործական աշխատանքները՝ նկարներ, հեքիաթներ, բանաստեղծություններ: Եթե ծավալուն աշխատանք է, ապա անհրաժեշտ է տեղադրել այդ աշխատանքի լուսանկարը: Աշակերտին պետք է տալ լիակատար ազատություն՝ այս բաժնում նյութեր տեղադրելու հարցում: Մի կարևոր հանգամանք ևս. եթե աշխատանքը ցուցադրվել է որևէ ցուցահանդեսում կամ ներկայացվել է որևէ մրցույթի, ապա անհրաժեշտ է տեղեկատվություն տալ այդ մասին. անվանումը, երբ, որտեղ և ում կողմից է այն անցկացվել: Լավ կլինի, որ այդ տեղեկատվությունը տեղադրվի լուսանկարի հետ:
5. **«Իմ հասարակական աշխատանքները»** բաժնում ընդգրկվում են այն բոլոր միջոցառումների մասին ակնարկները, որոնք անցկացվում են ուսումնական գործունեության շրջանակներից դուրս: Դա կարող է լինել մասնակցություն որևէ դպրոցական միջոցառմանը, որևէ տոնական հանդեսի ընթացքում ասմունքած բանաստեղծություն կամ աշակերտի կողմից պատրաստված պատի թերթի լուսանկար և այլն: Շատ տարբերակներ կան: Ցանկալի է այս բաժինը ձևավորել լուսանկարներով և համառոտ մեկնաբանություններով:
6. **«Իմ աշխարհը»** բաժնում (լրացնում է երեխան՝ իր ցանկությամբ) կարելի է ընդգրկել ցանկացած տեղեկատվություն, որը հետաքրքիր և արժեքավոր է երեխայի համար: Հնարավոր են հետևյալ ենթաբաժինները.
- 1) **«Իմ անունը».** սա տեղեկություն է այն մասին, թե ինչ է նշանակում իր անունը, կարելի է գրել նշանավոր մարդկանց մասին, որոնք կրում են այդ նույն անունը: Եթե երեխան ունի հազվադեպ հանդիպող կամ հետաքրքիր ազգանուն, ապա կարելի է որոնել տեղեկություն այն մասին, թե ինչ է այն նշանակում:
 - 2) **«Իմ ընտանիքը».** բաժնում կարելի է պատմել ընտանիքի անդամների մասին կամ կազմել ոչ ծավալուն պատմվածք ընտանիքի մասին: Կարելի է կազմել ընտանիքի տոհմաճառը,

ստեղծել տոհմանշանը՝ համապատասխան մեկնաբանություններով, թե ինչ է նշանակում տոհմանշանի յուրաքանչյուր տարրը:

- 3) «**Իմ քաղաքը**». պատմություն է հարազատ քաղաքի (գյուղի, ավանի) հետաքրքիր վայրերի մասին: Այստեղ պետք է տեղադրել տնից դպրոց երթուղու գծագիրը: Կարևոր է, որ նշված լինեն վտանգավոր տեղերը (խաչմերուկները, անցումները և այլն): Այս ենթաբաժնում տեղ են գտնում երեխայի տան հասցեն և քաղաքի, գյուղի, ավանի, փողոցի անվան պատմական նշանակությունը:
- 4) «**Իմ ընկերները**». այս ենթաբաժնում տեղ կարող են գտնել հետևյալ խորագրերը.
 - ա) «**Իմ դասընկերները**». տեղադրվում են ընկերների լուսանկարները, տեղեկություններ նրանց հետաքրքրությունների, նախասիրությունների մասին:
 - բ) «**Իմ սիրելի կենդանին**». այստեղ անհրաժեշտ է նկարել սիրած կենդանուն և գրել շարադրություն նրա մասին (եթե չկա սիրելի կենդանի, կարելի է նկարել և գրել սիրելի խաղալիքի մասին):
 - գ) «**Իմ օգնականները**». այստեղ կարելի է գրել դասագրքում հանդիպած հերոսների մասին՝ կազմելով մի փոքրիկ պատմվածք կամ հեքիաթ, որտեղ հանդես կգան այդ հերոսները:
- 5) «**Իմ նախասիրությունները**». ամփոփում է ոչ մեծ պատմություններ այն մասին, թե ինչ նախասիրություններ ունի երեխան: Այստեղ կարելի է գրել սպորտային խմբակների պարապմունքների, այլ դպրոցներում սովորելու մասին (երաժշտական, պարային և այլն):
- 6) «**Իմ դպրոցը**». պատմություն է դպրոցի և մանկավարժների մասին: Ընդգրկում է դպրոցի լուսանկարը, նկարագրությունը,

թե քանի մարդ է սովորում, տնօրենի անուն–ազգանունը, հիմնը, զինանշանը, ավանդույթները և այլն:

7) «**Իմ սիրելի դպրոցական առարկաները**». ոչ մեծ գրառումներ են սիրելի դպրոցական առարկաների մասին, որոնք կառուցված են հետևյալ սկզբունքով. «Ինձ դուր է գալիս, որովհետև...»:

7. «**Իմ տպավորությունները**» բաժնում ընդգրկվում են այն ստեղծագործական տնային աշխատանքները, որտեղ ներկայացվում է ոչ միայն կազմակերպված էքսկուրսիաների, հաճախած թատրոնների, կինոթատրոնների, ցուցահանդեսների, թանգարանների մանրամասն նկարագրությունը, այլև հնարավորություն են ունենում արտահայտելու իրենց տպավորությունները:

8. «**Իմ հաջողությունների սանդղակը**» բաժինն ընդգրկում է վերլուծություններ ուսումնառությունների արդյունքների վերաբերյալ:

Դրանք կարող են լինել հետևյալ ձևերով.

- դիտարկման թերթիկներ,
- անհատական ձեռքբերումների քարտեր տարբեր առարկաներից,
- կարդալու տեխնիկայի աճի զարգացման վերաբերյալ դիագրամներ,
- սովորողի ուսումնառության մակարդակի բնութագիրը,
- ինքնագնահատման թերթիկներ,
- սովորողի օրագիրը,
- ծնողներին հասցեագրված հարցաթերթիկներ և այլն:

Այս բոլորը նպաստում են, որպեսզի ուսուցիչը՝

- ✓ հետևի երեխաների առաջընթացին,
- ✓ որոշի յուրաքանչյուրի զարգացման մոտակա գոտին,
- ✓ ցույց տա մանկավարժական օգնություն յուրաքանչյուր երեխային,

- ✓ ձևավորի տարամակարդակ առաջադրանքների գանձատուփ ծրագրային կոնկրետ թեմաների շուրջ,
- ✓ մշակի անհատական ստուգման տարբերակներ,
- ✓ կատարի եզրահանգումներ դասավանդման որակի, ուսումնառության մասին:

Այս զանազան թերթիկների միջոցով ուսուցիչն արձանագրում է սովյալ փուլում ձևավորվող կարողությունների ընթացիկ գնահատականները: Դրանք նպաստում են, որ աշակերտը տեսնի իր առաջընթացը և ձևավորի ինքնաստուգման և ինքնագնահատման կարողություններ: Իսկ ուսուցչին հնարավորություն է ընձեռում հետևելու գիտելիքների ձեռքբերման, կարողությունների և հմտությունների ձևավորման գործընթացին և, անհրաժեշտության դեպքում, ժամանակին իրականացնելու նպատակաուղղված շտկումներ:

9. **«Աշխատանքներ, որոնցով ես հպարտանում եմ»** բաժնում տեղադրվում են պատվոգրեր, շնորհակալագրեր, դիպլոմներ և այլն:
10. **«Կարծիքներ և ցանկություններ»** բաժինն ընդգրկում է թերթիկներ, որտեղ դասվարն արտահայտում է իր կարծիքը, երաշխավորությունները և ցանկությունները: Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում դասվարը գրում է աշակերտի բնութագիրը: Իրենց կարծիքները, ցանկությունները կարող են գրել նաև այլ առարկաների ուսուցիչները, ընկերները, ծնողները և այլն: Հենց ինքը՝ աշակերտը, կարող է գրել իր կարծիքը, եզրահանգումները կատարված աշխատանքների մասին:
11. **«Բովանդակություն»** բաժինն ընդգրկում է բաժինների ցանկը՝ ըստ հերթականության:

5.8. ԻՆՉՈ՞Վ Է ԿԱՐԵՎՈՐՎՈՒՄ ԹՂԹԱՊԱՆԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԱՅՆ

Թղթապանակը գնահատելիս երեխաները սովորում են վերլուծել իրենց սեփական աշխատանքը, ձեռքբերումները, գնահատել իրենց հնարավորությունները և տեսնել դժվարությունների հաղթահարման, ավելի բարձր առաջադիմության ձեռքբերման միջոցները: Նրանց ուսումնական գործունեությունը, պատասխանատվությունն իրենց աշխատանքի նկատմամբ դառնում է ավելի գիտակցված: Աշակերտի ինքնագնահատականը իրական գնահատականի կարևոր մասն է: Նա հնարավորություն է ընձեռում աշակերտին քննադատաբար վերաբերվելու իր առաջընթացին, վերահսկելու իր ուսումնական գործընթացը և դրա արդյունքները:

Չափազանց կարևոր է թղթապանակի գնահատման գործընթացում ծնողների, ուսուցչի կողմից ընտրված փորձագետների ակտիվ մասնակցությունը: Այսպիսով՝ ստեղծվում է այս կամ այն բնագավառում աշակերտի առաջադիմության ամբողջական պատկերը:

Թղթապանակի նյութերի հիման վրա հավաքած գնահատականների արդյունքով կատարվում են եզրահանգումներ՝

1. սովորողների համապիտանի և առարկայական գործողությունների կատարման հնարների ձևավորման, ինչպես նաև այն հիմնավոր գիտելիքների մասին, որոնք ապահովում են կրթության շարունակականության ապահովումը միջին դպրոցում,

2. սովորելու կարողության ձևավորման մասին, որը ենթադրում է ինքնագարգացման կարողություն՝ ուսումնաձանաչողական և ուսումնագործնական խնդիրների առաջադրման և լուծման նպատակով,

3. անձի զարգացման հիմնական ոլորտներում անհատական առաջընթացի մասին. դրդապատճառային, ճանաչողական, զգայական, կամային, ինքնադրսևորման:

Թղթապանակի գնահատման ձևը որոշում է ուսուցիչն աշակերտների և ծնողների հետ: Դա կարող է լինել.

- ուսումնական տարվա ընթացքում թղթապանակների ցուցահանդեսի ձևով (սովորողների ցանկությամբ),

- ուսումնական տարվա վերջում շնորհանդեսի ձևով (կարող է անցկացվել դասղեկի ժամին, ծնողական ժողովին):

Թղթապանակը գնահատում է ուսուցիչը (**դասավարը**): Ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչն, ըստ իր հայեցողության, կարող է գնահատել թղթապանակում ընդգրկված ստեղծագործական բնույթի կամ այլ բաժնի աշխատանքները, եթե դրանք կապված են ուսումնական որոշակի խնդիրների լուծման հետ (գրքի կամ թատրոնի սեղմագրի, էքսկուրսիայի մասին գրված ակնարկի կազմում, նախագծի արդյունքների վերաբերյալ հաշվետվություն և այլն):

Ուսումնական տարվա վերջում սովորողները ցուցադրում են (կարող են կազմակերպել շնորհանդես) իրենց թղթապանակների բովանդակությունը դասղեկի ժամին կամ ծնողական ժողովի, 4-րդ դասարանի ավարտին կազմակերպած տոնական միջոցառման ընթացքում:

Շնորհանդեսը կարող են ներկայացնել ինչպես անհատապես, այնպես էլ խմբով՝ հետևյալ կերպ.

- համառոտ բանավոր մեկնաբանությամբ, որը պետք է արտացոլի սեփական մտքերն ինչպես ներկայացվող նյութերի, այնպես էլ իր գործունեության արդյունքների վերաբերյալ,
- պաստառների, պատի թերթերի, ինքնաշեն գրքերի և այլնի գործածմամբ, որոնք արտացոլում են նրա ձեռքբերումները, զարգացման և ուսումնառության աճը և ուղեկցվում են համապատասխան մեկնաբանությամբ,
- իր դպրոցական կյանքից վերցրած մի որևէ դերային խաղով, որն արտացոլում է իր իրական առաջընթացը:

Թղթապանակի շնորհանդեսի գնահատումը սովորաբար կատարվում է սանդղակների միջոցով: «Սանդղակը գնահատման հնար է, ձև, որը համադրում է սովորողների ըմբռնման որակը, հմտության աստիճանների տարբերակման չափանիշները և առաջադրանքի կատարման որակը»²: Սանդղակում կարող են տեղ գտնել հետևյալ ցուցանիշները.

2. Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Ա. Արնաուդյան, Ա. Գյուլբուդաղյան, Ս. Խաչատրյան, Ս. Խրիմյան, Մ. Պետրոսյան, Երևան, 2004, Կրթության ազգային ինստիտուտի հրատարակչություն:

- ✓ ներկայացվող նյութի նպատակների որոշում,
- ✓ ձեռքբերումների համառոտ և բովանդակալից ներկայացում,
- ✓ ներկայացման ինքնուրույնությունը,
- ✓ աշակերտի սեփական դիրքորոշման արտացոլում (ինքնավերլուծություն և ինքնագնահատում),
- ✓ կատարված դատողությունների տրամաբանվածությունը և խոսքի մշակույթը,
- ✓ թղթապանակի գեղագիտական ձևավորումը:

Թղթապանակն ինքնագնահատվում է հետևյալ կերպ. յուրաքանչյուր աշխատանքից հետո աշակերտը գրում է փոքրիկ անդրադարձ, թե ինչու է այդ աշխատանքը կարևոր, և ինչու է այն տեղադրել թղթապանակի մեջ: Այն զարգացնում է աշակերտի՝ անդրադարձ, ինքնա- և փոխստուգում կատարելու կարողությունները (քանի որ աշակերտները կարող են փոխստուգում կատարել՝ որոշակի չափանիշներին համապատասխան):

Սանդղակի միջոցով թղթապանակը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ մանկավարժական սկզբունքները.

1. Աշակերտի առաջադիմության աճի հետևումը և գնահատումն իրականացվում է ուսուցչի, հենց իր՝ աշակերտի և ծնողի կողմից:
2. Անհրաժեշտ է գնահատել ոչ միայն աշակերտի ուսումնական ձեռքբերումները (գիտելիք, կարողություն և հմտություն), այլև խնդիրների լուծման նկատմամբ գործիմացական մոտեցումը:
3. Դպրոցական կյանքի բոլոր ոլորտներում աշակերտի ստեղծագործական մտածողության դրսևորումները պետք է գնահատվեն այնպես, ինչպես գիտելիքի գնահատումը: Անհրաժեշտ է, որ ստեղծագործական դրսևորումների գնահատականը տան և՛ ուսուցիչը, և՛ տարբեր դասարանների աշակերտները, և՛ ծնողները: Դրանք կարող են լինել ցուցահանդեսներ, մասնակցություն մրցույթներին և այլն: Կարևոր է, որ ստեղծագործաբար մոտեցմանը զուգահեռ գնահատվեն նաև մտավոր, սոցիալական և նախաձեռնողական դրսևորումները. խելացի հարցերը, լրացուցիչ

ուսումնական նյութերի որոնումը, հետաքրքիր մտահղացումները, փորձերը:

4. Չի կարելի գնահատել աշակերտի անձնական որակները (աշխատանքի տեմպը, հիշողության, ընկալման, ուշադրության մակարդակը): Գնահատվում է կատարված աշխատանքը, ոչ թե այն կատարողը:

Որպեսզի ծնողներն էլ ժամանակ առ ժամանակ ծանոթանան թղթապանակի բովանդակությանը, կարելի է թղթապանակն ուղարկել տուն և առաջարկել նրանց կիսվել իրենց տպավորություններով, արտահայտել իրենց կարծիքը: Կարելի է առաջարկել հարցաթերթիկներ, որոնք ուղղված են ծնողներին՝ հետևյալ հարցերով.

- Ի՞նչ տպավորություն ստացաք թղթապանակից:
- Ի՞նչը ձեզ զարմացրեց աշակերտի կատարած մեկնաբանությունների մեջ:
- Ի՞նչը ձեր մեջ հպարտության զգացում առաջացրեց:
- Ի՞նչ կարող եք անել, որպեսզի օգնեք աշակերտին հետագայում:
- Որքանո՞վ են կոկիկ և տրամաբանական հաջորդականությամբ կազմված թղթապանակի նյութերը:
- Որքանո՞վ է աշակերտն ինքնուրույն ստեղծել իր թղթապանակը:
- Որքա՞ն հաճախակի է նա խորհրդակցել ձեզ հետ:
- Ի՞նչ լրացուցիչ նյութեր, տեխնոլոգիաներ է նա կիրառել իր թղթապանակը ձևավորելիս:

5.9. ՈՐՈՂՔ ԵՆ ԹՂԹԱՊԱՆԱԿԻ ԻԲԲԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՔԵՐՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես նշվեց, կրթական գործընթացում թղթապանակը գործածվում է որպես սովորողների ձեռքբերումների արձանագրման միջոց, սովորողների կրթական գործունեության ապացույց, անհրաժեշտ տեղեկա-

տվության հավաքածու: Այլ խոսքով՝ այն գործադրելի է իբրև ուսուցանող գնահատման միջոց:

Թղթապանակի՝ որպես չափորոշչային պահանջներին համապատասխան սովորողների ձեռքբերումների գնահատման միջոցի կիրառման առավելություններն են՝

- շեշտադրվում են չափորոշչային հիմնական պահանջի՝ համապիտանի ուսումնական գործողությունների ընթացիկ վերահսկողությունը և ստուգումը,
- հաշվի են առնվում սովորողների քննադատական մտածողության առանձնահատկությունները երեք մակարդակով՝ խնդրահարույց իրավիճակ–իմաստավորում–անդրադարձ,
- հնարավորություն է ընձեռվում օգնելու սովորողներին որոշելու ուսումնառության նպատակները, իրականացնելու տեղեկատվության ակտիվ յուրացումը և խորհելու այն մասին, թե ինչ իմացան իրենք,
- այն ժամանակակից մանկավարժական գործիք է, որի միջոցով չափվում են սովորողների ձեռքբերումները, որոնք ուղղված են կրթական որակի կատարելագործմանը,
- հնարավորություն է ընձեռվում գնահատելիս հաշվի առնելու կրտսեր դպրոցականների համապիտանի ուսումնական կարողությունների զարգացման տարիքային առանձնահատկությունները,
- ենթադրվում է աշակերտների և նրանց ծնողների ակտիվ ներգրավումը գնահատման գործունեության մեջ:

**5.10. ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՆ ՈՒ ԾՆՈՂՆԵՐԸ
ԹՂԹԱՊԱՆԱԿԻ ՃԻՇՏ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ**

Ուսուցիչը՝

- խորհրդատուն և օգնականն է, որի գործունեության հիմքում ընկած է համագործակցությունը,

- ուղղորդում է գործունեությունը հետևյալ ուղղություններով. կազմակերպում է ցուցահանդեսներ, սովորողներին տեղեկացնում է տարբեր տեսակի և մակարդակի մրցույթների մասին,
- նպաստում է սովորողների ներգրավմանը տարբեր տիպի գործունեության մեջ,
- նպաստում է դասարանում թղթապանակի պահպանմանը,
- հետևում է սովորողների անհատական գործունեությանը,
- պատասխանատու է թղթապանակի գնահատման գործընթացի համար՝ ժամանակակից մեթոդներով, 4–րդ դասարանում կազմակերպում է սովորողների ձեռքբերումների շնորհանդեսը, սովորողների և ծնողների հետ մշակում է թղթապանակի գնահատման չափանիշները,
- հաստատում է աշակերտների ուսումնական ձեռքբերումների հավաստիությունը (արձանագրում է համապատասխան փաստաթղթերում):

Ծնողները՝

- օգնում են իրենց երեխաներին հավաքելու թղթապանակի նյութերը,
- նյութերի հավաքման ընթացքում, որքան հնարավոր է, ուշադրություն են դարձնում ինչպես երեխայի հաջողությունների, անպես էլ թերությունների, խնդիրների կամ անհաջողությունների վրա, օգնում են վերացնելու դրանք,
- քննարկում են իրենց երեխաների ձեռքբերումները, խրախուսում նրանց ջանքերը, նույնիսկ այն դեպքում, երբ դրանք դեռ այդքան էլ տեսանելի չեն,
- ուշադրության են արժանացնում երեխաների առաջընթացը որևէ աշխատանքում և ուղղորդում նրա հետագա գործունեությունն այդ աշխատանքում,
- անընդհատ կապ են պահպանում ուսուցչի հետ,

- հետաքրքրվում են թեմատիկ գրավոր աշխատանքների և կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքների արդյունքներով:

Այս երաշխավորությունների մասին ծնողներին պետք է տեղեկացնել ծնողական ժողովների ընթացքում:

5.11. ԱՐԴՅՈՒՔ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՆԿԱՏՎԵԼ ԵՆ ՍԽԱԼՆԵՐ ԿԱՄ ՎՐԻՊՈՒՄՆԵՐ ԹՂԹԱՊԱՆԱԿԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Սխալ 1: Խախտվում է թղթապանակի ձևավորման և նյութերի հավաքման «կամավորության» սկզբունքը, և մանկավարժները փորձում են ընդգրկել նյութեր՝ առանց հաշվի առնելու երեխաների կարծիքը: Մեծահասակները հիմնվում են միայն իրենց կարծիքի վրա և մտածում են, որ երեխայից ավելի լավ գիտեն, թե ինչն է անհրաժեշտ ընդգրկել թղթապանակում: Խորհուրդ ենք տալիս ուղղորդվել միայն «կամավորության սկզբունքով» (ամենից առաջ հաշվի առնել երեխայի կարծիքը): Երբեք չի կարելի պարտադրել երեխային թղթապանակում նյութեր տեղադրել:

Սխալ 2: Թղթապանակի նյութերը երեխայի փոխարեն հավաքում են մեծահասակները: Այս դեպքում թղթապանակի նյութերի հավաքման աշխատանքով զբաղվում է ոչ թե ինքը՝ աշակերտը, այլ նրա «հրահանգներով» կամ նույնիսկ «պահանջով» ծնողները կամ այլ բարեկամները: Դպրոցականը ցանկանում է, որ իր թղթապանակը լավը լինի, բայց «ժամանակ չունի» դրանով զբաղվելու: Դա բացատրվում է նրանով, որ առաջին հերթին՝ շատ աշակերտներ, ցավոք, չունեն ինքնավերլուծական և համակարգման տարրական կարողություններ, և, երկրորդ հերթին՝ վախենում են, որ այնպես չեն կարող ձևավորել թղթապանակը, ինչպես անհրաժեշտ է: Խորհուրդ է տրվում նյութերի հավաքման և ձևավորման ընթացքում աշակցություն ցուցաբերել դպրոցականին, բայց երբևիցե նրա փոխարեն չանել ոչինչ: Աշակերտն ինքը պետք է ջանք չխնայի այդ գործում, որովհետև կարևոր է ոչ միայն վերջնական արդյունքը, այլև իր ձեռքբերումների իմաստավորման գործընթացը: Թղթապանակը ձևավորելիս պետք է պահպանել «ոսկե միջինը» սկզբունքը. չի կարելի աշակերտին զրկել ինքնուրույն նյութեր ընտրելուց, բայց նաև չի կարելի թող-

նել նրան առանց անհրաժեշտ հոգեբանական և գործնական աջակցության:

Սխալ 3: Լրացուցիչ կրթության համակարգի, հասարակական այլ կազմակերպությունների հնարավորությունների բացառում: Մանկավարժները, ծնողները և իրենք՝ աշակերտները, հաշվի չեն առնում լրացուցիչ մասնագիտական կրթության հաստատությունների իրական հնարավորությունները: Այդ հաստատությունները ևս իրավունք ունեն հանձնելու տարբեր դիպլոմներ, կարծիքներ և երաշխավորություններ, որոնք ևս կարող են ընդգրկվել թղթապանակի մեջ: Խորհուրդ ենք տալիս թղթապանակը ձևավորելիս հաճախակի դիմել այդ հաստատություններին. դա հնարավորություն կտա դուրս գալու դպրոցում կազմակերպված օլիմպիադաների, մրցույթների և վիկտորինաների սահմաններից, որոնց մասնակցում են ոչ բոլոր աշակերտները, նույնիսկ եթե հատուկ հետաքրքրություն ունեն տվյալ առարկայի նկատմամբ:

Սխալ 4: Թղթապանակի նյութերի հավաքման գործընթացը կրում է ձևական բնույթ: Ծնողներն ու երեխաները կարող են ներքաշվել յուրօրինակ մրցման մեջ՝ առավելագույն քանակով նյութեր ընտրելով թղթապանակի համար, դրանով իսկ այն դարձնելով ձևական: Բայց չէ՞ որ թղթապանակի ձևավորման իմաստը նյութեր «հավաքելու» կարողությունների ցուցադրումը չէ: Խորհուրդ է տրվում չհրապուրվել մեծ քանակով նյութեր ընտրելով, առավել ևս չմրցել համադասարանցիների հետ, չէ՞ որ կարևորը ոչ թե քանակն է, այլ՝ որակը:

Սխալ 5: Թղթապանակի մեջ տեղադրում են միայն հատուկ փաստաթղթեր: Տեղեկատվության հավաքման ընթացքում հաճախ հեղինակակազմողները նախընտրում են միայն դիպլոմները, վկայականները, շնորհակալագրերը և այլն, որոնք տրվում են կրթական հաստատությունների կողմից: Խորհուրդ է տրվում հաշվի առնել, որ այս գործընթացում կարևորը դպրոցականներին իրենց հնարավորությունների և ձեռքբերումների ցուցադրումն է տարբեր կողմերից: Բացի դրանից՝ ոչ բոլոր դպրոցականներն իրական հնարավորություն ունեն ստանալու դիպլոմ, շնորհակալագիր և այլն: Հետևաբար, թղթապանակի մեջ պետք է ներառել այնպիսի նյութեր, որոնք ներկայացնում են աշակերտների ձեռքբերումները:

Սխալ 6: Նյութերը հավաքվում են միայն որոշակի ժամանակահատվածում (1–ին դասարան, տարրական դասարաններ, 9–րդ դասարան):

Խորհուրդ է տրվում չսահմանափակվել միայն այդ ժամանակահատվածով:

Սխալ 7: Առավելություն են տալիս թղթապանակի արտաքին ձևավորմանը: Որոշ մանկավարժներ և ծնողներ թղթապանակի արտաքին ձևավորման առումով ներկայացնում են բարձր պահանջներ: Խորհուրդ է տրվում չհրապուրվել նյութերի արտաքին ձևավորմամբ: Կարևորը բովանդակությունն է և ոչ արտաքին գեղեցկությունը:

5.12. ԸՆԴՈՒՆԵԼԻ՞՞Ց ԵՆ ԱՐԴՅՈՒՔ ԹՂԹԱՊԱՆԱԿԻ

ՇՆՈՐՀԱՆԴԵՍՆԵՐԸ: ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐԵԼԻ Է ԴՐԱՆՔ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ

Ուսուցիչը սովորողների և ծնողների հետ ուսումնական տարվա սկզբից որոշում է շնորհանդեսների կազմակերպման հաճախականությունը և ձևը. դրանք կարող են լինել ցուցահանդեսի, ժողովի, հարցազրույցի, կլոր սեղանի և այլ ձևով: Թվարկված յուրաքանչյուր ձև ունի իր առանձնահատկությունը, և ուսուցիչն անհատապես կազմակերպում է թղթապանակի նախապատրաստական և կազմակերպման գործընթացը: Չնայած դրանց տարբերությանը՝ շնորհանդեսի կազմակերպման համար պարտադիր է պահպանել մի քանի պայմաններ: Դրանք են՝

1. Նախապես մշակել թղթապանակի և դրա շնորհանդեսի գնահատման չափանիշները:
2. Որոշել հրավիրված անձանց կազմը: Թղթապանակի շնորհանդեսը կարող է անցկացվել դասարանական կոլեկտիվի ներսում առանց հրավերների (օրինակ՝ ընթացքում), կարելի է հրավիրել ծնողներին, ովքեր ելույթ են ունենում որպես փորձագետ (կիսամյակի կամ ուսումնական տարվա վերջում), իսկ 4–րդ դասարանի ավարտին ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են մանկավարժներ, ծնողներ, որոնք ներկայացնում

են տարրական դասարանների շրջանավարտի ամփոփիչ գնահատականը:

3. Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում թղթապանակի շնորհանդեսը կարող է անցկացվել կամավոր սկզբունքով, իսկ տարվա վերջում պետք է մասնակցեն բոլոր աշակերտները:
4. Շնորհանդեսին աշակերտը ներկայանում է համառոտ բանավոր մեկնաբանություններով, որոնք պետք է արտահայտեն նրա սեփական մտքերը ներկայացվող աշխատանքների վերաբերյալ:
5. Ելույթի ժամանակահատվածը որոշվում է նախապես, որն էլ շնորհանդեսի գնահատման չափանիշներից մեկն է:

ԲՈՎԱՆՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Թեմա 1. Ժամանակակից ԴԱՍ 5

1.1. Ի՞նչ է ժամանակակից ԴԱՍԸ, ե՛վ ո՞րն է նորո՞ւթե՞րը 5

1.2. ՀԱՃԱԽ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԱՍԸ ԲՆՈՒԹԱԳՐՎՈՒՄ Է ԻԲՐԵՎ
ՉԱՓՈՐՈՇՉԱՇԵՆ: Ի՞նչ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ
ԿԱՐԵԼԻ Է ՈՐՈՇԵԼ ԴԱՍԻ ՉԱՓՈՐՈՇՉԱՇԵՆ ԼԻՆԵԼԸ 8

1.3. Ի՞նչ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՈՎ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՈՐՈՇԵԼ, ԹԵ ՈՐՔԱՆՈՎ Է
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՉԱՓՈՐՈՇՉԱՇԵՆ ԴԱՍԸ 10

1.4. Ի՞նչ է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԵՋ՝ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՍ, ԻՄԱՆԱԼ
ԱՇԱԿԵՐՏԱԿԵՆՏՐՈՆ ԴԱՍԻ ՄԱՍԻՆ 12

1.5. ԻՆՉՊԵՊ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՎԵԼ ՉԱՓՈՐՈՇՉԱՇԵՆ ԴԱՍԻՆ 13

1.6. ԻՆՉՈ՞Ւ ԴԱՍԱՊԼԱՆՈՒՄ ԳՐԱՆՅԵԼ ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ,
ԵԹԵ ԱՅՆ ՊԱՐՋ ԵՆԹԱԴՐՎՈՒՄ Է
ԴԱՍԻ ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԻՑ 16

1.7. ԻՆՉՊԵՊ ՁԵՎԱԿԵՐՊԵԼ ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ 17

1.8. ՊԱՐՏԱԴԻՐ Է ԱՐԴՅՈՔ ՕՐՎԱ ՊԼԱՆԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ 21

1.9. ՏԱՐԲԵՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ
ԿԱՄ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ՕՐՎԱ ՊԼԱՆԻ ՏԱՐԲԵՐ ՁԵՎԵՐ:
Ի ՎԵՐՋՈ, Ի՞նչ ԿԱՌՈՒՅՎԱԾՔ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ ՕՐՎԱ ՊԼԱՆԸ 23

1.10. ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԿԱ՛ ԱՐԴՅՈՔ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԴԱՍԵՐԻ ՏԻՊԵՐԻ ՈՒ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ՄԻՋԵՎ 24

1.11. Ի՞նչ ԱՆԵԼ, ՈՐՊԵՍՋԻ ԴԱՍԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՋԻՆԻ ՈՉ
ՄԻԱՅՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՎ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ, ԱՅԼԵՎ
ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՅՆԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԵՋ 25

1.12. ԴԱՍԵՐԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԻՆՉՊԵՊ ԱՆՅԿԱՅՆԵԼ
ՖԻԶԿՈՒԼՏՐՈՊԵՆԵՐՆ ՈՒ ՖԻԶԿՈՒԼՏԴԱԴԱՐՆԵՐԸ 28

| | | |
|-------|---|----|
| 1.13. | ԱՆՇՈՒՇՏ, ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԴԱՍԻՑ ՀԵՏՈ ԲՈԼՈՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՆ ԷԼ ԽՈՐՀՈՒՄ ԵՆ ԴԱՍԻ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ: ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ Է ԴԱՍԸ ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ՁԵՎՈՎ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՄԱՆ ԵՆԹԱՐԿԵԼ | 33 |
|-------|---|----|

ԹԵՄԱ 2. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ
ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ 35

| | | |
|------|--|----|
| 2.1. | ԻՆՉ ԲՆՈՒՑԹԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՐԵԼԻ Է ԱՌԱՋԱԴՐԵԼ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ՝ ՏԵՔՍՏԻ ԼԻԱՐԺԵՔ ՅՈՒՐԱՅՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ..... | 35 |
|------|--|----|

ԹԵՄԱ 2. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ..... 35

| | | |
|------|---|----|
| 2.2. | ՈՎ ՊԵՏՔ Է ՄԵԿՆԱԲԱՆԻ ՏԵՔՍՏԸ՝ ԱՇԽԱԿԵՐՏՆԵՐԸ, ԹԵ՛ ՈՒՍՈՒՑԻՉԸ, ԵՎ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԴԱ ԿԱՏԱՐԵԼ | 46 |
|------|---|----|

| | | |
|------|--|----|
| 2.3. | ՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՃԱԽ ԵՆՔ ՀԱՆԴԻՊՈՒՄ «ԶՐՈՒՅՑ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏ» ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆԸ: ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԴԱ, ԵՎ ԻՆՉՊԵՍ ՍՈՎՈՐԵՑՆԵԼ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՆՑԿԱՑՆԵԼ ԱՅԴ ԶՐՈՒՅՑԸ | 49 |
|------|--|----|

| | | |
|------|---|----|
| 2.4. | ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ ԲԱՐԴ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԸՆԴԴՐԿՎԱԾ: ՆՈՒՅՆԻՍԿ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ԾՆՈՂՆԵՐԻ ՄԻ ՄԱՍԸ ՉԻ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ԴՐԱՆՔ..... | 52 |
|------|---|----|

| | | |
|------|--|----|
| 2.5. | ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ՔԻՉ ԸՆԴԴՐԿՎԱԾ ԴԱՍԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԵՎ ԻՆՉ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ Է ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՄԵԾ ՏԵՂ ՀԱՏԿԱՅՎԱԾ ԱՐՏԱՍՀՄԱՆՅԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ..... | 53 |
|------|--|----|

| | | |
|------|--|----|
| 2.6. | ԳԱՂՏՆԻՔ ՉԷ, ՈՐ ԱՅՍՈՐ ԵՐԵԽԱՆԵՐԸ ՔԻՉ ԵՆ ԸՆԹԵՐՅՈՒՄ: Ո՞ՐՆ Է ԴՐԱ ՊԱՏՃԱՌԸ | 54 |
|------|--|----|

| | | |
|------|--|----|
| 2.7. | ԻՆՉՊԵՍ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԵՋ ՍԵՐՄԱՆԵԼ ԸՆԹԵՐՅԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ | 56 |
|------|--|----|

ԹԵՄԱ 3. ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ.....63

- 3.1. Ինձո՞ր է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՏԱՐԻԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ63
- 3.2. ԱՄԵՆ ԱՆԳԱՄ՝ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԻՍ,
ՀԻԱՍԹԱՓՎՈՒՄ ԵՄ, ՔԱՆԻ ՈՐ ՊԱՐԶՎՈՒՄ Է՝ ՈՉ ԲՈԼՈՐՆ ԵՆ
ՀԱՍԿԱՅԵԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԸ. ԽՄԲԵՐՆ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ
ԴԱՆԴԱՂ և ԱՂՄԿՈՏ, ՀԱՃԱԽ ՆԱԽ ՎԻՃԱԲԱՆԵԼՈՎ:
ԻՆՉՊԵ՞Ս ՊԵՏՔ Է ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ,
ՈՐՊԵՍՁԻ ԱՅՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԼԻՆԻ, ԵՎ ՀԱԶՈՂՎԻ
ԽՈՒՍԱՓԵԼ ՆՇՎԱԾ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ65
- 3.3. ԻՆՉՊԻՍԻ՞ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՊԵՏՔ Է ԸՆՏՐԵԼ
ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ, ՈՐՊԵՍՁԻ ԽՄԲԻ
ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԿԱՐՈՂԱՆԱՆ
ՀԱՎԱՍԱՐԱՊԵՍ ՄԱՍՆԱԿՅԵԼ ԴՐԱՆ69
- 3.4. Ի՞նչ ԿԱՐԵԼԻ Է ԱՆԵԼ, ԵՐԲ ԵՐԵԽԱՆ
ՉԻ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԱՇԽԱՏԵԼ ԽՄԲՈՒՄ70
- 3.5. Ի՞նչ ԱՆԵԼ, ԵԹԵ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԿԱ ԱՇԽԱՅԵՐՏ,
ՈՒՄ ՀԵՏ ՈՉ ՈՔ ՉԻ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԱՇԽԱՏԵԼ ՆՈՒՅՆ ԽՄԲՈՒՄ71
- 3.6. Ի՞նչ ԱՆԵԼ, ԵԹԵ ԿԱՆ ԱՇԽԱՅԵՐՏՆԵՐ,
ՈՐՈՒՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԻՇՏ ԱՌԱՋԱՏԱՐԻ ԴԵՐ ՍՏԱՆՁՆԵԼ.....72
- 3.7. ՃԻ՞ՇՏ Է ԱՐԴՅՈՒՔ, ՈՐ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՍԿՍԵԼ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻՑ,
ՔԱՆԻ ՈՐ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՅԻՆԵՐԸ ԽՄԲՈՒՄ ԱՇԽԱՏԵԼՈՒ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԵՌՎՎՍ ՉՈՒՆԵՆ73
- 3.8. ՀԱՃԱԽ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ
ԱՄՓՈՓԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐՆ ՍԿՍՈՒՄ ԵՆ
ՄԻՄՅԱՆՑ ՄԵՂԱԴԻԵԼ ՑԱԾՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ:
ԻՆՉՊԵ՞Ս ՎԱՐՎԵԼ, ՈՐՊԵՍՁԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՈՒ
ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԵՆ ԲՈԼՈՐԸ 74
- 3.9. Ի՞նչ ՊԵՏՔ Է ԱՆԻ ՈՒՍՈՒՑԻՉԸ ԽՄԲԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ 75

ԹԵՄԱ 4. ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ77

4.1. ՊԱՐՏԱԴԻՐ ԵՆ ԱՐԴՅՈՔ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.
ՉԷ՞ ՈՐ ԱՆԸՆԴՀԱՏ ԽՈՍՎՈՒՄ Է ԵՐԵԽԱՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.....77

4.2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԻՆՉ ՆՊԱՏԱԿՆԵՐ
ԿԱՐԵԼԻ Է ԻՐԱԿԱՆԱՅՆԵԼ
ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ.....78

ԹԵՄԱ 4. ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ.....79

4.3. ԿԱՆ ԱՐԴՅՈՔ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ
ՆԵՐԿԱՅՄԱՅՎՈՂ ՈՐՈՇԱԿԻ ՊԱՀԱՆՋՆԵՐ79

4.4. ՀՆԱՐԱՎՈՐ Է ԱՐԴՅՈՔ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ
ՆԱԽՕՐՈՔ ՊԼԱՆԱՎՈՐԵԼ. ՉԷ՞ ՈՐ ԴԱՍԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ Է
ՊԱՐՋ ԴԱՌՆՈՒՄ ԴՐԱ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ,
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԾԱՎԱԼԸ.....81

4.5. ԻՆՉ ՄՏԱՀՈԳՈՒՄ Է ԱՅՆ ՀԱՐՅԸ, ՈՐ ՀԱՃԱԽ
ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՆ
ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ, ԿԱՐԾԵՍ ԻՄԻՋԻԱՅԼՈՑ:
ԲՈԼՈՐԻ ՄՈ՛Տ Է ԱՅԴՊԵՍ, ԹԵ՛ ԵՍ ՊԱՏՃԱՌԸ ՊԻՏԻ
ՓՆՏՐԵՄ ԻՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵՋ.....82

4.6. ԻՆՉՊԵ՛Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՕԳՆԵԼ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՄ՝ ՃԻՇՏ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ83

4.7. 2-4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՄԱՅՐԵՆԻԻՑ ԻՆՉՊԻՍԻ՛ ՏՆԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ Է ՅԱՆԿԱԼԻ ՀԱՆՋՆԱՐԱՐԵԼ84

4.8. ԻՆՉ ԲՆՈՒՅԹԻ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՆ
ԳՈՐԾԱԴՐԵԼԻ 2-4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ.....86

4.9. ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏՈՒԳՄԱՆ
ՊԱՀԱՆՋԸ ՄԻՇՏ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԻՔ Է
ՏԱԼԻՄ՝ ՈՒՍՈՒՅՉԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՍՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱԲ:
ԱՐԴՅՈՔ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՆ ՏՆԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՁԵՎԵՐ,
ՈՐՈՆՔ ԿԽՆԱՅԵՆ ՆԱԵՎ ՈՒՍՈՒՅՉԻ ԺԱՄԱՆԱԿԸ88

ԹԵՄԱ 5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԹՂԹԱՊԱՆԱԿ.....91

- 5.1. «ԹՂԹԱՊԱՆԱԿ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՁԵՐՍ Է ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼ ԴՊՐՈՑ, ՈՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՈՐՈՇԱԿԻ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՆՔ ՀԱՆԴԻՊՈՒՄ:
ԻՆՉ Է ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԹՂԹԱՊԱՆԱԿԸ, ԵՎ ԻՆՉՈ՞Ւ Է ԱՅՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾԱԾԵԼ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ 91
- 5.2. ԻՆՉ ՆՊԱՏԱԿՈՎ Է ԳՈՐԾԱԾՎՈՒՄ ԹՂԹԱՊԱՆԱԿԸ92
- 5.3. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՉ ԽՆԴԻՐՆԵՐ Է ԼՈՒԾՈՒՄ ԹՂԹԱՊԱՆԱԿԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ 93
- 5.4. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՆՉ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ԹՂԹԱՊԱՆԱԿԸ..... 94
- 5.5. ԻՆՉՊԵ՞Ս ՊԵՏՔ Է ԳՈՐԾԱԾԵԼ ԹՂԹԱՊԱՆԱԿԸ 95
- 5.6. Ո՞Ր ԴԱՍԱՐԱՆՑ ՍԿՍԱԾ ԿԱՐԵԼԻ Է ԹՂԹԱՊԱՆԱԿ ԳՈՐԾԱԾԵԼ..... 97
- 5.7. ԻՆՉ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏԻ ԹՂԹԱՊԱՆԱԿԸ 99
- 5.8. ԻՆՉՈ՞Վ Է ԿԱՐԵՎՈՐՎՈՒՄ ԹՂԹԱՊԱՆԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԱՅՆ..... 107
- 5.9. ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԹՂԹԱՊԱՆԱԿԻ ԻՔՐԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 110
- 5.10. ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՆ ՈՒ ԾՆՈՂՆԵՐԸ ԹՂԹԱՊԱՆԱԿԻ ՃԻՇՏ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ 111
- 5.11. ԱՐԴՅՈ՞Ք ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՆԿԱՏՎԵԼ ԵՆ ՍԽԱՆԼԵՐ ԿԱՄ ՎՐԻՊՈՒՄՆԵՐ ԹՂԹԱՊԱՆԱԿԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ 113
- 5.12. ԸՆԴՈՒՆԵԼԻ՞Ք ԵՆ ԱՐԴՅՈՔ ԹՂԹԱՊԱՆԱԿԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍՆԵՐԸ: ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐԵԼԻ Է ԴՐԱՆՔ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ 115

ԿԱՐԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ
ԿԱՐԻՆԵ ՉԻՖՈՒԽՉՅԱՆ

50

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

ՏԱՐԲԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՄԱՍ 1

| | |
|-------------------------|------------------|
| Հրատարակչության տնօրեն՝ | Էմին Մկրտչյան |
| Գեղարվեստական խմբագիր՝ | Արա Բաղդասարյան |
| Շապիկը և էջադրումը՝ | Գագիկ Սարոյանի |
| Սրբագրիչ՝ | Գոհար Կիրակոսյան |

Օգտագործված տառատեսակները՝ GHEA Mashtots, GHEA Koryun



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28, հեռապատճեն՝ (+37410) 23 25 95
Էլ. փոստ՝ info@zangak.am,
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am